

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ
ԱԿԱՆԱԿՈՐ ԴԵՄՔԵՐԸ**

**YEREVAN STATE
UNIVERSITY
NOTABLE SCHOLARS AND
PROMINENT FIGURES**



100

**YSU PRESS
2020**

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ա 619

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎԵԼ Է ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՖՈՆԴԻ,
ԱՄՆ ԲԷՆԵԿՏԻԿՈՒՏ ՆԱՀԱՆԳԻ ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՀԱՅՑ,
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՒ ԱՄՆ ՏԵԽՍԱՍ ՆԱՀԱՆԳԻ ՍՈՒՐԲ ԳԵՒՈՐԳ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹԵԱՄԲ:
ԳԻՐՔԸ ՆՎԻՐՎԱԾ Է ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 100-ԱՄԵԱԿԻՆ:

*THE BOOK IS PUBLISHED WITH THE SUPPORT OF THE FUND
FOR ARMENIAN RELIEF, THE ARMENIAN CHURCH OF THE HOLY
ASCENSION COMMUNITY OF TRUMBULL, CT AND ST. KEVORK
ARMENIAN CHURCH OF HOUSTON, TX.
THE BOOK IS DEDICATED TO THE 100TH ANNIVERSARY OF
FOUNDATION OF YEREVAN STATE UNIVERSITY.*

Կազմեց՝ քան. գիտ. թեկնածու Կարեն Գրիգորյան

Compiled by Candidate of Philological Sciences Karen Grigoryan

Ա 619 Երևանի պետական համալսարանի անվանի գիտնականներն ու ականավոր դեմքերը/Կազմ.՝ Կ. Գրիգորյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2020, 130 էջ:

Yerevan State University Notable Scholars and Prominent Figures/Compiled by K. Grigoryan. Yerevan, YSU Press, 2020, p. 130.

Գրքում ներկայացված է ԵՊՀ հիմնադրման և կայացման գործում մեծ ներդրում ունեցած անվանի գիտնականների ու ականավոր դեմքերի մասին տեղեկատվություն:

The book presents information about notable scholars and prominent figures who have made a great contribution to the establishment of YSU.

ISBN 978-5-8084-2446-3

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

© ԵՊՀ հրատ., 2020
© Գրիգորյան Կ. (Կազմող), 2020

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ

Սրտի անհուն գոհունակութեամբ մեր երկու համայնքները՝ Թրամպլի Ս. Համբարձում Հայց. Եկեղեցւոյ եւ Հիւսթոնի Ս. Գեորգ Հայց. Եկեղեցւոյ կը հովանաւորեն հրատարակումը սոյն բացառիկ երկլեզուանի գիրքին Հայ Օգնութեան Ֆոնտին հետ: Մեր փափաքն է, որ աւելի շատ անձեր կարողանան առիթը ունենալ ծանօթանալու այս անուանի գիտնական մարդոց, որոնց մէկ մասին կիսանդրիները զետեղուած են Երեւանի պետական համալսարանի մուտքին: Մենք կը նուիրենք սոյն հրատարակութիւնը երջանկայիշատակ Կաթողիկոս Գարեգին Յովսէփեանցին, որը դասախօսած է Երեւանի պետական համալսարանին մէջ 1919 թ. եւ Առաջնորդը եղած է Հայաստանեայց Եկեղեցւոյ Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին 1938-1943 տարիներուն: Մենք կը խոնարհինք այս դասախօս, գիտնական հեղինակներուն առջեւ, որոնք խոպան մտքերը մշակեցին սերունդներու եւ համալսարանին անունը բարձրացուցին: Մենք մեր շնորհակալութիւնը կը յայտնենք ԵՊՀ տնօրէնութեանն ու վարչութեանը, ինչպէս նաեւ Հայ Օգնութեան Ֆոնտին իրենց ցուցաբերած օգնութեանը սոյն գիրքի հրատարակութեան համար: Շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ մեր երկու համայնքներու բոլոր նուիրատուներուն եւ բոլոր անոնց, որոնք աշխատեցան սոյն կարեւոր գրական գործի հրատարակութեան վրայ:

Աղօթարար՝

Ընծակ ա. քինյ. Նալպանտեան, Հովիւ
Ս. Համբարձում Հայց. Եկեղեցւոյ
Թրամպլի, Քըննէքիքէթ ԱՄՆ

Մարտիրոս Քինյ. Յակոբեան, Հովիւ
Ս. Գեորգ Հայց. Եկեղեցւոյ
Հիւսթոն, Թէքսաս ԱՄՆ

GREETING REMARKS

With great joy, our two parishes, the Armenian Church of the Holy Ascension in Trumbull, CT and St. Kevork Armenian Church in Houston, TX sponsor the publishing of this unique book together with Fund for Armenian Relief, in both Armenian and English. We want more people to have the opportunity to know these great men, some of whose busts are placed in the lobby of the Yerevan State University in Armenia. We dedicate the publication of this book to Catholicos Karekin Hovsepian, who taught at Yerevan State University (YSU) in 1919 and served as the Primate of our Eastern Diocese from 1938-1943. We bow down before these professors, scholars and authors who taught at YSU, illuminated the minds of generations and elevated the name of this institution. We thank the administration of YSU and Fund for Armenian Relief (FAR) for all their help and guidance to fulfill this project. We also thank from both our parishes, all the sponsors, who contributed financially towards the translation and publication of this book and all who worked on it.

Prayerfully,

Fr. Untzag Nalbandian, Pastor
Armenian Church of the Holy Ascension
Trumbull, CT USA

Fr. Martiros Hakobyan, Pastor
St. Kevork Armenian Church
Houston, TX USA



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. պատմական համառոտ ակնարկ

Աշխարհի շատ ժողովուրդների համար վաղնջական ժամանակաշրջան համարվող V դարը հայ ժողովրդի պատմության մեջ իրավամբ համարվում է մշակույթի ոսկեդար: Դեռևս IV դարի սկզբին քրիստոնեություն ընդունած հայ ժողովուրդն արդեն V դարի սկզբներին համաշխարհային քաղաքակրթության մեջ իր տեղն ամրագրեց ևս մեկ վավերագրով՝ հայոց գրերի գյուտով: Հայերեն այբուբենի ստեղծումից անմիջապես հետո հիմք դրվեց հայկական դպրոցի պատմությանը: 405-407 թթ. Վաղարշապատում և Ամարասում ստեղծվեցին առաջին դպրոցները: Այնուհետև դպրոցներ հիմնադրվեցին Հայաստանի տարբեր գավառներում, և դրանց թիվը գնալով ավելացավ:

Հայ մշակույթի ոսկեդարում ծնունդ առավ նաև թարգմանական արվեստը: Հայոց նորաստեղծ տառերով թարգմանված առաջին նախադասությունը (Սողոմոն Իմաստունի առակաց գրքի հանրահայտ միտքը)՝ «Ճանաչել գիմաստութիւն և գիտատ, իմանալ զբանս հանճարոյ», հետագա դարերի համար դարձավ մարգարեական: Հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտներն այնքան կատարյալ թարգմանեցին Աստվածաշունչը՝ Գրքերի գիրքը, որ դարեր անց ֆրանսիացի գիտնական Լա Կրոզն այն համարեց «Թագուհի թարգմանութեանց»: Հետագայում հայերեն թարգմանվեցին գրական և մշակութային արժեքավոր գանձեր, հնագույն փիլիսոփաների՝ Պլատոնի, Արիստոտելի և այլոց աշխատությունները:

IX դարի վերջին տասնամյակներին, երբ Բագրատունիները վերականգնեցին հայկական պետականությունը, իսկ XII դարում Կիլիկիայում հաստատվեց հայկական թագավորություն, հայ մշակույթը մինչև XV դարասկիզբ հզոր վերելք ապրեց: Նշված ժամանակահատվածում ուսումնակրթական գործն այնպիսի ծավալ ստացավ, որ մի շարք վայրերում հիմնվեցին գիտակրթական կարևոր կենտրոններ՝ «վարդապետարաններ»: Հայ մշակույթի ու դպրության նշանավոր կրթօջախներ բացվեցին Հաղպատում, Սանահինում, Անիում, Գետիկում, Կարսում, Կեչառիսում, Գլաձորում, Տաթևում, Կիլիկյան Հայաստանում: Այդ դպրոցներում դասավանդում էին միջնադարյան Հայաստանի գիտության, գրականության, արվեստի ու աստվածաբանության նշանավոր ներկայացուցիչներ: Գլաձորի և Տաթևի համալսարանների, Մեծոփա վանքի՝ բարձր տիպի դպրոցի շրջանավարտ-

YEREVAN STATE UNIVERSITY: the Brief Historical Review

The 5th century is considered to be the golden age of cultural development in the history of the Armenian people. The Armenian people, who proclaimed Christianity as a state religion in the beginning of the 4th century, came up with another achievement in the beginning of the 5th century. This glorious event was the invention of the Armenian alphabet. Immediately after the creation of the Armenian alphabet, the history of the Armenian school began. In 405–407 the first schools were established in Vagharshapat and Amaras. Later, schools were established in different provinces of Armenia, and their number gradually increased.

The art of translation was born in the golden age of the Armenian culture. The first sentence translated with the help of the Armenian letters (the famous idea of the proverbial book of Solomon the Wise) was “To know wisdom and instruction; to perceive the words of understanding”, became prophetic for centuries. Mesrop Mashtots, the creator of the Armenian alphabet, and his students translated the Bible, the Book of Books, so perfectly that centuries later, French scientist La Cruz described it as “Queen’s Translation.” Later, valuable literary and cultural treasures were translated into Armenian. The works of ancient philosophers such as Plato, Aristotle and others.

In the last decades of the 9th century, when the Bagratuni Dynasty restored the Armenian statehood, and in the 12th century an Armenian kingdom was founded in Cilicia, Armenian culture flourished until the beginning of the 15th century. During the mentioned period, the educational work gained such a volume that a number of important scientific-educational centers were established in a number of places. Notable schools of Armenian culture and education were opened in Haghpat, Sanahin, Ani, Getik, Kars, Kecharis, Gladzor, Tatev, and Cilician Armenia. Prominent representatives of science, literature, art and theology of medieval Armenia taught various branches of science at those schools. Graduates of Gladzor and Tatev universities and Metsopa Monastery High School defended dissertations and received scientific titles.

In the following centuries, due to the devastating Tatar-Mongol and then



ները հանդես էին գալիս գրավոր ատենախոսություններով, ստանում գիտական կոչումներ:

Հետագա դարերում թաթար-մոնղոլական և ապա թուրք-պարսկական ավերիչ արշավանքների ու ծանր լծի հետևանքով Հայաստանում գիտամշակութային կյանքն անկում ապրեց և կանգնեց վերացման վտանգի առջև: Սակայն պատմական ճակատագրի հարվածներն ի զորու չեղան կասեցնելու կրթության ու գիտության զարգացումը երկրում: Ավելին՝ 1512 թ. հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը Վենետիկում հիմնադրեց առաջին հայկական տպարանը, որտեղ 1512-1513 թթ. տպագրեց հինգ գիրք՝ պահպանելով դրանց ձեռագրերի տեսքն ու ոճը: XVI-XVII դարերում հայերեն գրքեր տպագրվեցին նաև Հռոմում, Փարիզում, Լվովում, Նոր Զուղայում, Ամստերդամում, Մարսելում, Չմյուռնիայում, Լայպցիգում, հետագայում՝ Հնդկաստանում, Անգլիայում, Սանկտ Պետերբուրգում, Աստրախանում, Մոսկվայում, Վիեննայում և այլուր: Քաղաքակրթության մեջ բացառիկ երևույթ էր, որ պետականության բացակայության պայմաններում ծաղկում էր հայ գրատպությունը: Հայաստանում առաջին հայկական տպագրատունը հիմնադրվեց 1771 թ. Վաղարշապատում՝ Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու անմիջական ղեկավարությամբ:

XIX դարում Արևելյան և Արևմտյան Հայաստաններում, ինչպես և հայաբնակ տարբեր վայրերում ստեղծվեցին բազմաթիվ կրթական կենտրոններ, որոնցից առավել նշանավոր էին Մոսկվայի Լազարյան (1815), Էջմիածնի Գևորգյան (1874) ճեմարանները, Վենետիկի Մուրատ-Ռափայելյան (1870), Կոստանդնուպոլսի Կեդրոնական (1886), Թիֆլիսի Ներսիսյան (1824), Երևանի Սբ Հռիփսիմեի օրիորդաց (1850) դպրոցները և այլն:

Մայր հայրենիքում հայկական համալսարան հիմնելու գաղափարը օրակարգային դարձավ հատկապես XIX դարի երկրորդ կեսից: Այդ գաղափարը կենսագործելու ուղղությամբ լուրջ քայլեր կատարեցին բազմաթիվ մտավորականներ ու հասարակական գործիչներ:

1919 թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդն ընդունեց օրենք՝ Հայաստանում համալսարան բացելու մասին, որով նախատեսվում էր համալսարանը հիմնել Երևանում չորս բաժիններով՝ պատմալեզվաբանական, տնտեսաիրավաբանական, բժշկական, ֆիզիկամաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումով: Նշված օրենքով նախատեսված էր համալսարանը բացել 1919-20 ճեմարանական տարում, և առաջին հերթին պետք է բացվեր պատմալեզվաբանական բաժինը:

the Turkish-Persian invasions and the brutal yoke, scientific and cultural life in Armenia declined and was in danger of extinction. However, the challenges of historical destiny did not stop the development of education and science in the country. Moreover, in 1512 the first Armenian printer, Hakob Meghapart, founded the first Armenian printing house in Venice, where in 1512–1513 he published five books, preserving the image and style of their manuscript. In the 16th and 17th centuries, Armenian books were also published in Rome, Paris, Lvov, New Julfa, Amsterdam, Marseilles, Smyrna, Leipzig, and later in India, England, St. Petersburg, Astrakhan, Moscow, and Vienna. This was an exceptional manifestation in civilization that in the conditions of the absence of statehood, Armenian typography flourished. The first Armenian printing house in Armenia was founded in 1771 in Vagharshapat, under the direct patronage of the Catholicos of All Armenians Simeon I.

In the 19th century, many educational centers were established in Eastern and Western Armenia, as well as in various Armenian-populated areas. We should highlight about the activities of the following ones: Moscow Lazaryan (1815), Gevorgyan Seminary of Etchmiadzin (1874), Murat-Raphaelyan in Venice (1870), Central of Constantinople (1886), Nersisyan of Tbilisi (1824), St. Hripsime Girls' School of Yerevan (1850).

The idea of establishing an Armenian university in the motherland appeared on the agenda especially in the second half of the 19th century. Many intellectuals and public figures have taken serious steps to implement this idea.

In 1919, on May 16, the Council of Ministers of the First Republic of Armenia adopted a decree on opening a university in Armenia. It was decided to open four departments at the university which was going to be established in Yerevan: historical-linguistic, economic-legal, medical, physical-mathematical and technical. According to the above mentioned decree, it was planned to open the university in the 1919-1920 academic year, and to open initially the historical-linguistic department.

An organizing committee was formed under the co-chairmanship of Yuri Ghambaryan and David Zavriyan to establish the university. According to the additional law on the Yerevan University adopted by the Council of Ministers, Pro-



Համալսարան հիմնելու նպատակով ստեղծվեց կազմակերպիչ հանձնաժողով՝ Յուրի Ղամբարյանի և Դավիթ Ջավրիյանի համանախագահությամբ: Իսկ Երևանի համալսարանի մասին Նախարարների խորհրդի ընդունած լրացուցիչ օրենքով պրոֆեսոր Ղամբարյանը հաստատվեց համալսարանի տեսուչ (ռեկտոր): Հաշվի առնելով Երևանում համալսարանի համար անհրաժեշտ պայմանների (հատկապես շենքային) բացակայությունը՝ հանրապետության Նախարարների խորհուրդը որոշեց համալսարանը ժամանակավորապես բացել Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի առևտրային դպրոցի շենքում մեծ շուքով տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախարարապետը (վարչապետը), խորհրդարանի նախագահը, հանրային կրթության նախարարը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, օտարերկրյա դիվանագետներ: Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը, ապա՝ հանրային կրթության նախարար Նիկոլ Աղբալյանը:

Ալեքսանդրապոլում տեղակայված համալսարանում դասերն սկսվեցին 1920 թ. փետրվարի 1-ին: Առաջին հանդիսավոր դասախոսությունը ներկայացրեց անվանի գիտնական, հայագետ Ստեփան Մալխասյանցը: Դասախոսությանը ներկա էին համալսարանի ռեկտոր, պրոֆ. Յուրի Ղամբարյանը, ՀՀ հանրային կրթության նախարար Նիկոլ Աղբալյանը, դասախոսներ և մտավորականներ:

Կարևորելով համալսարանի գործունեությունը կայուն հիմքերի վրա սկսելու գործը՝ կազմակերպիչները ստեղծեցին հզոր ներուժով դասախոսական կոլեկտիվ: Նորաստեղծ համալսարանում դասախոսներ նշանակվեցին Մանուկ Աբեղյանը (հայ գրականություն), Ստեփան Մալխասյանցը (պատմական լեզվաբանություն), Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (հայոց պատմություն), Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը (հայ եկեղեցու պատմություն և գրչության արվեստ), Սիրական Տիգրանյանը (հայ իրավունքի պատմություն և հոգեբանություն), Հակոբ Մանանդյանը (հայոց պատմություն), Գրիգոր Ղափանցյանը (համեմատական լեզվաբանություն), Սավիչ-Ջաբլոնկին՝ Խարկովից (երկրաբանություն), Աշխարիբեկ Լոռու Մելիք-Քալանթարը (ինագիտություն):

ՀՀ Նախարարների խորհրդի 1920 թ. հունիսի 21-ի նիստում որոշվեց համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխել Երևան և նրան հատկացնել ուսուցչական սեմինարիայի շենքը:

fessor Ghambaryan was appointed Rector of the university. Taking into consideration the lack of necessary conditions for the university in Yerevan (especially the building), the Council of Ministers decided to temporarily open the university in Alexandropol (now Gyumri). In 1920, on January 31, the opening ceremony of the University of Armenia took place in the building of Alexandropol Trade School. The Prime Minister of the Republic of Armenia, the Speaker of the Parliament, the Minister of Public Education, other high-ranking officials and foreign diplomats were present. The rector of the university, Professor Yuri Ghambaryan and the Minister of Public Education Nikol Aghbalyan made opening remarks.

Lessons at the University located in Alexandropol started on February 1, 1920. The first ever lecture was delivered by famous scientist, specialist in Armenian Studies Stepan Malkhasyants. The lecture was attended by the Rector of the University, Professor Yuri Ghambaryan, RA Minister of Public Education Nikol Aghbalyan, lecturers and intellectuals.

In order to develop the activities of the university on a sustainable basis, the organizers invited a professorial staff with strong potential. Manuk Abeghyan (Armenian Literature), Stepan Malkhasyants (Historical Linguistics), Archbishop Mesrop Ter-Movsisyan (Armenian History), Bishop Garegin Hovsepyan (History of Armenian Church History and the Art of Writing), Sirakan Tigranyan (History and Psychology of Armenian Law), Hakob Manandyan (Armenian History), Grigor Ghapantsyan (Comparative Linguistics), Savich-Zablotsky from Kharkov (Geology), Ashkharhbek Lori Melik-Kalantar (Archeology) were appointed lecturers at the newly established university.

In 1920, on June 21, the Council of Ministers of the Republic of Armenia made a decision to move the university from Alexandropol to Yerevan and provide it with a teaching seminary building.

After the establishment of Soviet rule in Armenia on November 29, 1920, the university was reopened only a few months later, in 1921, on January 23. The reopened university was renamed Yerevan People's University. Instead of the previous one, two faculties were opened: the natural sciences and the social sciences. Prominent historian Hakob Manandyan was elected rector of the university.

The structure of the university used to be changed from time to time, adapting



1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո համալսարանը վերաբացվեց միայն մի քանի ամիս անց՝ 1921 թ. հունվարի 23-ին: Վերաբացված համալսարանը կոչվեց Երևանի ժողովրդական համալսարան: Նախկին մեկ ֆակուլտետի փոխարեն բացվեցին երկուսը՝ Բնագիտական ու Հասարակագիտական ֆակուլտետները: Համալսարանի ռեկտոր ընտրվեց ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը:

Համալսարանը կառուցվածքային առումով պարբերաբար փոփոխվել է՝ իր գործունեությունը համապատասխանեցնելով տնտեսության առաջադրած պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելուն:

Մի քանի ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ: Այսպիսով, համալսարանի հիմքի վրա ձևավորվեց Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը:

1930-ական թվականներից Խորհրդային Միության ողջ տարածքում մոլեգնում էին ստալինյան բռնաճնշումներն ու զանգվածային սպանությունները: Անասելի կորուստներ կրեց նաև մեր հանրապետությունը: Ստալինյան բռնապետական քաղաքականությունը չորջանցեց նաև Երևանի պետական համալսարանը: Միայն 1935-1938 թթ. համալսարանում փոխվեց 6 ռեկտոր: Դաժան ճակատագիր ունեցան նաև բազմաթիվ դասախոսներ և ուսանողներ, որոնք հեռացվեցին համալսարանից, բռնադատվեցին շինծու մեղադրանքներով, ենթարկվեցին անլուր հալածանքների, անասելի խոշտանգումների, արժանապատվության ոտնահարման և անմարդկային կտտանքների: Նրանցից շատերը իրենց մահկանացուն կնքեցին բանտերում ու արքայազանքներում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին համալսարանի առջև ծառացան հրատապ նոր խնդիրներ: Հայրենիքի պաշտպանության գործին զինվորագրված 850 համալսարանականների՝ դասախոսների, ասպիրանտների, ուսանողների ու վարչատնտեսական ոլորտի աշխատողների գրեթե 90 տոկոսը եղավ ռազմաճակատներում: Նրանցից 300-ը զոհվեցին մարտերում, իսկ ողջ մնացածներից շատերը տուն վերադարձան վիրավոր ու հաշմանդամ: Բազմաթիվ համալսարանականներ պարզևատրվեցին Խորհրդային Միության շքանշաններով ու մեդալներով, արժանացան կոչումների: Պատերազմական տարիներին նվազեց, սակայն չընդհատվեց համալսարանի աշխատանքային գործունեությունը: Հենց այդ ժամանակաշրջանում՝ 1943 թ., ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադե-

its activities to the training of specialists in accordance with the requirements of the economy.

Independent institutes were established on the basis of several faculties. Thus, the higher education system of Armenia was formed on the basis of the university.

Since the 1930s, Stalin's repression and mass killings have raged throughout the Soviet Union.

Our republic also suffered awful losses. Stalin's dictatorial policy did not bypass Yerevan State University. Only in 1935-1938 6 rectors worked at the university. Many professors and students, who were expelled from the university, were sentenced to imprisonment on spurious charges, subjected to relentless persecution, violation of dignity and inhuman torture. Many of them died in prisons and in exile.

During the Great Patriotic War, the university faced new challenges. Nearly 90 % of the 850 university students, lecturers and administrative staff joined the ranks of the Red Army to defend the homeland. 300 of them died on the battlefield, and many of the survivors returned home injured and disabled. Many of the representatives of the university were awarded Soviet Union medals and were awarded titles. But even in that period university continued to work. It was during this period, in 1943, that the Armenian Academy of Sciences was established, and 12 university professors were among its founders.

After the war, new faculties, chairs, research laboratories, scientific and educational units were established, the cultural life was enlivened, and the number of students increased.

In 1953 the construction of the new YSU complex, which was one of the most important achievements of the university, began. In 1954 the construction of two educational buildings for the faculties of social sciences started, and in 1960-1965 the main building and the buildings of the faculties of chemistry and physics and mathematics were built. The construction of the complex took more than 17 years.

The years 1960-1970 were a period of unprecedented development for YSU. The scientific work was progressing, new chairs and laboratories were being set up, and the number of students and lecturers was increasing.



միան, որի հիմնադիրների կազմում ընդգրկված էին նաև համալսարանական 12 պրոֆեսորներ:

Պատերազմից հետո համալսարանը սկսեց գործել նոր քափով: Ստեղծվեցին նոր ֆակուլտետներ, ամբիոններ, գիտահետազոտական լաբորատորիաներ, գիտական և ուսումնական կաթինետներ, աշխուժացավ մշակութային կյանքը, աճեց ուսանողների թիվը:

1953 թ. սկսվել է ԵՊՀ նոր համալիրի կառուցումը, որը համալսարանի կարևորագույն ձեռքբերումներից էր: 1954 թ. դրվել են երկու՝ հասարակագիտական ֆակուլտետների ուսումնական մասնաշենքերի հիմքերը, իսկ 1960-1965 թթ. կառուցվել են կենտրոնական, ինչպես նաև Զինիական և Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետների մասնաշենքերը: Համալիրի կառուցումը տևել է ավելի քան 17 տարի:

1960-1970-ական թվականները ԵՊՀ-ի համար աննախադեպ վերելքի ժամանակաշրջան էր: Գիտակրթական աշխատանքները նոր առաջընթաց էին ապրում, ստեղծվում էին նոր ամբիոններ ու լաբորատորիաներ, աճում էր ուսանողների և դասախոսների թիվը:

Երևանի պետական համալսարանը ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի և Բարձրագույն կրթության մինիստրության 1978 թ. ապրիլի 6-ի որոշմամբ դասվել է Խորհրդային Միության 70 առաջատար բուհերի շարքը:

Կրթության ու գիտության ասպարեզում իր հաղթարշավը համալսարանը շարունակել է հետագա տասնամյակներում: Տարեցտարի ավելացել է ուսանողների թիվը, ստեղծվել են գիտաուսումնական նոր կառույցներ, բացվել են նոր մասնագիտություններ, հրատարակվել են արժեքավոր ուսումնասիրություններ ու դասագրքեր:

Երբ դատապարտվեց անհատի պաշտամունքը, ԽՍՀՄ պատմության մեջ աննախադեպ բեկում տեղի ունեցավ. սկսվեց մի ժամանակաշրջան, երբ փոխվեց մարդկանց մտածելակերպը, աստիճանաբար ձևավորվեց այլախոհական մթնոլորտ: Հայաստանում գիտության ու մշակույթի մի շարք գործիչների նախաձեռնությամբ ստեղծվեցին ընդհատակյա խմբավորումներ, իսկ հետագայում՝ նաև կուսակցություններ, որոնք պարբերաբար տպագրում կամ ձեռագիր տարածում էին ոչ լեգալ թերթեր ու բրոշյուրներ:

1965 թ. ապրիլի 24-ին սկիզբ առած հոգևոր զարթոնքը հետագայում զարգացում ապրեց Սփյուռքի տարբեր գաղթօջախներում կազմակերպված բողոքի բազմաթիվ ցույցերով և 1988 թ. Արցախյան ազգային-ազատագրական շարժումով:

According to the decision of the Council of Ministers of the USSR, Ministry of Higher Education, made on April 6, 1978, Yerevan State University was included in the list of 70 leading universities of the Soviet Union.

The University continued its triumphant campaign in the field of education and science for the next decade. The number of students increased year by year, new scientific-educational structures were created, training in the field of new professions was introduced, valuable researches and textbooks were published.

When the cult of personality was condemned, everyone saw an unprecedented breakthrough in the history of the USSR. A period began when people's mindsets changed, and a dissident atmosphere gradually developed. At the initiative of a number of scientists and cultural figures in Armenia, underground groups were formed, and later also parties that regularly published or distributed illegal newspapers and brochures.

In 1965 the spiritual awakening that began on April 24, was further developed by numerous protests in various Diaspora communities, and in 1988 it led to the start of the Artsakh National Liberation Movement.

When the Artsakh Movement began, many of its leaders were university representatives, Yerevan State University resolutely took up positions in the movement's defense and became the organizer and center of many events. While the people of Armenia and Artsakh expressed their will to restore historical justice through rallies and peaceful demonstrations, a group of Armenian members of the USSR Supreme Council, including YSU Rector Sergey Hambardzumyan, used every effort for the impartial settlement of the Nagorno-Karabakh Conflict.

In these conditions, YSU became one of the most important centers for shaping the spirit of the Artsakh Movement.

In the early 1990s, higher education in Armenia had registered great achievements. However, there were serious problems ahead, related to 1988 devastating Spitak earthquake, the Artsakh Movement, the economic problems and blockade by neighboring countries, as well as many other realities.

The radical reform of educational, scientific and cultural systems and institutions was on the agenda to solve the problems of vital importance for the republic and to ensure its further sustainable progress.



Երբ սկսվեց Արցախյան շարժումը, որի ղեկավարներից շատերը համալսարանականներ էին, Երևանի պետական համալսարանը վճռակամությամբ կանգնեց շարժման պաշտպանության դիրքերում և դարձավ բազում միջոցառումների կազմակերպիչն ու կենտրոնը: Մինչ Հայաստանում և Արցախում ժողովուրդը պատմական արդարությունը վերականգնելուն ուղղված իր կամքն էր արտահայտում միտինգների ու խաղաղ ցույցերի միջոցով, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հայաստանցի մի խումբ պատգամավորներ, որոնց թվում էր նաև ԵՊՀ ռեկտոր Սերգեյ Համբարձումյանը, Մոսկվայում ԳԽ նիստերին անմահանջ պայքար էին մղում Արցախի հարցի արդարացի լուծման համար:

Այս պայմաններում ԵՊՀ-ն դարձավ Արցախյան շարժման ոգին պահպանող կարևորագույն կենտրոններից:

1990-ականների սկզբին Հայաստանում բարձրագույն կրթությունը մեծ նվաճումների էր հասել: Սակայն առջևում լուրջ խնդիրներ էին սպասվում՝ կապված 1988 թ. Սպիտակի երկրաշարժի, Արցախյան շարժման, հարևան երկրների կողմից տնտեսական բեռնարկերի և շրջափակման ու բազմաթիվ այլ իրողությունների հետ:

Հանրապետության համար կենսական կարևորություն ունեցող խնդիրների լուծման և նրա հետագա կայուն առաջընթացի ապահովման համար օրակարգի հարց էր դարձել նաև կրթական, գիտական և մշակութային համակարգերի ու հաստատությունների արմատական բարեփոխումը:

1994 թ. մշակվեց համալսարանի զարգացման առաջին ծրագիրը, որի համաձայն՝ 1995/96 ուստարվանից անցում կատարվեց որակավորումների բազմաստիճան համակարգին՝ բակալավրի (քառամյա) և մագիստրոսի (երկամյա) կրթական ծրագրերի ներմուծմամբ:

2005 թ. Հայաստանի Հանրապետությունը միացավ Բոլոնիայի գործընթացին: Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ինտեգրվելու և ուսումնական գործընթացը Բոլոնիայի սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով ԵՊՀ-ում կատարվեցին մի շարք նորամուծություններ. 2007/08 ուստարվանից՝ մագիստրոսի, իսկ 2008/09-ից բակալավրի պատրաստման կրթական ծրագրերում ներդրվեց կրեդիտային համակարգը: 2010/11 ուստարվանից կրեդիտային համակարգով է կազմակերպվում ԵՊՀ ասպիրանտների ուսուցումը: Ներդրվել է նաև դասախոսական կազմի որակավորման բարձրացման՝ կրեդիտային հենքով կրթագիտական ծրագիրը:

In 1994 the first university development program was developed, according to which the transition to a multi-level qualification system was introduced from 1995/96 academic year with the introduction of bachelor's (four-year) and master's (two-year) educational programs.

In 2005 Republic of Armenia joined the Bologna Process. A number of innovations were introduced at YSU in order to integrate in the field of the European higher education and bring the educational process in line with the principles of Bologna. From the 2007/08 academic year, the credit system was introduced in the master's degree programs, and from 2008/09 in the bachelor's degree programs. The training of YSU PhD students was organized on a credit system since the 2010/11 academic year. The educational program with a credit basis for raising the qualification of the professorial staff was also introduced.

The reforms implemented in YSU educational system in recent decades have given significant results. A number of new faculties, chairs, specialties and specializations have been opened. We should highlight the improvement of the technical base, the introduction of new technologies in the educational process, the improvement of the internal quality assurance system according to the European standards, the compliance of educational programs with the needs of the labor market and society, the implementation of effective mechanisms for student and alumni feedback (including online), the activities of student organizations.

One of the most important ways to improve the quality of education is to implement dual diploma programs at YSU. Today the university has 19 faculties, 2 institutes, more than 100 chairs and one branch in the town of Ijevan with 4 faculties.

YSU currently offers more than 50 programs for bachelors, more than 140 – for masters and about 90 PhD programs. More than 16.000 students (both full-time and part-time education) study at YSU.



Վերջին տասնամյակներում ԵՊՀ կրթական համակարգում կատարված բարեփոխումները զգալի արդյունք են տվել: Բացվել են մի շարք նոր ֆակուլտետներ, ամբիոններ, մասնագիտություններ ու մասնագիտացումներ: Ակնհայտ են նյութատեխնիկական բազայի բարելավումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում, կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործումը՝ ըստ եվրոպական չափանիշների, կրթական ծրագրերի համապատասխանեցումը աշխատաշուկայի և հասարակության կարիքներին ու պահանջներին, ուսանողների և շրջանավարտների հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների (այդ թվում՝ առցանց) գործադրումը, ուսանողական կառույցների ակտիվ գործունեությունը:

Ուսման որակի բարձրացման կարևոր ուղիներից է կրկնակի դիպլոմով ծրագրերի իրականացումը ԵՊՀ-ում: Այսօր համալսարանն ունի 19 ֆակուլտետ, 2 ինստիտուտ, 100-ից ավելի ամբիոն և մեկ մասնաճյուղ Իջևան քաղաքում՝ 4 ֆակուլտետով:

Ներկայումս ԵՊՀ-ն իրականացնում է 50-ից ավելի բակալավրական, 140-ից ավելի մագիստրոսական և շուրջ 90 ասպիրանտական ծրագրեր, որոնց առկա և հեռակա ուսուցման համակարգերում ընդգրկված են 16000-ից ավելի ուսանողներ:



ԵՊՀ դասախոսները, 1923 թ.

YSU academic staff, 1923



Ուսուցչական սեմինարիայի շենքը (Աստաֆյան փողոց),
որտեղ սկսվեցին առաջին պարապմունքները:

The building of the Teacher's Seminary on Abovyan (former Astafyan)
street, where the first classes were held.



ԵՊՀ համայնապատկերը (1966 թ.), ճարտարապետ Էդ. Տիգրանյան
YSU Panorama (1966), architect - Ed. Tigranyan

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
նախկին ուսանող Տեր Բնձակ ավագ
քահանա Նալբանդյան, Սուրբ Համբարձում
Հայոց Եկեղեցու հոգևոր հովիվ
(Թրամբլ, Քոնեկտիկուտ, ԱՄՆ)


Former student of YSU Faculty of Armenian
Philology Fr. Untzag Nalbandian, Pastor
Armenian Church of the Holy Ascension
(Trumbull, Connecticut, USA)



Տեր Մարտիրոս քահանա Հակոբյան,
Սուրբ Գևորգ Հայոց Եկեղեցու հոգևոր հովիվ
(Հյուսթոն, Թեքսաս, ԱՄՆ)

Fr. Martiros Hakobyan,
Pastor St. Kevork Armenian Church
(Houston, Texas, USA)





Ուսանողական աշխատանքները ԵՊՀ լաբորատորիաներում և խարաններում
Students work at YSU laboratories and classrooms



Ծաղիկների իջեցում Արաքսի ջրերում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, 2015 թ., ապրիլ

Flowers were dropped in the waters of Araks, dedicated to the Centennial of the Armenian Genocide, April 2015



Պատմության ֆակուլտետի ուսանողների դիպլոմների հանձնումը Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու բակում

Handing out the diplomas of the students of the Faculty of History in the yard St. Cross Church of Akhtamar





ԵՊՀ կենտրոնական մասնաշենքը
YSU Main Building



ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահը
Foyer of YSU Main Building



Հայոց մեծերին նվիրված հարթաքանդակ (տեղադրված է ԵՊՀ գրադարանի նախասրահում)
A stele dedicated to Armenian scientists (erected in the hall of YSU Library)



Յուրաքանչյուր տարի ԵՊՀ հարյուրից ավելի ուսանողներ ՀՕՖ-ի կողմից արժանանում են կրթավճարների:

Every year more than hundred of YSU students receive scholarships from the FAR.





ՀՕՖ-ի ANSEF դրամաշնորհառու Աննա Փոլադյանը (ԵՊՀ) ելույթ է ունենում ANSEF դրամաշնորհների մրցանակաբաշխությանը:

FAR ANSEF grantee Anna Poladyan (YSU) having a speech at the ANSEF grants awarding ceremony.



ANSEF դրամաշնորհառու ԵՊՀ գիտնականները լաբորատորիայում փորձեր կատարելիս
ANSEF grantees, YSU scientists while doing lab. experiments



Ջապել Եսայանի անվան լսարանը վերանորոգվել է ԱՄՆ Սուրբ Համբարձում Հայոց Եկեղեցու հովանավորությամբ:

Zabel Yesayan Auditorium Renovated by Sponsorship of Holy Ascension Armenian Church, Trumbull, CT, USA.



Ե. Չարենցի անվան լսարանը (վերանորոգվել է ՀՕՖ-ի հովանավորությամբ)

Y. Charents Auditorium (renovated by sponsorship of FAR)





ՅՈՒՐԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Իրավաբան, պրոֆեսոր

Ծնվել է 1850 թ. Թիֆլիսում: Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում: Ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանության ֆակուլտետը և 1884 թ. դարձել նույն համալսարանի պրոֆեսոր՝ անընդմեջ պաշտոնավարելով մինչև 1899 թ.:

1900 թ. գործում մասնակցություն է ունեցել Փարիզում հումանիտար գիտությունների ռուսական բարձրագույն դպրոցի հիմնադրման աշխատանքներին, դասախոսել Բրյուսելի համալսարանում: 1906-1911 թթ. եղել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ և մշակել ու հրատարակել է «Քաղաքացիական իրավունքի դասընթաց» և այլ արժեքավոր աշխատություններ: Ռուսական աղբյուրներում հիշատակվում և մեծարվում է որպես իրավագիտության մեջ ռուսական սոցիոլոգիական դպրոցի հիմնադիր: Կյանքի վերջին շրջանում վերադարձել է Թիֆլիս և ղեկավարել Վրաստանի պոլիտեխնիկական ինստիտուտը:

1919 թ. Երևանի համալսարանի ռեկտոր առաջադրվեց գիտական կյանքի նշանակալի ուղի անցած պրոֆ. Յու. Ղամբարյանը: Չնայած պատկառելի տարիքին՝ նա այդ խիստ դժվարին ու պատասխանատու գործում դրսևորեց մեծ կամք ու տոկունություն:

Թեև Հայաստանում Յու. Ղամբարյանն աշխատեց ընդամենը 1919 թ. հուլիսից մինչև 1920 թ. դեկտեմբերը, բայց կարճ ժամանակում վիթխարի գործ կատարեց՝ լուծելով նորաբաց համալսարանի առանցքային հիմնահարցերը:

ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ առաջին ռեկտորը տասնամյակների հեռվից ներկայանում է ոչ միայն որպես համաեվրոպական ճանաչում ունեցող մեծ գիտնական, այլև իր հայրենիքի ճակատագրով խորապես մտահոգված մտավորական և իրավամբ դասվում է հայոց մեծերի շարքը:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

Վախճանվել է 1926 թ. Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ):

YURI GHAMBARYAN

Lawyer, Professor

He was born in 1850 in Tbilisi. He received his secondary education in his hometown. He graduated from the Faculty of Law of the University of Moscow in 1884 and became a professor of the same university, permanently working there until 1899.

In 1900 he took an active part in the establishment of the Russian Higher School of Humanities in Paris, and delivered lectures at the University of Brussels.

In 1906-1911 he was the Head of the Chair of Civil Law at St. Petersburg University. Yu. Ghambaryan developed and published a course on civil law and other valuable works. In Russian sources, he is mentioned and honored as the founder of the Russian School of Sociology in Law. Later he returned to Tbilisi and headed the Georgian Polytechnic Institute.

In 1919 Prof. Ghambaryan was nominated as the organizer rector of the university. Despite his age, he showed great will and endurance in this very difficult and responsible job.

Though he worked in Armenia only from July of 1919 to July of 1920, however, in this short period of time, he showed excellent performance, solving the key issues of the newly opened university.

Focusing on the decades, we see that the first rector of the University is positioned not only as a well-known European scientist, but also as an intellectual individuality, deeply concerned about the fate of his homeland, and is rightly considered one of the great Armenians.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.

He died in 1926 in Leningrad (now St. Petersburg).



ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1857 թ. հունիսի 10-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): Մինչև 8-րդ դասարանը սովորել է Թիֆլիսի 1-ին գիմնազիայում, այնուհետև մեկնել է Փարիզ, ստացել մասնավոր կրթություն և 1885 թ. ավարտել Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1889 թ. վերադարձել է Թիֆլիս և նշանակվել քաղաքի սանիտարական բժիշկ, միաժամանակ աշխատել է քաղաքային բուժարանում որպես քիմ-կոկորդի և ականջի հիվանդությունների բժիշկ, ընդ որում, աղքատ հիվանդներին բուժել է անվճար: 1892-1893 թթ. խոլերայի համաճարակի դեմ պայքարի ակտիվ կազմակերպիչներից էր:

1922 թվականից ղեկավարել է ԵՊՀ բժշկական ֆակուլտետի, ապա՝ ԵրԲԻ անատոմիայի ամբիոնները:

1926 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1936 թ.՝ բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Մեծ են նրա ծառայությունները նաև բժշկական տերմինաշինության ասպարեզում: 1924 թ. հրատարակել է «Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական տերմինների բառարան» մեծարժեք աշխատությունը, որը տասնամյակներ շարունակ եղել է բժիշկների և ուսանողների սեղանի գիրքը:

1930 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

1943 թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

Վախճանվել է 1947 թ. հուլիսի 29-ին Երևանում:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում, իսկ Երևանի Փարպեցի փողոցի թիվ 28 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

ԵրԲԻ-ում նրա անունով է կոչվում իր հիմնադրած Մարդու անատոմիայի թանգարանը, որտեղ պահվում են նրա սիրտը և ուղեղը:

VAHAN ARTSRUNI

Doctor of Medical Sciences, Professor, Honored Scientist of the Armenian SSR

He was born on June 10, 1857, in Nor Bayazet (now Gavar). Before the 8th form he studied at the First Gymnasium of Tbilisi, then left for Paris, where he received a private education. He graduated from the Sorbonne University School of Medicine.

In 1889 he returned to Tbilisi and was appointed a sanitary doctor of the city. In 1892-1893 he was one of the active organizers of the fight against the cholera epidemic.

From 1922 he headed the Chair of YSU Faculty of Medicine, then the Chair of Anatomy of Yerevan State Medical Institute.

In 1926 he was awarded the title of professor and in 1936, the degree of Doctor of Medical Sciences.

His contribution in the field of the development of the medical terminology is also great. In 1924 he published the valuable work “Russian-Latin-Armenian Dictionary of Medical Terms”, which has served as a handbook for doctors and students for decades.

In 1930 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.


In 1943 he was awarded the medal “For Distinguished Labor”.

He died on July 29, 1947, in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building, and a commemorative plaque is attached to the wall of the building No. 28 on Parpetsi Street in Yerevan.

The Museum of Human Anatomy, founded by him at Yerevan State Medical Institute, is named after him, where his heart and brain are kept.





ԱՌԱՔԵԼ ԲԱՐԱԽԱՆՅԱՆ (ԼԵՈՆ)

Պատմաբան, գրող, հրապարակախոս, պրոֆեսոր

Ծնվել է 1860 թ. ապրիլի 14-ին Շուշիում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի թեմական և գավառական դպրոցներում: Հոր մահից հետո, հնարավորություն չունենալով շարունակելու ուսումը, անցել է աշխատանքի: Տասնամյակներ շարունակ աշխատակցել է «Մշակ», «Արձագանք», «Մուրճ», «Հորիզոն», «Տարագ» և այլ թերթերի ու հանդեսների, գրել պատմվածքներ, վեպեր, վիպակներ, ուժերը փորձել թատերգության ասպարեզում:

1924 թ. Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով Թիֆլիսից եկել է Երևան, աշխատանքի անցել ԵՊՀ-ում՝ վարելով հայոց պատմության դասընթաց: Նրա դասախոսությունները տպագրվել են ձեռագրի իրավունքով և Հ. Մանանդյանի դասախոսությունների հետ դարձել հայոց պատմության համալսարանական առաջին դասագրքերը:

ԵՊՀ-ում հայագիտական առարկաների դասավանդումը գիտական հիմքերի վրա դնելու գործում Հ. Մանանդյանի, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի և ուրիշների հետ մեծ երախտիք ունի նաև Լեոն:

1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նույն թվականին դարձել է ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ:

Մեծ է նրա վաստակը հայ հասարակական մտքի, հայ գրականության ու մշակույթի պատմության ուսումնասիրության բնագավառներում: Առավել արժեքավոր են վաստակաշատ գիտնականի պատմագիտական աշխատությունները: Լեոն առաջին պատմաբաններից էր, որ ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանների պատմության, ազատագրական շարժումների, Հայկական հարցի, Առաջին համաշխարհային պատերազմի և հայ ժողովրդի մեծ ողբերգության ուսումնասիրմանը:

Երկերի տասնհատորյակը հրատարակվել է 1966-1987 թթ.:

Վախճանվել է 1932 թ. նոյեմբերի 14-ին Երևանում:

Նրա անունով է կոչվում Երևանի փողոցներից մեկը: Բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

ARAKEL BABAKHANYAN (LEO)

Historian, writer, publicist, professor

He was born on April 14, 1860, in Shushi. He received his primary education at the local diocesan and provincial schools. After his father's death, he was unable to continue his education and started to work. For decades he worked for Mshak, Ardzagank, Murtch, Horizon, Taraz and other newspapers and magazines, wrote short stories, novels, and tried to succeed in the field of dramaturgy.

In 1924 at the invitation of the Government of Soviet Armenia, he came from Tbilisi to work at YSU, conducting a course on Armenian History. His lectures were published with the right of manuscript and along with the lectures of H. Manandyan became the first university textbook in the field of the Armenian history.

Leo, alongside with H. Manandyan, M. Abeghyan, Hr. Acharyan and others, has a great contribution in the work of putting the teaching of the subjects in the field of the Armenian Studies at YSU on scientific grounds.

In 1925 he was awarded the title of professor. In the same year he became a full member of the Institute of Science and Art of the Armenian SSR.

He has had a great contribution to the studies of Armenian public thought, the history of Armenian literature and culture. The most valuable are the historical works of a distinguished scientist. He was one of the first historians to study the history of the new and modern eras of the Armenian people, the liberation movements, the Armenian Question, the First World War and the great tragedy of the Armenian people.

The ten-volume work was published in 1966-1987.

He died on November 14, 1932, in Yerevan.

One of the streets of Yerevan is named after him. The bronze bust of the scientist is placed in the lobby of YSU Main Building.





ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայագետ, մանկավարժ, փիլիսոփայության դոկտոր, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս

Ծնվել է 1867 թ. դեկտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդ գավառի (այժմ՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան) Մաղավուզ գյուղում:

Սկզբնական կրթությունն ստացել է Ամարասի դպրեվանքում, Կուսապատ անապատի և Շուշիի թեմական դպրոցներում: 1890 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանային բաժինը և ձեռնադրվել կուսակրոն սարկավագ: 1892-1896 թթ. սովորել է Բեռլինի, Հալեի և Լայպցիգի համալսարաններում: 1897 թ. արժանացել է փիլիսոփայության դոկտորի աստիճանի, հրավիրվել է Գևորգյան ճեմարան՝ դասախոսելու: Նույն թվականին ձեռնադրվել է աբեղա, 1898 թ.՝ վարդապետ: 1915 թ. ամռանը ձեռնամուխ է եղել Մեծ եղեռնի հետևանքով Վասպուրականից Էջմիածին գաղթած հայերին օգնություն տրամադրելու գործի կազմակերպմանը: 1917 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը նրան ձեռնադրել է եպիսկոպոս:

1918 թ. Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչներից ու մասնակիցներից էր: 1919 թ. մայիսին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) բացված Հայաստանի համալսարանի կազմկոմիտեի անդամներից և առաջին դասախոսներից էր, Պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատարը: Դասավանդել է եկեղեցու պատմություն, հայ արվեստի պատմություն, գրչության արվեստ, հնագրագիտություն:

1927-1934 թթ. եղել է Ռուսաստանի, Դրիմի ու Նոր Նախիջևանի, 1938-1943 թթ.՝ Ամերիկայի հայոց հոգևոր թեմի առաջնորդ, 1943-1952 թթ.՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս:

Հայ հնագրագիտության, գրչության արվեստի, ձեռագրային ժառանգության և հայ մանրանկարչության ուսումնասիրության սկզբնավորողներից է: Վախճանվել է 1952 թ. հունիսի 21-ին Անթիլիասում (Լիբանան):

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

GAREGIN HOVSEPYAN

Specialist in Armenian Studies, pedagogue, Doctor of Philosophy, Catholicos of the Great House of Cilicia

He was born on December 17, 1867, in the village of Maghavuz in the Jraberd Region of Nagorno-Karabakh (now Martakert Region of the Artsakh Republic).

He received his primary education at Amaras Church School, Kusapat Desert and Shushi Diocesan Schools. In 1890 he graduated from the Auditorium Department of the Gevorgyan Seminary of Etchmiadzin and was ordained a deacon. In 1892-1896 he studied at the universities of Berlin, Halle and Leipzig. In 1897 he was awarded the degree of Doctor of Philosophy and was invited to deliver lectures at the Gevorgyan Seminary. In the same year he was ordained a hieromonk, and in 1898 an Archimandrite. In summer of 1915, he initiated the activities, directed to the support of the Armenians who emigrated from Vaspurakan and found shelter in Etchmiadzin as a result of the Armenian Genocide. In 1917 The Catholicos of All Armenians Gevorg V Surenyants ordained him a bishop.

In 1918 he was one of the organizers and participants of the heroic Battle of Sardarapat. In 1919 he was one of the first members of the organizing committee and lecturers of the Armenian University, which was opened in Alexandropol (now Gyumri). He was the Acting Dean of the Faculty of History and Linguistics. He taught the history of the church, the history of Armenian art, the art of writing, and archeology.

In 1927-1934 he was the leader of the Armenian Diocese of the Armenian Apostolic Church in Russia, Crimea and Nor Nakhichevan, in 1938-1943 in USA, from 1943 to 1943 he was the Catholicos of the Great House of Cilicia.

He is one of the initiators of the study of Armenian archeology, the art of writing, manuscript heritage and the study of Armenian miniature painting.

He died on June 21, 1952, in Antelias (Lebanon).

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆ

Փիլիսոփայական և բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Նախիջևան գավառի Աստապատ գյուղում: 1882 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դպրոցական, 1885 թ.՝ լսարանային բաժինը: 1885-1887 թթ. եղել է նույն ճեմարանի գրադարանապետ և դպրոցական բաժնի ուսուցիչ, 1887-1889 թթ.՝ Շուշիի թեմական, 1889-1893 թթ.՝ Թիֆլիսի Հովմանյան օրիորդաց դպրոցի ուսուցիչ, 1891-1892 թթ.՝ «Նոր դար» թերթի խմբագիր: 1893-1898 թթ. սովորել է Եմայի, Լայպցիգի, Բեռլինի և Փարիզի համալսարաններում:

1898 թ. Եմայի համալսարանում նրան շնորհվել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան:

1898-1914 թթ. եղել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի, 1914-1919 թթ.՝ Թիֆլիսի Ներսիսյան և Հովմանյան դպրոցների ուսուցիչ: ԵՊՀ հիմնադրման առաջին իսկ օրերից հրավիրվել է համալսարան որպես դասախոս, 1923-1925 թթ. եղել Պատմագրական ֆակուլտետի դեկան: 1926 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1935 թ.՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

1943 թ. հաստատվել է ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամների կազմում:

Որպես հայագետ՝ իր գործունեությունն սկսել է հայ ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությամբ: Հավաքել, ուսումնասիրել և հրատարակել է ժողովրդական բազմաթիվ ստեղծագործություններ, 1886 թ. գրի առել «Սասունցի Դավիթ» էպոսի պատումներից մեկը: Նրա լեզվաբանական շուրջ 200 աշխատություններում ուսումնասիրված են հայոց լեզվի գրեթե բոլոր բնագավառները: Ջրադվել է նաև մատենագրական և ժողովրդական ստեղծագործությունների բնագրերի հրատարակմամբ:

Վախճանվել է 1944 թ. սեպտեմբերի 25-ին Երևանում:

Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 19 շենքի դիմաց կանգնեցված է հուշապյուն:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

MANUK ABEGHYAN

Doctor of Philosophy and Philology, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on March 17, 1865, in the village of Astapat, Nakhichevan Province. In 1882 he graduated from the School Department of the Gevorgyan Seminary of Etchmiadzin and the Auditorium Department in 1885. In 1885-1887 he was the Head of Library and tutor of the School Department of the same seminary. He worked as a tutor at the Shushi Diocesan School in 1889-1893 and also at the Hovnanyan Girls' School in Tbilisi in 1889-1893. In 1891-1892 he was the editor of the newspaper "Nor Dar". In 1893-1898 he studied at the universities of Jena, Leipzig, Berlin and Paris.

In 1898 he was awarded a degree of the Doctor of Philosophy at the University of Jena.

In 1898-1914 he worked as a tutor at the Gevorgyan Seminary in Etchmiadzin and in 1914-1919 he was a teacher at Nersisyan and Hovnanyan schools in Tbilisi. From the very first days of YSU foundation, he was invited to work as a lecturer. In 1923-1925 he was the dean of the Faculty of Historiography. In 1926 he was awarded the title of professor, in 1935 the degree of Doctor of Philological Sciences and the title of Honored Scientist of the Armenian SSR.

In 1943 he was among the founding members of the Academy of Sciences of the Armenian SSR.

As a specialist in the field of Armenian Studies, he began his career by studying Armenian folklore. Collected, studied and published many folk works. In 1886 he wrote down one of the stories of the epic "David of Sassoun". In about 200 of his linguistic works, almost all spheres of the Armenian language have been studied. He was also engaged in publishing the originals of bibliographic and folk works.

He died on September 25, 1944, in Yerevan. A monument in his honor is erected in front of the building No. 19 on Moskovyan Street in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ

Գրականագետ, մանկավարժ, հրապարակախոս, պետական-քաղաքական գործիչ

Ծնվել է 1873 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսում: 1892 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը և ընդունվել Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որտեղ սովորել է երկու տարի: Այնուհետև տարբեր տարիների եղել է Մոսկվայի, Լոզանի և Սորբոնի համալսարանների կարճաժամկետ ունկնդիր, սակայն ազգային-քաղաքական գործունեությանը նվիրվելու պատճառով չի ավարտել դասընթացը: Ջբաղվել է քաղաքական, գրական-մշակութային գործունեությամբ, ինչպես նաև ուսուցչությամբ՝ Կաղզվանում, Ագուլիսում, Շուշիում, Թեհրանում, Ալեքսանդրիայում և Բեյրութում: Որպես ՀՅԴ կուսակցության գործուն անդամ՝ 1918-1920 թթ. ընտրվել է ՀՀ Ազգային խորհրդի, ապա՝ պառլամենտի անդամ:

1900-1910 թթ. ճանաչված քննադատ էր, քաղաքական գործիչ, Հայ գրողների կովկասյան ընկերության (1912 թ.) նախագահ Հովհ. Թումանյանի տեղակալը:

Մեծ է նրա դերը հայ գրական-մշակութային գործիչների և մասնավորապես Սայաթ-Նովայի, Լ. Շանթի, Ե. Չարենցի ստեղծագործությունների արժևորման գործում: ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարի (1919 թ. օգոստոս - 1920 թ. մայիս) պաշտոնում մեծ աշխատանք է ծավալել մշակույթի, գիտության և ազգային կրթության նկատմամբ պետական մոտեցում ձևավորելու ուղղությամբ: Նրա ստորագրած հրամանով ու ջանքերով էլ կյանքի կոչվեց համալսարան ստեղծելու մասին մինչ այդ ընդունված որոշումը:

1920 թ. Հայաստանի խորհրդայնացումից հետո Ն. Աղբալյանը չհեռացավ հայրենիքից, սակայն շուտով ձերբակալվեց, բայց ազատ արձակվեց 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ և տարագրվեց: 1930 թվականից ապրել է Բեյրութում, եղել «Նշան Փալանջյան» ճեմարանի տնօրենը:

Վախճանվել է 1947 թ. օգոստոսի 15-ին Բեյրութում:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

NIKOL AGHBALYAN

Literary critic, pedagogue, publicist, statesman-politician

He was born on April 1, 1873, in Tbilisi. In 1892 he graduated from the Nersisyan School and entered the Gevorgyan Seminary of Etchmiadzin, where he studied for two years. After that, he was a short-term student at Moscow, Lausanne and Sorbonne universities for various years, but did not graduate due to his devotion to national and political activities. He was engaged in political and literary activities, as well as teaching in Kaghzvan, Agulis, Shushi, Tehran, Alexandria, and Beirut. As an active member of the ARF Party in 1918-1920 he was elected Member of the National Council of the Republic of Armenia, then Member of Parliament.

In 1900-1910 he was an eminent critic, politician, Deputy President of the Caucasian Society of Armenian Writers (1912) (Tumanyan's deputy).

His role is great in the process of evaluation of the Armenian literary and cultural figures, especially Sayat Nova, L. Shant, Ye. Charents. As the Minister of Public Education and Arts of the Republic of Armenia (August 1919-May 1920), he did a great job of creating a state approach to culture, science and national education. With his order and efforts, the decision to establish a university was made.

In 1920 after the Sovietization of Armenia, he did not leave his homeland, but was soon arrested, but was released in 1921. He was deported during the February uprising. From 1930 he lived in Beirut and was the director of the Nshan Palanjyan Seminary.

He died on August 15, 1947, in Beirut.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ՀԱՎՈՐ ՄԱՆԱՆԳՅԱՆ

ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին Ախալցխայում: 1880-1883 թթ. սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի Կարապետյան վարժարանում, 1883-1893 թթ. սովորել է Թիֆլիսի առաջին գիմնազիայում, 1893-1897 թթ.՝ Եմայի, Լայպցիգի ու Ստրասբուրգի համալսարաններում և արժանացել փիլիսոփայության դոկտորի աստիճանի: 1898 թ. ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների, 1909 թ.՝ Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանի իրավաբանական ֆակուլտետները:

1900-1905 թթ. դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1905-1907 թթ.՝ Թիֆլիսի առաջին և երկրորդ արական գիմնազիաներում, 1906-1907 թթ.՝ Ներսիսյան դպրոցում, 1911-1913 թթ.՝ Բաքվի ժողովրդական համալսարանում, 1915-1919 թթ.՝ առևտրային դպրոցում: 1919 թ. ղեկտեմբերին հրավիրվել է ԵՊՀ, նշանակվել Պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատար, 1921-1922 թթ.՝ ռեկտոր, 1922-1923 թթ.՝ Արևելագիտության և Պատմագրական ֆակուլտետների ղեկան, 1921-1925 թթ.՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925-1931 թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1938 թ.՝ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1925 թ. ընտրվել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի անդամ, 1939 թ.՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս: 1943 թ. հաստատվել է ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամների կազմում:

ԵՊՀ-ում նա առաջինն է դասավանդել հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմություն: 1931 թ. ընդհատել է մանկավարժական գործունեությունը և զբաղվել միայն գիտական աշխատանքով:

Վախճանվել է 1952 թ. փետրվարի 4-ին Երևանում: Աճյունն ամփոփված է Կոմիտասի անվան այգու պանթեոնում:

Երևանի Տերյան փողոցի թիվ 62 շենքի դիմաց կանգնեցված է հուշապում:

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

HAKOB MANANDYAN

Academician of the Academy of Sciences of the USSR and the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on November 22, 1873, in Akhaltsikhe. In 1880-1883 he received his primary education at the Karapetyan College in his hometown, in 1883-1893 he studied at the First Gymnasium in Tbilisi, from 1893 to 1897 at the Universities of Jena, Leipzig and Strasbourg, and received a degree of a Doctor of Philosophy. In 1898 he graduated from the Faculty of Oriental Languages of the University of St. Petersburg, and in 1909 from the Faculty of Law of the University of Dorpat (now Tartu).

In 1900-1905 he taught at the Gevorgyan Seminary of Etchmiadzin, in 1905-1907 at the First and Second Men's Gymnasiums in Tbilisi, from 1906 to 1907 at the Nersisyan School, from 1911 to 1913 at the People's University of Baku, and from 1915 to 1919 at the Trade School. In December of 1919 he was invited to YSU and appointed Acting Dean of the Faculty of History and Linguistics, from 1921 to 1922 he was the Rector of YSU, from 1922 to 1923 he was the dean of the faculties of Art and Historiography, from 1921 to 1925 he was the Head of the Chair of the History of the Armenian People. Professor of the same chair.

In 1925 he was awarded the title of professor, in 1938-the degree of Doctor of Historical Sciences. In 1925 he was elected a member of the Institute of Sciences and Arts of Armenia, in 1939 he became a member of the Academy of Sciences of the USSR, and in 1943 his candidacy was approved as a founding member of the Academy of Sciences of the USSR.

He was the first to teach ancient and medieval history of the Armenian people at YSU. In 1931 he interrupted his pedagogical activities and engaged only in scientific work.

He died on February 4, 1952, in Yerevan. The ashes are in the Pantheon of Komitas Park.

A monument is erected in front of the 62nd building on Teryan Street in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ՀԻՄՅԱ ԱՃԱՌՅԱՆ

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1876 թ. մարտի 8-ին Կոստանդնուպոլսում: Ավարտել է տեղի Կեդրոնական վարժարանը: 1895 թ. մեկնել է Փարիզ, սովորել Սորբոնի համալսարանում:

1898 թ. եկել է Անդրկովկաս և նվիրվել մանկավարժական ու գիտական գործունեության: Որպես ուսուցիչ աշխատել է Էջմիածնում, Նոր Նախիջևանում, Շուշիում, Նոր Բայազետում և Թավրիզում: 1923 թ. հրավիրվել է ԵՊՀ որպես հայագիտական, լեզվաբանական ու արևելագիտական առարկաների դասախոս:

1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1933 թ.՝ դոկտորի աստիճան, 1935 թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1943 թ. հաստատվել է նորաստեղծ ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամների կազմում: Նա նաև Չեխովակիայի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր:

Նրա լեզվաբանական աշխատություններում ուսումնասիրված են հայոց լեզվի գրեթե բոլոր բնագավառները: Նրա հետազոտությունների ամենակարևոր բնագավառը եղել է հայերենի բառաքնությունը: Դրան նվիրված նրա մեծագույն գործը «Հայերեն արմատական բառարան»-ն է (Եր., 1926-1935), որն ընդգրկում է շուրջ 11 հազար արմատական բառ՝ իրենց բացատրությամբ, քերականական տեղեկություններով ու ստուգաբանությամբ:

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությանն է նվիրված նրա «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» տասհատորանոց մենագրությունը:

1937 թ. ենթարկվել է բռնաճնշումների՝ մեղադրվելով լրտեսության, հակահեղափոխական գործունեության մեջ: 1949-1950 թթ. հակամառականության մեղադրանքով վտարվել է համալսարանից, բայց 9 ամիս անց վերականգնվել է աշխատանքի:

Վախճանվել է 1953 թ. ապրիլի 16-ին Երևանում:

Մաշտոցի պողոտայի թիվ 43 շենքի դիմաց կանգնեցված է հուշասյուն:

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

HRACHYA ACHARYAN

Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on March 8, 1876, in Constantinople. He graduated from the local Central School, then in 1895 he left for Paris to study at the Sorbonne.

In 1898 he came to Transcaucasia and devoted himself to pedagogical and scientific activities. He has worked as a teacher in Etchmiadzin, Nor Nakhichevan, Shushi, Nor Bayazet, and Tabriz. In 1923 he was invited to YSU to deliver lectures in the Armenian Studies, Linguistics and Oriental Studies.

In 1925 he was awarded the title of professor, in 1933-the degree of Doctor, in 1935-the title of Honored Scientist of the Armenian SSR. In 1943 he was one of the founding members of the newly formed Academy of Sciences of the Armenian SSR. He was also a Corresponding Member of the Czechoslovak Academy of Sciences.

Almost all fields of the Armenian language have been studied in his linguistic works. The most important area of his research was the analysis of the vocabulary of the Armenian language. His greatest work dedicated to the above mentioned is “Armenian Etymological Dictionary” (Yerevan, 1926-1935). The dictionary includes about 11 thousand words with their explanations, grammatical information and etymology.

His ten-volume monograph “Complete Grammar of the Armenian Language, in Comparison with 562 Languages” is devoted to the historical-comparative study of the Armenian language.


In 1937 he was accused of espionage and counterrevolutionary activities. In 1949-1950 he was expelled from the university, but was reinstated nine months later.

He died on April 16, 1953, in Yerevan.

A monument is erected in front of the 43rd building on Mashtots Avenue.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ԱՐՄԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1882 թ. դեկտեմբերի 22-ին Լեռնային Ղարաբաղի Շուշիքենդ (այժմ՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշ) գյուղում: Սովորել է ծննդավայրի ծխական դպրոցում, ապա՝ Շուշիի հայկական սեմինարիայում: 1905 թ. ավարտել է Գևորգյան ճեմարանը: 1905-1907 թթ. Շուշիի հոգևոր սեմինարիայում և 1909-1920 թթ.

Երևանի թեմական դպրոցում դասավանդել է գրականության պատմություն և տեսություն:

1920 թ. հրավիրվել է Երևանի նորաստեղծ համալսարան որպես դասախոս: 1929 թվականից մինչև կյանքի վերջը եղել է հայ գրականության իր հիմնադրած ամբիոնի վարիչը: Մեծ ջանքեր է գործադրել գրականագիտական բարձրորակ կադրեր պատրաստելու, հայ գրականության պատմության ծրագրեր մշակելու և դասավանդումն արդիականացնելու ուղղությամբ:

1940 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

1943 թ., առանց ատենախոսության պաշտպանության, նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականին հաստատվել է նորաստեղծ ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամների կազմում:

Ծավալել է գրականագիտական-քննադատական գործունեություն՝ հայ իրականության մեջ արմատավորելով և առաջինը կիրառելով պոեզիայի, արձակի ու հրապարակախոսության գնահատման մեթոդաբանական տարրեր չափանիշներ: Այդ տեսանկյունից հատկանշական են նրա՝ Վահան Տերյանին, Միքայել Նալբանդյանին, Հովհաննես Թումանյանին, Շիրվանզադեին, Աբովյանին և այլոց նվիրված ստեղծագործությունները:

Վախճանվել է 1953 թ. հոկտեմբերի 6-ին Երևանում:

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ճեմարանում:

Երևանի Աբովյան փողոցի թիվ 32 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

ARSEN TERTERYAN

Doctor of Philological Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on December 22, 1882 in the village of Shushikend in Nagorno Karabakh (now Shosh village, Askeran Region, Artsakh Republic). He studied at the parish school of his birthplace, and then at the Armenian Seminary in Shushi. In 1905 he graduated from the Gevorgyan Seminary. He taught history and theory of the Armenian literature in 1905-1907 at the Shushi Spiritual Seminary and in 1909-1920-at the Diocesan School of Yerevan.

In 1920 he was invited to the newly established University of Yerevan as a lecturer. From 1929 until the end of his life, he was the head of the Chair of Armenian Literature. He was the founder of this chair. He made great efforts to train high-quality specialists in the field of literature, to develop programs in the history of Armenian literature and to modernize teaching.

In 1940 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

In 1943, without defending his dissertation, he was awarded the degree of Doctor of Philological Sciences. In the same year he was included in the founding staff of the newly established Academy of Sciences of the Armenian SSR.

He undertook literary-critical activities, being the first in the Armenian reality to apply methodological criteria for assessing poetry, prose and publicity. From that point of view, his works, dedicated to Vahan Teryan, Mikael Nalbandyan, Hovhannes Tumanyan, Shirvanzade, Abovyan and others are remarkable.

He died on October 6, 1953, in Yerevan.

His bronze bust is placed in the foyer of YSU Faculty of Armenian Philology. A commemorative plaque is attached to the wall of building No. 32 on Abovyan Street in Yerevan.





ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ

Հնագետ, պրոֆեսոր

Ծնվել է 1884 թ. փետրվարի 11-ին Լոռու Արդվի գյուղում: 1905 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1911 թ.՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական բանասիրության և պատմության բաժինը, վերադարձել Հայաստան և նվիրվել հայրենիքի նյութական մշակույթի ուսումնասիրությանը:

Ուսանողական տարիներից Ն. Մառի ղեկավարած արշավախմբի կազմում մասնակցել է Անիի պեղումներին: 1915 թ. գորավար Անդրանիկի կամավորական զնդի կազմում մասնակցել է ռազմական գործողությունների, դարձել նրա քարտուղարը:

1919 թ. ամռանը եկել է Երևան, ՀՀ կրթության և մշակույթի նախարար Նիկոլ Աղբալյանի հանձնարարությամբ ձեռնամուխ եղել հուշարձանների պահպանության բաժնի ստեղծմանը՝ դառնալով այդ հաստատության հիմնադիր ղեկավարը: 1920 թ. հրավիրվել է ԵՊՀ որպես դասախոս և աշխատել մինչև 1937 թ.: 1922 թ. համալսարանում հիմնել է Արևելքի պատմության և հնագիտության ամբիոն, ստեղծել հնագիտական աշխատանոց:

1923 թ. հրատարակել է հնագիտության հայերեն առաջին դասագիրքը: 1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նրա գիտական և վարչական հետազոտությունները կենտրոնացած էր Հնությունների պահպանության կոմիտեում (նախագահ՝ Ալ. Թամանյան), որի գիտական քարտուղարն էր:

1938 թ. մարտի 19-ին ձերբակալվել է, այսպես կոչված, «պրոֆեսորների գործով» հայրենիքի դավաճանության մեղադրանքով: 1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել է գնդակահարության, բայց հետո մահապատիժը փոխարինվել է ութ տարվա ազատազրկմամբ: Աքսորվել է Սիբիր, որտեղ 1942 թ. հունիսին կնքել է իր մահկանացուն:

1955 թ. արդարացվել է. գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:

Նրա բրոնզաձուլյ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

Երևանի Տերյան փողոցի թիվ 62 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

ASHKHARBEK KALANTAR

Archaeologist, Professor

He was born on February 11, 1884 in the village of Ardvi, Lori. In 1905 he finished the Nersisyan School in Tbilisi. In 1911 he graduated from Department of Armenian-Georgian Philology and History of the Faculty of Oriental Studies of Saint Petersburg University, returned to Armenia and devoted himself to the study of the material culture of the homeland.

From his student years he participated in the expedition supervised by N. Mar, in the excavations in Ani. In 1915 he took part in military operations as a member of General Andranik's volunteer regiment and became his secretary.

In 1919 he came to Yerevan. Based on the instructions of the Minister of Education and Culture of the Republic of Armenia Nikol Aghbalyan, he initiated the establishment of the department for the protection of monuments, becoming the founding head of the institution. In 1920 he was invited to YSU as a lecturer and worked until 1937. In 1922 he founded the Chair of History and Archeology of the East, established an archeological workshop.

In 1923 he published the first Armenian textbook of archeology. In 1925 he was awarded the title of professor.

His further scientific and administrative activities were concentrated in the Antiquities Protection Committee (chaired by Al. Tamanyan). Here he occupied the position of the Scientific Secretary.

In 1938, on March 19, he was arrested among other professors, as an “enemy of nation” (“the professors process”). In 1939, on September 6, he was sentenced to death, but was later sentenced to eight years in prison. He was exiled to Siberia, where he died in June of 1942.

He was justified in 1955. The case was dismissed due to lack of guilt.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.

A commemorative plaque is attached to the wall of the 62nd building on Teryan Street in Yerevan.





ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑՅԱՆ

*Քանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գի-
տության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1887 թ. հունվարի 1-ին Աշտարակում, որտեղ ստացել է սկզբնական, ապա Սանկտ Պետերբուրգում՝ գիմնազիական կրթություն: 1913 թ. ավարտել է տեղի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական բանասիրության բաժինը, վերադարձել Հայաստան և մինչև 1918 թ. հայագիտական տարբեր դասընթացներ ավանդել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որի փակվելուց հետո հաստատվել է Երևանում:

1918 թ. մայիսին գործուն մասնակցություն է ունեցել Սարդարապատի հերոսամարտին:

1921 թ. հրավիրվել է ԵՊՀ, որտեղ աշխատել է մինչև կյանքի վերջը՝ երկար տարիներ ղեկավարելով ընդհանուր լեզվաբանության ամբիոնը, դասավանդել գրաբար, հայերենի պատմահամեմատական քերականություն, ուրարտերեն, ընդհանուր լեզվաբանություն:

1930 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1942 թ.՝ դոկտորի գիտական աստիճան՝ առանց ատենախոսության պաշտպանության: 1943 թ. հաստատվել է ՀԽՍՀ նորաստեղծ ԳԱ հիմնադիր անդամների կազմում և ընտրվել հասարակագիտական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: 1950-1956 թթ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտը:

Գ. Ղափանցյանը նաև նշանավոր պատմաբան էր ու հնագետ: Նրա լեզվագիտական հետազոտությունները գրեթե միշտ հանգում էին պատմագիտական կարևոր եզրակացությունների:

Վախճանվել է 1956 թ. մայիսի 3-ին Երևանում:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

Երևանի Աբովյան փողոցի թիվ 32 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

GRIGOR GHAPANTSYAN

Doctor of Philological Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on January 1, 1887 in Ashtarak. He received primary education in his native town. And then studied in the gymnasium in St. Petersburg. In 1913 he graduated from the Department of Armenian-Georgian Philology of the Faculty of Oriental Languages of St. Petersburg University, returned to Armenia and up to 1918 conducted various courses in the field of the Armenian Studies at the Gevorgyan Seminary in Etchmiadzin. After the closure of the seminary he settled in Yerevan.

In May of 1918 he took an active part in the heroic Battle of Sardarapat.

In 1921 he was invited to YSU, where he worked until the end of his life, heading the Department of General Linguistics for many years, teaching Old Armenian, historical-comparative grammar of Armenian, Urartian, general linguistics.

In 1930 he was awarded the title of professor and in 1942, without defending the dissertation he was awarded the degree of the doctor of sciences. In 1943 he was elected a founding member of the newly established Academy of Sciences of the Armenian SSR and was elected Academic Secretary of the Department of Social Sciences. In 1950 - 1956 he was the Director of the Language Institute of the Academy of Sciences of the Armenian SSR.

As a prominent historian and archaeologist, his linguistic researches has almost always led to important historical conclusions.

He died in on May 3, 1956, in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building. A commemorative plaque is attached to the wall of the building No. 32 on Abovyan Street in Yerevan.





ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմաբան, պետական-կուսակցական գործիչ, փիլիսոփայական և պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին Շուշիում: Սովորել է տեղի ռեալական ուսումնարանում: 1906 թ. մեկնել է Գերմանիա, ուսանել Եմայի, Հալեի և Մյունխենի համալսարաններում: 1913 թ. ավարտել է Մյունխենի համալսարանը և ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան:

1913-1914 թթ. պաշտոնավարել է Շուշիի հայկական հոգևոր սեմինարիայում, 1914-1917 թթ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Դասախոսական աշխատանքին զուգահեռ գիտական հետազոտություններ է կատարել Էջմիածնի մատենադարանում և դրանց արդյունքները հրատարակել «Արարատ» ամսագրում ու առանձին գրքույկներով:

1920 թ. ղեկտեմբերին նշանակվել է ՀԽՍՀ լուսժողկոմ: Այդ պաշտոնում նրա ստորագրած առաջին փաստաթղթերից մեկը «Երևանի համալսարանի վերակազմության մասին» ղեկտեմբերի 17-ի հրամանն է: 1922-1927 թթ. եղել է ՀԿ(Բ)Կ ԿԿ առաջին քարտուղար: Աշխատանքից ազատվել է ազգայնական քաղաքականություն վարելու մեղադրանքով:

1921-1927 թթ. հայ ժողովրդի պատմություն և լեռնիկն է դասավանդել ԵՊՀ-ում: 1927-1936 թթ. եղել է Նյուքսկան մշակույթի ակադեմիայի Մոսկվայի բաժանմունքի տնօրեն, 1936 թվականից՝ ԽՍՀՄ պատմության ինստիտուտի փոխտնօրեն:

1937 թ. հուլիսի 8-ին ձերբակալվել է 1931 թ. հակահեղափոխական, աջ տրոցկիստական, ազգայնական կազմակերպության ղեկավարներից լինելու մեղադրանքով: 1943 թ. ապրիլի 15-ին վաղաժամկետ ազատվել է կալանքից և տեղափոխվել Ուզբեկստանի Յանգիյուլ քաղաք: 1949 թ. վերադարձել է Հայաստան և 5 տարի հարկադրված ապրել Կիրովականում (այժմ՝ Վանաձոր):

1967 թ. պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Վախճանվել է 1972 թ. հունիսի 11-ին Երևանում:

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

ASHOT HOVHANNISYAN

Historian, State Party Figure, Doctor of Philosophy and Historical Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR

He was born on June 17, 1887, in Shushi. He studied at the local secondary school. In 1906 he left for Germany to study at the universities of Jena, Halle and Munich. In 1913 he graduated from the University of Munich and received the degree of the Doctor of Philosophy.

In 1913 - 1914 he served at the Armenian Spiritual Seminary in Shushi, from 1914 to 1917 at the Gevorgyan Seminary in Etchmiadzin. In parallel with his teaching work, he conducted scientific research at the Matenadaran of Etchmiadzin and published the results in the journal Ararat and in separate books.

In December of 1920 he was appointed a member of the People's Committee on Enlightenment of the Armenian SSR. One of the first documents he signed in that position was the December 17 order on the reorganization of Yerevan University. In 1922 - 1927 he was the first secretary of the Central Committee of the Armenian Bolshevik Communist Party. He was fired on charges of pursuing a nationalist policy.

In 1921 - 1927 he taught the history of the Armenian people and Leninism at YSU. In 1927 - 1936 he was the director of the Moscow Branch of the Academy of Material Culture, and from 1936 he was the Deputy Director of the Institute of History of the USSR.

He was arrested on July 8, 1937 on charges of being a leader of an anti-revolutionary, right-wing Trotskyist, nationalist organization in 1931. In 1943, on April 15, he was released from pre-trial detention and transferred to Yangiul, Uzbekistan. In 1949 he returned to Armenia and was forced to live in Kirovakan (now Vanadzor) for 5 years.

In 1967 he was awarded the Order of Lenin.

He died on June 11, 1972, in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ

Քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ և Վր. ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1904 թ. ապրիլի 15-ին Թիֆլիսում: Ավարտել է Ներսիսյան դպրոցը, 1929 թ.՝ ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը, 1932 թ.՝ ասպիրանտուրան:

1932 թ. պաշտպանել է թեկնածուական, 1948 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1949 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1956 թ. ընտրվել է

ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971 թ.՝ ակադեմիկոս:

1932-1940 թթ. եղել է Պետական տերմինաբանական կոմիտեի գիտքարտուղար, 1941-1969 թթ.՝ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, 1947 թվականից՝ ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի (1964 թվականից՝ Հ. Աճառյանի անվան) ժամանակակից հայոց լեզվի, լեզվի մշակույթի և տերմինաբանության բաժնի վարիչ:

Զգալի է նրա ավանդը ժամանակակից հայերենի ուսումնասիրության գործում: Հեղինակ է հոդվածների ու գրքերի, որոնցից են՝ «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» (Եր., 1948), «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (Եր., 1955, 2009), «Հայոց լեզվի շարահյուսություն» (Եր., 1936. ունեցել է 40 հրատարակություն), «Խոսքի մասերի ուսմունքը» (Եր., 1939):

1961 թ. արժանացել է ՀԽՍՀ, 1970 թ.՝ Վր. ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1981 թ. սեպտեմբերի 16-ին Երևանում:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ճեմասրահում:

Երևանի Չարենցի փողոցի թիվ 4 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

GURGEN SEVAK

Doctor of Philological Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian and Georgian SSR

He was born on April 15, 1904, in Tbilisi. He graduated from Nersisyan School, in 1929 from the Department of Historiography of YSU Faculty of Pedagogy, in 1932 finished PhD courses.

In 1932 he defended his candidate thesis and in 1948 - doctoral dissertation. In 1949 he was awarded the title of professor, in 1956 was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1971 - Academician.

In 1932 - 1940 he was the Scientific Secretary of the State Terminology Committee, in 1941 – 1969 - Head of the Chair of the Armenian Language at YSU, from 1947 he was the Head of the Department of Modern Armenian Language, Culture and Terminology at the Institute of Language of the Academy of Sciences of the Armenian SSR (since 1964 the institute was called after Hr. Acharyan).

His contribution to the study of modern Armenian language is significant. He is the author of articles and books, including “A Brief History of Modern Armenian” (Yerevan, 1948), “Modern Armenian Language Course” (Yerevan, 1955, 2009), “Syntax of the Armenian Language” (Yerevan, 1936) (40 editions), “Teaching the Parts of Speech” (Yerevan, 1939).

In 1961 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR and in 1970 he was awarded the similar title in Georgian SSR.

He died on September 16, 1981, in Yerevan.

His bronze bust is placed in the foyer of YSU Faculty of Armenian Philology.

A commemorative plaque is attached to the wall of building No. 4 on Charents Street in Yerevan.





ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀԻՆՅԱՆ

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1906 թ. դեկտեմբերի 19-ին Ալեք-սանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1924 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1926 թ.՝ Երևանի արդյունաբերական տեխնիկումը և ընդունվել ԵՊՀ տեխնիկական ֆակուլտետ: Չորրորդ կուրսից փոխադրվել է Մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժին և այն ավարտել

1930 թ.: 1937 թ. ավարտել է ասպիրանտուրան:

1939 թ. պաշտպանել է թեկնածուական, 1944 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1944 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1945 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1947 թ.՝ ակադեմիկոս:

1929 թվականից աշխատել է ԵՊՀ-ում որպես մաթեմատիկայի ամբիոնի ասիստենտ, ապա՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար: 1938 թվականից եղել է ԵՊՀ բարձրագույն երկրաչափության ամբիոնի վարիչ, 1939 թվականից՝ Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, 1944-1978 թթ.՝ ԵՊՀ մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է գիտական բազմաթիվ աշխատությունների, այդ թվում՝ «Մոտավորությունների տեսություն կոմպլեքս տիրույթում» (Եր., 1960), «Անալիտիկ ֆունկցիաների տեսություն» (Եր., 1969), «Բարձրագույն մաթեմատիկայի ներածություն» (Եր., 1970) և այլ մենագրությունների: Նրա հետազոտությունները հիմնականում վերաբերում են կոմպլեքս տիրույթում մոտավորությունների տեսությանը:

Հայկական մաթեմատիկական գիտական դպրոցի հիմնադիրն է:

Եղել է ՀԽՍՀ VII և VIII գումարումների ԳԽ պատգամավոր:

1961 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1978 թ. մայիսի 14-ին Երևանում:

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

Երևանի Բաղրամյան պողոտայի նրա առանձնատան պատին ամրացված է հուշատախտակ:

ARTASHES SHAHINYAN

Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on December 19, 1906, in Alexandropol (now Gyumri). In 1924 he finished the secondary school, in 1926 graduated from YSU Technical College and entered YSU Technical Faculty. From the fourth year he continued his education at the physics and mathematics department of the Pedagogical Faculty and graduated in 1930. In 1937 he finished the PhD courses.

In 1939 he defended his candidate thesis and in 1944 - doctoral dissertation. In 1944 he was awarded the title of professor. In 1945 he was elected a Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1947 – Academician.

From 1929 he worked at YSU as an assistant at the Chair of Mathematics, then as the Acting Head of the chair. From 1938 he was the Head of YSU Chair of Higher Geometry, from 1939 - Dean of the Faculty of Physics and Mathematics, from 1944 to 1978 - Head of YSU Chair of Theory of Mathematical Analysis and Functions.

He is the author of numerous scientific works, including Theory of Approximation in the Complex Domain (Yerevan, 1960), Theory of Analytic Functions (Yerevan, 1969), Introduction to Higher Mathematics (Yerevan, 1970) and other monographs. His researches focus on the theory of approximation in the complex domain.

He is the founder of the Armenian Mathematical Science School.

He was a Deputy of the VII and VIII convocations of the Supreme Council of the Armenian SSR.

In 1961 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on May 14, 1978, in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.

A commemorative plaque is attached on the wall of his private house on Baghramyan Avenue in Yerevan.





ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակա-
դեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գոր-
ծիչ, ՀՀ Ազգային հերոս*

Ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 18-ին Թիֆլիսում, որտեղ ստացել է միջնակարգ կրթություն: 1928 թ. ավարտել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1931 թ.՝ ասպիրանտուրան: 1935 թ., առանց ատենախոսության պաշտպանության, նրան շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1931-1944 թթ. աշխատել է Լենինգրադի համալսարանում որպես դոցենտ, պրոֆեսոր, ապա՝ իր նախաձեռնությամբ հիմնադրված՝ ԽՍՀՄ-ում առաջին աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ: 1943 թ. հաստատվել է ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամների կազմում և դարձել առաջին փոխնախագահ: 1947 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ նախագահ և շուրջ կես դար ղեկավարել այն:

1946 թ. հիմնադրել է ԵՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնը և Բյուրականի աստղադիտարանը, որտեղ կատարված հետազոտությունները կանխորոշեցին 20-րդ դարի երկրորդ կեսի աստղաֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները:

Համաշխարհային գիտության մեջ նոր էջ են բացել նրա ներդրումները տեսական աստղաֆիզիկայի, արտագալակտիկական աստղագիտության, աստղերի և գալակտիկաների էվոլյուցիայի հետազոտության բնագավառներում:

1958 թվականից եղել է ԽՍՀՄ III-X գումարումների ԳԽ պատգամավոր:

Նրա բացառիկ վաստակը համաշխարհային գիտության զարգացման մեջ թե՛ հայրենիքում, թե՛ արտասահմանում գնահատվել է ըստ արժանվույն: 1994 թ. նրան շնորհվել է ՀՀ Ազգային հերոսի կոչում:

Վախճանվել է 1996 թ. օգոստոսի 12-ին Բյուրականում:

Նրա բրոնզաձուլյ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

VICTOR HAMBARDZUMYAN

Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the USSR and the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR, National Hero of the Republic of Armenia

He was born on September 18, 1908, in Tbilisi, where he received his secondary education. In 1928 he graduated from the Faculty of Physics and Mathematics of the Leningrad State University (now St. Petersburg). In 1931 he finished PhD courses. In 1935, without defending the dissertation, he was awarded the degree of Doctor of Physical and Mathematical Sciences.

In 1931-1944 he worked as an Associate Professor and Professor at the University of Leningrad, and then, on his own initiative, Head of the First Chair of Astrophysics in the USSR. In 1943 he became one of the founding members of the Academy of Sciences of the Armenian SSR and was appointed the first vice-president. In 1947 he was elected President of the Academy of Sciences of the Armenian SSR and headed it for about half a century.

In 1946 he founded YSU Chair of Astrophysics and Byurakan Observatory. The researches, made in this institution, predetermined the main directions of the development of astrophysics in the second half of the 20th century.

His contributions to the study of theoretical astrophysics, extragalactic astronomy, stellar and galaxy evolution have opened a new page in the world science.

From 1958 he was a Deputy of the Supreme Soviet of the USSR III-X convocations.

His outstanding contribution to the development of the world science has been appreciated both in the homeland and abroad. In 1994 he was awarded the title of National Hero of the Republic of Armenia.

He died on August 12, 1996, in Byurakan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գի-
տության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1913 թ. մարտի 16-ին Մեղրիում: 1928 թ. ավարտել է տեղի 7-ամյա դպրոցը, 1932 թ.՝ Կոլտնտեսային ուսումնարանը: 1930-1932 թթ. աշխատել է Մեղրիի կոլտնտեսությունում որպես հաշվետար, ապա՝ հաշվապահ: 1933 թվականից ուսանել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետում՝ միաժամանակ որպես հաշվապահ աշխատելով

ծխախտի ֆաբրիկայում:

1938 թ. ավարտել է համալսարանը, 1941 թ.՝ ասպիրանտուրան:

1941 թ. պաշտպանել է թեկնածուական, 1945 թ.՝ դոկտորական ատենա-
խոսություն: 1942 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1946 թ.՝ պրոֆեսորի կոչում:
1953 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ ակադեմիկոս:

1938 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ-ում. 1948-1950 թթ. եղել է Բանասիրության ֆակուլտետի դեկան, 1953-1956 թթ.՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1956-1986 թթ.՝ ընդհանուր լեզվաբա-
նության ամբիոնի վարիչ, 1968-1991 թթ.՝ Հայագիտական հետազոտություն-
ների կենտրոնի դեկավար, 1986-1991 թթ.՝ «Բանբեր Երևանի համալսարա-
նի» հանդեսի գլխավոր խմբագիր:

Թողել է գիտական հարուստ ժառանգություն, որը վերաբերում է ընդհա-
նուր լեզվաբանության, հայ լեզվաբանության պատմության, հայոց լեզվի
պատմության և համեմատական քերականության, բարբառագիտության,
ժամանակակից հայոց լեզվի, Արևելքի գրականության պատմության և այլ
հարցերի: Մեծ ավանդ ունի նաև հայ բառարանագրության բնագավառում:

1953 թ. ընտրվել է Երևանի քաղխորհրդի, 1980 և 1985 թթ.՝ ՀԽՍՀ ԳԽ
պատգամավոր:

1970 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1991 թ. դեկտեմբերի 29-ին Երևանում:

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշեն-
քի նախասրահում:

EDUARD AGHAYAN

Doctor of Philological Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on March 16, 1913, in Meghri. In 1928 he graduated from the local 7-year school and in 1932 he graduated from the Collective Farm College. In 1930-1932 he worked as an accountant in Meghri collective farm. From 1933 he studied at YSU Faculty of Historiography, at the same time working as an accountant at a tobacco factory.

In 1938 he graduated from the university, and in 1941 defended his candidate thesis.

In 1945 he defended his doctoral dissertation. In 1942 he was awarded the title of associate professor and in 1946 - professor. In 1953 he was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1982 - Academician.

From 1938 until the end of his life he worked at YSU. In 1948-1950 he was the Dean of the Faculty of Philology, from 1953 to 1956 Deputy Rector for Scientific Affairs, from 1956 to 1986 he was the Head of the Chair of General Linguistics, from 1968 to 1991 he was the Head of the Center for Armenian Studies Researches, from 1986 to 1991 he was the Editor-in-Chief of the Journal Banber of Yerevan University.

He has left a rich scientific legacy, which deals with general linguistics, history of Armenian linguistics, history of Armenian language and comparative grammar, dialectology, modern Armenian language, history of Eastern literature and other issues. He also has a great contribution in the field of Armenian lexicography.

In 1953 he was elected Deputy at the City Council of Yerevan. In 1980 and 1985 - Deputy of the Supreme Council of the Armenian SSR.

In 1970 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on December 29, 1991, in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ԳՈՒՐԳԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1913 թ. սեպտեմբերի 10-ին ներկայիս
ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում, որտեղ
ստացել է սկզբնական կրթություն: 1933 թ. ավար-
տել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) շինարարա-
կան տեխնիկումը:

1933-1934 թթ. աշխատել է Սեծ Պարնի գյուղի
միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, 1939 թ.
ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1939-1946 թթ.
ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատե-
րազմին: 1949 թ. ավարտել է ասպիրանտուրան:

1950 թ. պաշտպանել է թեկնածուական, 1963 թ.՝ դոկտորական ատենա-
խոսություն: 1964 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965 թ. ընտրվել է
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ ակադեմիկոս:

1950 թվականից անընդմեջ աշխատել է ԵՊՀ-ում: 1951 թ. նրա նախա-
ձեռնությամբ հիմնադրվել է տեսական ֆիզիկայի ամբիոնը, որը ղեկավարել
է մինչև 1985 թ.: 1967-1972 թթ. եղել է Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան:

Զբաղվել է տարրական մասնիկների ֆիզիկայի և տիեզերական ճառա-
գալթների հետազոտությամբ: Ստացված արդյունքներն ամփոփել է «Էներ-
գետիկական սպեկտրներ և տիեզերական ճառագայթման մասնիկների մի-
ջուկային փոխազդեցություններ» (Եր., 1958) մենագրության մեջ:

Հեղինակ է շուրջ 200 գիտական հոդվածների, մենագրությունների,
ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի:

Վախճանվել է 2000 թ. մարտի 26-ին Երևանում:

Նրա անունով է կոչվում ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնը, իսկ բրոն-
զաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրա-
հում:

Երևանի Չարենցի փողոցի թիվ 4 շենքի պատին ամրացված է հուշա-
տախտակ:

GURGEN SAHAKYAN

Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on September 10, 1913, in the present-day village of Sarnaghbyur, Shirak Province of the Republic of Armenia, where he received his primary education. In 1933 he graduated from Leninakan (now Gyumri) Construction College.

In 1933 - 1934 he worked as a teacher in the secondary school of Mets Parni village. In 1939 he graduated from YSU Faculty of Physics and Mathematics. In 1939 - 1946 he served in the Soviet Army, participated in the Great Patriotic War. In 1949 he finished PhD courses.

In 1950 he defended his candidate thesis and in 1963 - doctoral dissertation. In 1964 he was awarded the title of professor. In 1965 he was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1982 - Academician.

He has been working at YSU since 1950. In 1951, on his initiative, the Chair of Theoretical Physics was established, which he headed until 1985. In 1967 - 1972 he was the Dean of the Faculty of Physics.

He studied the physics and cosmic rays of elementary particles. The results were summarized in the monograph “The Energy Spectra and Nuclear Interactions of Space Radiation Particles” (Yerevan, 1958).


Author of about 200 scientific articles, monographs, textbooks and manuals.

He died on March 26, 2000, in Yerevan.

The Chair of Theoretical Physics of YSU is named after him, and his bronze bust is placed in the lobby of YSU Main Building.

A commemorative plaque is attached to the wall of building No. 4 on Charents Street in Yerevan.





ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆ

*Քանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գի-
տության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին ներկայիս ՀՀ Լո-
ռու մարզի Շահնագար (այժմ՝ Մեծավան) գյու-
ղում: 1937 թ. ավարտել է Երևանի թիվ 1 միջնա-
կարգ դպրոցը, 1941 թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆա-
կուլտետը:

1941-1943 թթ. մասնակցել է Հայրենական մեծ
պատերազմին:

1947 թ. պաշտպանել է թեկնածուական, 1955 թ.՝ դոկտորական ատենա-
խոսություն: 1958 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1968 թ. ընտրվել է
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974 թ.՝ ակադեմիկոս:

1945-1949 թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ավագ դասա-
խոս, 1948-1957 թթ.՝ օտար լեզուների, 1957-1970 թթ.՝ ռոմանագերմանական
բանասիրության ամբիոնի վարիչ, 1970 թվականից՝ ընդհանուր լեզվաբա-
նության ամբիոնի պրոֆեսոր, 1962 թվականից մինչև կյանքի վերջը՝ նաև
ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի տնօրեն և այնտեղ գործող լեզվաբանության
մասնագիտական խորհրդի նախագահ:

Նրա երկհատոր «Լեզվաբանության պատմություն» (Եր., 1960-1962,
2015), «Ընդհանուր և հայկական լեզվաբանություն» (Եր., 1978) հիմնարար
ուսումնասիրությունները հանգեցրին լեզվի համընդհանուր կադապարի
ստեղծման գաղափարին, որն իրականացրեց «Լեզվի համընդհանուր տե-
սություն» (ռուս., Մոսկվա, 1999, անգլ., 2003) մենագրության մեջ: Որպես
Եվրոպայի և ԱՄՆ-ի լեզվաբանական ընկերությունների անդամ՝ մեծ դեր է
խաղացել հայ լեզվաբանական դպրոցի ձեռքբերումները միջազգայնացնե-
լու գործում:

1965 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման,
1988 թ.՝ ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Վախճանվել է 2005 թ. հուլիսի 8-ին Երևանում:

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշեն-
քի նախասրահում: Հայ բանասիրության ֆակուլտետի լսարաններից մեկը
կոչվում է նրա անունով:

GEVORG JAHUKYAN

Doctor of Philological Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on April 1, 1920, in the village of Shahnazar (now Metsavan) in the present-day Lori Province of the Republic of Armenia. In 1937 he graduated from Yerevan Secondary School No. 1, graduated from YSU Faculty of Philology in 1941.

In 1941 - 1943 Participated in the Great Patriotic War.

In 1947 he defended his candidate thesis and in 1955 - doctoral dissertation. In 1958 he was awarded the title of professor. In 1968 was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1974 - Academician.

In 1945 - 1949 he was a senior lecturer at YSU Faculty of Philology, from 1948 to 1957 he was the Head of the Department of Foreign Languages, from 1957 to 1970 he was the Head of the Chair of Romance and Germanic Philology, from 1970 he was the Professor of the Chair of General Linguistics, from 1962 to the end of his life he was the Director of the Institute of Language and Chairman of the Professional Council of Linguistics of the Academy of Sciences of the Armenian SSR.

His two-volume “History of Linguistics” (Yerevan, 1960 - 1962, 2015) and “General and Armenian Linguistics” (Yerevan, 1978) led to the idea of creating a common language model, which was implemented in the monograph “General Theory of Language” (Russian, Moscow, 1999, English, 2003). As a member of the Linguistic Society of Europe and the United States, he has played an important role in the internationalization of the achievements of the Armenian Linguistic School.

In 1965 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR, and in 1988 the State Prize of the Armenian SSR.

He died on July 8, 2005, in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building, one of the classrooms of the Faculty of Armenian Philology is named after him.





ԳՐԻԳՈՐ ՉՈՒԲԱՐՅԱՆ

Իրավաբան, հրապարակախոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1888 թ. հուլիսի 6-ին Նոր Նախիջևանի (այժմ՝ Դոնի Ռոստով) հայաբնակ Թովտի գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Նոր Նախիջևանում, ապա՝ ընդունվել Յարոսլավլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ և միաժամանակ դրսեկությամբ ավարտել Մոսկվայի համալսարանի պատմագրական ֆակուլտետը: 1913 թ. վերադարձել է Դոնի Ռոստով և զբաղվել

փաստաբանական ու լրագրողական գործունեությամբ:

1915 թ. ընդունվել է ՀՅԴ կուսակցության շարքերը:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո մշտական բնակություն է հաստատել Երևանում:

1920 թ. հրավիրվել է ԵՊՀ և գործուն մասնակցություն ունեցել համալսարանի վերակառուցման աշխատանքներին: 1921 թ. հունվարի 23-ին համալսարանի վերաբացման հանդիսությունից հետո կարդացել է առաջին դասախոսությունը՝ «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով:

1937 թ. հուլիսի 15-ին ձերբակալվել է ՀՅԴ կուսակցության ղեկավար լինելու մեղադրանքով: 1939 թ. սեպտեմբերի 2-ին դատապարտվել է գնդակահարության, սակայն 1940 թ. հունվարի 5-ին դատավճիռը բեկանվել է, և նա դատապարտվել է 8 տարվա ազատազրկման: 1947 հունվարի 15-ին ազատվել է պատժի կրումից՝ առանց Երևանում բնակվելու իրավունքի: Ծպտյալ բնակվել է Երևանում:

1957-1962 թթ. շարունակել է աշխատանքը ԵՊՀ-ում:

Մեծ ավանդ ունի հայ իրավաբանական գիտական տերմինաբանության ստեղծման գործում: 1961 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1962 թ. սեպտեմբերի 6-ին Երևանում:

Նրա բրոնզաձուլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

GRIGOR CHUBARYAN

Lawyer, Publicist, Honored Scientist of the Armenian SSR

He was born on July 6, 1888, in the village of Topti, an Armenian-populated village in Rostov-on-Don, New Nakhichevan. He received his secondary education in New Nakhichevan, then entered the Faculty of Law of Yaroslavl University and at the same time graduated from the Faculty of History of Moscow University. In 1913 he returned to Rostov-on-Don and practiced law and journalism.

In 1915 he joined the ranks of the ARF party.

After the establishment of the Soviet rule in Armenia he settled in Yerevan.

In 1920 he was invited to YSU and took an active part in the reconstruction of the university. In 1921 after the reopening ceremony of the university on January 23, he delivered the first lecture on “Soviet Law and the People’s University of Armenia”.

In 1937 he was arrested on July 15 on charges of leading the ARF party. In 1939 he was sentenced to death by firing squad on September 2, but in 1940, on January 5, the sentence was overturned and he was sentenced to 8 years in prison. On January 15, 1947, he was released from prison without the right to reside in Yerevan. Secretly lived in Yerevan.


In 1957 - 1962 he continued his work at YSU.

He has made a great contribution to the creation of Armenian legal scientific terminology. In 1961 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on September 6, 1962, in Yerevan.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building.





ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1922 թ. հոկտեմբերի 15-ին Բաղդադում: Ծնողները մազապուրծ էին եղել 1915 թ. Մեծ եղեռնից: 1944 թ. ավարտել է ԵրԳԻ հիդրոտեխնիկական և շինարարական ֆակուլտետը, 1947 թ.՝ ասպիրանտուրան:

1948 թ. պաշտպանել է թեկնածուական, 1955 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1962 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1986 թ.՝ ակադեմիկոս:

Աշխատանքային գործունեությունն սկսել է Բյուրականի աստղադիտարանում: 1949-1979 թթ. աշխատել է ԵԴՀ աստղաֆիզիկայի ամբիոնում: 1992-2004 թթ. եղել է Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտի տնօրեն:

Աշխատանքները վերաբերում են միջաստղային տարածությունում ճառագայթային հավասարակշռության խնդիրներին, աստղասփյուռների ձևաբանական և կինեմատիկական ուսումնասիրությանը, դիֆուզային մոլորակաձև միգամածություններին: Ստեղծել է գիտական մի շարք սարքեր ու օպտիկական համակարգեր: Նրա անվան հետ է կապված «Օրիոն» տիեզերական աստղադիտարանի օպտիկական համակարգի աշխատանքի սկզբունքի, ավտոմատ կառավարման մեթոդիկայի ստեղծումը:

Գառնիի տիեզերական աստղագիտության լաբորատորիայում նրա ղեկավարությամբ իրենց նախաթիչքային պատրաստումն են անցել խորհրդային մի քանի տասնյակ տիեզերագնացներ:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածների և բազմաթիվ մենագրությունների ու գրքերի:

1950 թ. ընտրվել է Միջազգային աստղագիտական միության անդամ:

1975 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 2014 թ. փետրվարի 23-ին Երևանում:

GRIGOR GURZADYAN

Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on October 15, 1922, in Baghdad in the family of the parents who survived the genocide in 1915. In 1944 graduated from the Faculty of Hydraulic Engineering and Construction of Yerevan Polytechnic Institute, in 1947 – finished PhD courses.

In 1948 he defended his candidate thesis, in 1955 - doctoral dissertation. In 1962 he was awarded the title of professor. In 1965 he was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1986 - Academician.

He started his career at the Byurakan Observatory. In 1949 - 1979 worked at YSU Chair of Astrophysics. In 1992 - 2004 he was the Director of the Garni Institute of Space Astronomy.

His researches deals with the problems of radial-equilibrium in interstellar space, the morphological and kinematic study of starbursts, diffuse planetary nebulae. He has created a number of scientific devices and optical systems. His name is associated with the creation of the principle of operation of the optical system of the “Orion” Space Observatory, automatic control methods.

Several dozen space astronauts underwent pre-flight training under his guidance at the Garni Space Astronomy Laboratory.

Author of more than 200 scientific articles, numerous monographs and books.

In 1950 he was elected a member of the International Astronomical Union.

In 1975 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on February 23, 2014, in Yerevan.





ԷԴՎԱՐԴ ԶՐԲԱՇՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գի-
տության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1923 թ. սեպտեմբերի 24-ին Երևանում:
1941 թ. ավարտել է թիվ 23 միջնակարգ դպրոցը և
մեկնել զինվորական ծառայության: Մասնակցել է
Հայրենական մեծ պատերազմին, որի ընթացքում
ծանր վիրավորվել է և կորցրել ոտքը: Ձորացրվե-
լուց հետո՝ 1950 թ., ավարտել է ԵՊՀ բանասիրու-
թյան ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության

բաժինը:

1954 թ. պաշտպանել է թեկնածուական, 1965 թ.՝ դոկտորական ատենա-
խոսություն: 1964 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1967 թ.՝ պրոֆեսորի կոչում:
1974 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ ակադեմիկոս:

1950-1972 թթ. դասախոսել է ԵՊՀ հայ գրականության (այժմ՝ ակադ.
Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության) ամբիոնում:
1972-1985 թթ. ղեկավարել է նորաստեղծ գրականության տեսության և գե-
ղագիտության ամբիոնը: 1977-1999 թթ. եղել է նաև ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտի տնօրեն:

Հեղինակ է ավելի քան երկու տասնյակ մենագրությունների, հարյուրա-
վոր հոդվածների: Նախաձեռնել ու խմբագրել է «Թումանյան. Ուսումնա-
սիրություններ» շարքի հինգհատորյակը, Հովհ. Թումանյանի երկերի ակա-
դեմիական տասհատորյակը, ինչպես նաև հայ այլ դասականների երկերի
հրատարակություններ: Մեծ է նրա դերը «Հայ նոր գրականության պատ-
մություն» բազմահատորյակի ստեղծման և հրատարակման գործում:

Հեղինակել է նաև «Գրականության տեսություն» բուհական դասագիր-
քը, որն ունեցել է 7 հրատարակություն:

1970 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:
Վախճանվել է 1999 թ. օգոստոսի 10-ին Երևանում:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ հայ բանասիրության ֆա-
կուլտետի ճեմարանում:

Երևանի Ռուսթավելի փողոցի թիվ 25/1 շենքի տարածքում կանգնեցված
է հուշասյուն:

EDVARD JRBASHYAN

Doctor of Philological Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on September 24, 1923, in Yerevan. In 1941 he graduated from secondary school No. 23 and left for military service. He participated in the Great Patriotic War, was seriously wounded and lost his leg. After demobilization in 1950 graduated from YSU Faculty of Philology, Department of Armenian Language and Literature.

In 1954 he defended his candidate thesis and in 1965 - doctoral dissertation. In 1964 he was awarded the title of associate professor, in 1967 - professor. In 1974 he was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1982 - Academician.

In 1950 - 1972 delivered lectures at YSU Chair of Armenian Literature (now it is named after Academician Hr. Tamrazyan, History of Armenian Literature). In 1972 - 1985 headed the newly formed Chair of Theory and Aesthetics. In 1977 - 1999 he was the Director of the M. Abeghyan Institute of Literature of the Armenian SSR Academy of Sciences.

Author of more than two dozen monographs and hundreds of articles. Initiated and edited the five-volume edition "Tumanyan. Researches", the academic ten-volume edition of H. Tumanyan's works, as well as publications of works by other Armenian classics. His role in the creation and publication of the multi-volume "History of New Armenian Literature" is great.

He is also the author of the textbook "Theory of Literature", which has had 7 editions.

In 1970 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on August 10, 1999, in Yerevan.

His bronze bust is placed in the foyer of YSU Faculty of Armenian Philology.

A monument is erected in the area of 25/1 Rustaveli Street, Yerevan.





ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1926 թ. սեպտեմբերի 6-ին ՀԽՍՀ Իջևանի շրջանի (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզ) Աչաջուր գյուղում: 1943 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1948 թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը, 1951 թ.՝ ԵՊՀ ասպիրանտուրան:

1955 թ. պաշտպանել է թեկնածուական, 1963 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1964 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1952-1955 թթ. աշխատել է Հայաստանի պետական հրատարակչությունում որպես ավագ խմբագիր:

1968-1980 թթ. եղել է ԵՊՀ խորհրդահայ (այժմ՝ հայ նորագույն) գրականության, 1980-2001 թթ.՝ հայ գրականության (այժմ՝ ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության) ամբիոնի վարիչ:

Հեղինակ է ավելի քան 300 գիտական հոդվածների և ուսումնասիրությունների, 40 մենագրության, ուսումնական ձեռնարկների, դպրոցական ու բուհական դասագրքերի:

Կարևոր դերակատարություն է ունեցել արևմտահայ քնարերգուների, մանավանդ Մեծ եղեռնին զոհ դարձած հայ բանաստեղծների ստեղծագործությունների արժևորման, ինչպես նաև 1930-ականներին բռնաճնշումների զոհ դարձած գրողների իրավունքների վերականգնման գործում:

1970 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Վախճանվել է 2001 թ. փետրվարի 9-ին Երևանում:

Նրա կիսանդրին դրված է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ճեմարանում:

Երևանի Տեղյան փողոցի թիվ 59 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

HRANT TAMRAZYAN

Doctor of Philological Sciences, Professor, Academician of NAS RA, Honored Scientist of the Armenian SSR

He was born on September 6, 1926, in the village of Achajur, Ijevan Region of the Armenian SSR (now the RA Tavush Province). In 1943 graduated from the local secondary school, in 1948 - from YSU Faculty of Philology, in 1951 finished PhD courses.

In 1955 defended his candidate thesis, in 1963 - doctoral dissertation. In 1964 was awarded the title of professor. In 1986 was elected a Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1996 he was elected an Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

In 1952 - 1955 worked as a senior editor at the State Publishing House of Armenia.

In 1968 - 1980 he was the Head of the Chair of Soviet Armenian Literature at YSU (now Armenian Modern Literature), and from 1980 to 2001 he was the Head of the Chair of Armenian Literature (now Chair of History of Armenian Literature named after Hrant Tamrazyan).

Author of more than 300 scientific articles, studies, 40 monographs, textbooks, school and university textbooks.


He played a key role in valuing the works of Western Armenian lyricists, especially Armenian poets who fell victim to the Armenian Genocide, as well as in restoring the rights of writers who fell victim to repressions in the 1930s.

In 1970 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on February 9, 2001, in Yerevan.

His bust is placed in the foyer of YSU Faculty of Armenian Philology (8th building), and a commemorative plaque is attached to the wall of building No. 59 on Teryan Street in Yerevan.





ԱՐՄԵՆ ԹԱԽՏԱԶՅԱՆ

*Կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1910 թ. հունիսի 10-ին Շուշիում:
1929-1930 թթ. սովորել է ԵՊՀ կենսաբանության
ֆակուլտետում: 1932 թ. ավարտել է Թիֆլիսի
մերձարևադարձային մշակաբույսերի համամիութ-
նական ինստիտուտը:

1943 թ. պաշտպանել է դոկտորական ատենա-
խոսություն: 1944 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի
կոչում: 1945 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971 թ.՝ ակադեմի-
կոս, 1966 թ.՝ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 1972 թ.՝ ակադեմիկոս:

1932-1935 թթ. եղել է Հայաստանի բնապատմական թանգարանի գի-
տաշխատող, 1935-1943 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կենսա-
բանության ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1938-1948 թթ.՝ ԵՊՀ մոր-
ֆոլոգիայի և կարգաբանության ամբիոնի վարիչ, 1943 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ բու-
սաբանության ինստիտուտի էվոլյուցիոն մորֆոլոգիայի և հնէաբանության
բաժնի վարիչ, 1944-1948 թթ.՝ նաև ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստի-
տուտի տնօրեն, 1949-1961 թթ.՝ Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ)
պետական համալսարանի բարձրակարգ բույսերի ամբիոնի պրոֆեսոր,
1951-1954 թթ.՝ նույն համալսարանի կենսաբանության և հողագիտության
ֆակուլտետի դեկան, 1954-1977 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստի-
տուտի բարձրակարգ բույսերի բաժնի վարիչ, 1977-1986 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ Լե-
նինգրադի Վ. Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի բարձրա-
կարգ բույսերի ֆլորայի, կարգաբանության և էվոլյուցիայի բաժնի վարիչ,
1977-1986 թթ.՝ նաև նույն ինստիտուտի տնօրեն, 1986 թվականից՝ տնօրե-
նության խորհրդական:

Հեղինակ է շուրջ 400 աշխատության, այդ թվում՝ 20 մենագրության,
որոնք հրատարակվել են աշխարհի տարբեր լեզուներով:

Եղել է մի շարք երկրների (ՌԴ, ԱՄՆ, Գերմանիա, Նորվեգիա և այլն)
ակադեմիկների իսկական անդամ:

1967 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 2009 թ. նոյեմբերի 13-ին Սանկտ Պետերբուրգում:

ARMEN TAKHTAJYAN

Doctor of Biological Sciences, Professor, Academician of the USSR Academy of Sciences and Armenian SSR Academy of Sciences, Honored Scientist of the Armenian SSR

He was born on June 10, 1910, in Shushi. In 1929 - 1930 he studied at YSU Faculty of Biology. In 1932 graduated from the All-Union Institute of Subtropical Cultures in Tbilisi.

In 1943 defended his doctoral dissertation. In 1944 was awarded the title of professor. In 1945 was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, Academician - in 1971, Corresponding Member of the Academy of Sciences of the USSR in 1966, and Academician in 1972.

In 1932 - 1935 he was a researcher at the Museum of Nature and History of Armenia, from 1935 to 1943 – senior researcher at the Institute of Biology of the Armenian Branch of the Academy of Sciences of the USSR. From 1938 to 1948 he was the Head of YSU Chair of Morphology and Discipline, in 1943 was Head of the Department of Evolutionary Morphology and Archeology of the Institute of Plant Protection of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1944 – 1948 was also the Director of the Institute of Botany of the Academy of Sciences of the Armenian SSR, from 1949 to 1961 he was a professor at the Chair of High Quality Plants of the Leningrad (now St. Petersburg) State University, from 1951 to 1954 he was the Dean of the Faculty of Biology and Soil Science at the same university, in 1954 - 1977 - Dean of the Faculty of High Quality Plants of the Institute of Botany of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1977 - 1986 – Head of the Division of High Quality Flora, Discipline and Evolution of the Institute of Botany of Leningrad named after V. Komarov, also occupied the position of the director in the same period, beginning with 1986 – advisor to the management of the institute.

He is the author of about 400 works, including 20 monographs, which have been published in various languages around the world.

He has been a full member of the academies of a number of countries (Russia, USA, Germany, Norway, etc.).

In 1967 was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on November 13, in 2009, in St. Petersburg.





ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆ

*Կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս*

Ծնվել է 1907 թ. հունվարի 25-ին Աշտարակում:
1928 թ. ընդունվել է ԵՊՀ և գործուղվել Մոսկվայի
Կ. Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակա-
դեմիա, որը 1932 թ. ավարտելուց հետո ընդունվել է
ասպիրանտուրա: 1935 թ. տեղափոխվել է ԽՍՀՄ
ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտ:

1936 թ. պաշտպանել է թեկնածուական, 1940 թ.`
դոկտորական ատենախոսություն: 1944 թ. նրան
շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1960 թ. ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ, 1965 թ.` ՀԽՍՀ
ԳԱ ակադեմիկոս:

1935 թվականից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Բախի անվան կենսաքի-
միայի ինստիտուտում, 1946-1959 թթ. եղել նույն ինստիտուտի փոխտնօրեն,
1959-1963 թթ.` ԽՍՀՄ ԳԱ կենսաբանական բաժանմունքի ակադեմիկոս
քարտուղար, 1963-1966 թթ.` նախագահության անդամ և գիտական քար-
տուղար:

1945-1950 թթ. ԵՊՀ-ում կարդացել է էնզիմոլոգիայի հատուկ դասընթաց:

Զբաղվել է մշակաբույսերի չորադիմացկուն տեսակների ստացման,
բույսերի ենթաբջջային կառուցվածքի, կենդանի բջիջների վրա ճառագայ-
թաակտիվության ազդեցության հիմնախնդիրների հետազոտությամբ և ազ-
րոտելիսնիկական մի շարք միջոցառումների մշակմամբ:

Նրա ղեկավարությամբ տիեզերական կենսաբանության և բժշկության
բնագավառներում ուսումնասիրվել են ճառագայթման, անկշռության, Երկրի
ձգողության և այլ գործոնների առնչվող հարցեր: Ն. Սիսակյանն իրավամբ
համարվում է տիեզերական կենսաբանության հիմնադիրներից:

Զեկուցումներով բազմիցս հանդես է եկել միջազգային գիտաժողովնե-
րում ու համաժողովներում:

Վախճանվել է 1966 թ. մարտի 2-ին Մոսկվայում:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշեն-
քի նախասրահում, անունը ոսկե տառերով գրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքի
պատին, իսկ Մոսկվայի Ա. Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտի
շենքի պատին փակցված է հուշատախտակ: Նրա անունով է կոչվում Լուս-
նի խառնարաններից մեկը:

NORAYR SISAQYAN

Doctor of Biological Sciences, Professor, Academician of the USSR Academy of Sciences and Armenian SSR Academy of Sciences

He was born on January 25, 1907, in Ashtarak. In 1928 was admitted to YSU and continued education at the Timiryazev Agricultural Academy. After the graduation, in 1932, he continued his education (PhD courses). In 1935 continued the educational process at the Institute of Biochemistry of the USSR Academy of Sciences.

In 1936 he defended his candidate thesis, in 1940 - doctoral dissertation. In 1944 was awarded the title of professor. In 1960 was elected an Academician of the USSR Academy of Sciences and in 1965 – Academician of the Academy of Sciences of the Armenian SSR.

From 1935 he worked at the A. Bach Institute of Biochemistry of the USSR Academy of Sciences. In 1946 – 1959 he occupied the position of the director of this institute. From 1959 to 1963 was the Academic Secretary of the of the Biological Department of the USSR Academy of Sciences, from 1963 to 1966 he was a member and scientific secretary of the presidium.

In 1945 - 1950 delivered a special course on enzymology at YSU.

He has been involved in research related to the drought-resistant crops, plant cell structure, the impact of radiation on living cells and has developed a number of agronomic techniques.


Issues related to the radiation, weightlessness, gravity and other factors have been studied in the field of cosmic biology and medicine under his supervision. He is truly one of the founders of space biology.

He has made numerous reports at the international conferences and seminars.

He died on March 2, 1966, in Moscow.

His bronze bust is placed in the lobby of YSU Main Building. A plaque is attached to the wall of the Bach Institute of Biochemistry in Moscow, and his name is written in gold letters on the wall of the UNESCO building. One of the craters of the Moon is named after him.





ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

Հայ արևելագետ, հնագետ, հասարակական գործիչ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1935), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս և առաջին նախագահ (1943-1947), Լոնդոնի հնագիտական ընկերության պարվավոր անդամ (1944), Իրանի ԳԱ քոթակից անդամ (1945)

Հովսեփ Օրբելին ծնվել է 1887 թ. մարտի 20-ին Քութայիս քաղաքում: 1904 թ. ընդունվել է Սանկտ Պետերբուրգի Կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետ: Հունահռոմեական հնություններից զատ՝ ուսանող «դասականագետին» ավելի ու ավելի էր հրապուրում Արևելքը, մասնավորապես Հայաստանը, Վրաստանը և Իրանը, նրանց պատմությունն ու մշակույթը:

1906 թ. ամռանը Օրբելին առաջին անգամ Անի եկավ՝ մասնակցելու քաղաքամայր Անիի պեղումներին: Օրբելու համար Անիի պեղումները հնագիտական հիանալի դպրոց են եղել: Օրբելին հնագիտական պեղումներ է կատարել նաև Վանում, Գառնիում, Աղթամարում, Ամբերդում և Դադաստանում:

1918-1920 թթ. Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի տպարանի տնօրենն էր:

Օրբելու հիմնարար աշխատանքները վկայում են լեզվի, բանահյուսության, պատմության, հնագիտության, ազգագրության և արվեստի պատմության բնագավառներում նրա բացառիկ գիտելիքների մասին:

1920-1951 թթ. աշխատել է Պետական Էրմիտաժում. սկզբին եղել է Էրմիտաժի ֆոնդապահ, այնուհետև՝ Արևելքի բաժնի հիմնադիր վարիչ, իսկ 1934 թվականից՝ Էրմիտաժի տնօրեն: Օրբելին առանց Էրմիտաժի չէր պատկերացնում իր կյանքը: Հայրենական մեծ պատերազմի սկզբում անձամբ ղեկավարել է Էրմիտաժի գանձերի տարահանումը, իսկ պատերազմից հետո՝ դրանց հետ տեղափոխման աշխատանքները: Որպես վկա՝ նա հանդես է եկել Նյուրնբերգյան դատավարության ժամանակ: 1943 թ. հիմնադրել և եղել է Հայկական ԽՍՀ ԳԱ առաջին նախագահը (4 տարի):

Վախճանվել է 1961 թ. Սանկտ Պետերբուրգում:

Նրա կիսանդրին տեղադրված է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի բակում:

HOVSEP ORBELI

Armenian Specialist in Oriental Studies, Archaeologist, Public Figure, Academician of the USSR Academy of Sciences (1935), Academician and the First President of the Academy of Sciences of the Armenian SSR (1943-1947), Honorary Member of the London Archaeological Society (1944), Corresponding Member of the Iranian Academy of Sciences (1945)

Hovsep Orbeli was born on March 20, 1887, in Kutaisi. In 1904 was admitted to Faculty of Philology and History of St. Petersburg Imperial University. In addition to Greco-Roman antiquities, he was starting to show more and more interest towards the history and culture of Armenia, Georgia, Iran.

In summer of 1906 Orbeli came to Ani for the first time to take part in the excavations in this Ani. The excavations at Ani were a great archeological school for Orbeli. Orbeli has also carried out archeological excavations in Van, Garni, Akhtamar, Amberd, and Dagestan.

In 1918-1920 he was the director of the Publishing House of the Russian Academy of Sciences.

Orbeli's fundamental works testify about his exceptional knowledge of language, folklore, history, archeology, ethnography and art history.

From 1920 to 1951 he worked at the State Hermitage, first as a fund keeper, then as the founder and head of the Department of the East, and in 1934 as the Director of the Hermitage. Orbeli could not have imagined his life without Hermitage. In the beginning of the Great Patriotic War, he controlled the evacuation of the Hermitage's treasures, and after the war, he relocated them. He appeared as a witness during the Nuremberg trials. In 1943 he founded and was the first president of the Armenian SSR Academy of Sciences for four years.

He died in 1961 in St. Petersburg. His bust is placed in the yard of YSU Faculty of Oriental Studies.





ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

Լեզվաբան, բառարանագիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1857 թ. նոյեմբերի 25-ին Ախալցխայում: Ավարտել է տեղի Կարապետյան ծխական դպրոցը, 1878 թ.՝ Գևորգյան ճեմարանը, 1889 թ.՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-սանսկրիտ և հայ-վրացական բաժինները, ստացել բանասիրական գիտությունների քեկնաժուի գիտական

աստիճան:

Երկար տարիներ հայոց լեզու և գրականություն է դասավանդել հայկական դպրոցներում: 1919 թ. հրավիրվել է դասախոսական աշխատանքի և Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) բացված համալսարանում 1920 թ. փետրվարի 1-ին կարդացել առաջին դասախոսությունը:

ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր ակադեմիկոսներից էր:

Անհերքելի փաստերով հիմնավորել է, որ Մովսես Խորենացին իրոք 5-րդ դարի հեղինակ է, իսկ նրա «Հայոց պատմությունը»՝ միանգամայն վստահելի սկզբնաղբյուր:

Լեզվաբանական կարևոր աշխատություններից են «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» (Թիֆլիս, 1891) և «Գրաբարի համաձայնությունը» (Թիֆլիս, 1892) մենագրությունները: 1944-1945 թթ. հրատարակել է 120 հազար բառ ընդգրկող բառահատոր «Հայերեն բացատրական բառարանը», որը հայ բառարանագրության կոթողային երկերից է, առաջինը իր տեսակի մեջ (վերահրատարակվել է 2010 թ.): 1946 թ. այն արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի:

Զբաղվել է նաև թարգմանությամբ. թարգմանել է Շեքսպիրի «Լիր թագավոր» (1887) և «Մակբեթ» (1892) ողբերգությունները, Գ. Էրերսի «Մարդ եմ» վեպը (1898):

Վախճանվել է 1947 թ. հուլիսի 21-ին Երևանում:

STEPAN MALKHASYANTS

Linguist, lexicographer, Doctor of Philological Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR

He was born on November 25, 1857, in Akhaltsikhe. He graduated from the local Karapetyan Parish School, in 1878 from the Gevorgyan Seminary, in 1889 from the Armenian-Georgian and Armenian-Sanskrit departments of the Faculty of Oriental Languages of the University of St. Petersburg, and received the degree of Candidate of Philological Sciences.

For many years he taught Armenian language and literature at Armenian schools. In 1919 he was invited to work as a lecturer at the newly opened University in Alexandropol (now Gyumri). He delivered his first lecture on February 1, 1920.

He is one of the founding academics of the Academy of Sciences of the Armenian SSR.

He proved with undeniable facts that Movses Khorenatsi is really the author of the 5th century, and his “Armenian History” is a completely reliable source.

Among the important linguistic works are the monographs “The Declension, Conjugation and Prepositions of Grabar” (Tbilisi, 1891) and “The Grabar Agreement” (Tbilisi, 1892). In 1944-1945 he published the four-volume book “Armenian Explanatory Dictionary”, which includes 120,000 words, which is one of the monumental works of the Armenian lexicography, the first in its kind (republished in 2010). In 1946 it was awarded the USSR State Prize.

He was also engaged in translation work. He translated the tragedies of Shakespeare “King Lear” (1887) and “Macbeth” (1892). Also he made the translation of the novel “Homo Sum” by Georg Ebers (1898).

He died on July 21, 1947, in Yerevan.



ՄԿՐՏԻՉ ՄԿՐՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀԽՍՀ
գիտության վաստակավոր գործիչ*



Ծնվել է 1907 թ. հոկտեմբերի 9-ին Վանում: 1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ բազմաթիվ հայերի հետ 1919 թ. հանգրվանել է Երևանում: Ավարտելով Երևանի թիվ 2 միջնակարգ դպրոցը՝ մեկնել է Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ) և աշխատել որպես ուսուցիչ:

1930 թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը, 1933 թ.՝ ասպիրանտուրան և զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ:

1939 թ. պաշտպանել է թեկնածուական, 1945 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1946 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1956 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

1941-1947 և 1957-1976 թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկան, 1954-1980 թթ.՝ հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ, 1947-1953 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն:

1938 թ. հրատարակել է «XIII-XVIII դդ. հայ աշխարհիկ գրականություն» ժողովածուն: «Գրիգոր Նարեկացի» մենագրության մեջ (Եր., 1955) վերագնահատել է հանճարեղ մտածողի ստեղծագործության ազգային ու համամարդկային արժեքը: Հեղինակ է «Մովսես Խորենացի. կյանքն ու ստեղծագործությունը» (ռուս., Եր., 1969, հայ., 1970), «Իսահակյանի հումանիզմը» (Եր., 1975) և «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը» (Եր., 1981) մենագրությունների, ինչպես նաև «Էջեր հայ վիպասանության պատմությունից» (Եր., 1957) և «Գրականության պատմության հարցեր» (Եր., 1982) աշխատությունների:

Հեղինակել է նաև բուհական և դպրոցական դասագրքեր:

1961 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Վախճանվել է 1983 թ. հոկտեմբերի 26-ին Երևանում:

MKRTICH MKRYAN

Doctor of Philological Sciences, Professor, Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on October 9, 1907, in Van. With the many Armenians who survived during the Great Genocide of 1915, in 1919 he took refuge in Yerevan. After graduating from the secondary school No. 2, he left for Nor Bayazet (now Gavar) to work as a teacher.

In 1930 he graduated from YSU Faculty of History, in 1933 finished PhD courses and got engaged in scientific and pedagogical activities.

In 1939 he defended his candidate thesis and in 1945 - doctoral dissertation. In 1946 he was awarded the title of professor. In 1956 was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR.

In 1941 - 1947 and 1957 - 1976 he was the Dean of YSU Faculty of Philology, from 1954 to 1980 he was the Head of the Chair of the History of Armenian Literature, from 1947 to 1953 he was the Director of the M. Abeghyan Institute of Literature of the Academy of Sciences of the Armenian SSR.

In 1938 he published the collection “XIII-XVIII Centuries. Armenian Secular Literature”. In the monograph “Grigor Narekatsi” (Yerevan, 1955) he re-examined the national and universal value of the work of a genius thinker. He is also the author of “Movses Khorenatsi. Life and Creativity” (Yerevan, Russian, 1969, Armenian, 1970), “Isahakyan’s Humanism” (Yerevan, 1975), “Hovhannes Tumanyan’s Work” (Yerevan, 1981) monographs, as well as “Pages from the History of Armenian Novel” (Yerevan, 1957) and “Issues of the History of Literature” (Yerevan, 1982).

He has also written university and school textbooks.

In 1961 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He was awarded the Order of the Badge of Honor.

He died on October 26, 1983, in Yerevan.





ՄԽԻԹԱՐ ՋՐԲԱՇՅԱՆ

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1918 թ. սեպտեմբերի 11-ին Երևանում:
1936 թ. ավարտել է Երևանի թիվ 23 միջնակարգ
դպրոցը, 1941 թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական
ֆակուլտետը, 1945 թ.՝ ասպիրանտուրան:

1945 թ. պաշտպանել է թեկնածուական, 1949 թ.՝
դոկտորական ատենախոսություն: 1950 թ. նրան
շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1953 թ. ընտրվել է

ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1956 թ.՝ ակադեմիկոս:

1943 թվականից դասավանդել է ԵՊՀ-ում: 1957-1959 թթ. եղել է Ֆիզիկա-
մաթեմատիկական, ապա՝ Մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դե-
կան, 1978-1994 թթ.՝ ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ:

1945 թվականից աշխատել է նաև ՀԽՍՀ ԳԱ-ում. 1955-1971 թթ. եղել
է Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի ֆունկցիաների տեսու-
թյան բաժնի վարիչ, 1971-1989 թթ.՝ տնօրեն, 1966 թվականից՝ «ՀԽՍՀ ԳԱ
տեղեկագիր. Մաթեմատիկա» հանդեսի հիմնադիր գլխավոր խմբագիր:
1963-1973 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, 1973-1978 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ նախա-
գահության անդամ:

Հեղինակ է շուրջ 200 գիտական հոդվածների, մենագրությունների և ու-
սումնական ձեռնարկների: Նրա ուսումնասիրություններն ընդգրկում են
ժամանակակից կոմպլեքս անալիզի և ֆունկցիաների տեսության մի շարք
ուղղություններ՝ մոտավորությունների տեսություն, հարմոնիկ անալիզ, ին-
տեգրալային ձևափոխություններ և ֆունկցիաների ներկայացումներ, մերո-
մորֆ ֆունկցիաների ֆակտորացման և դրանց եզրային հատկություններ:

1964 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Հոկտեմբերյան հե-
ղափոխության շքանշաններով:

Վախճանվել է 1994 թ. մայիսի 6-ին Երևանում:

Երևանի Ռուսավելի փողոցի թիվ 25/1 շենքի տարածքում կանգնեցված
է հուշասյուն:

MKHITAR JRBASHYAN

Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on September 11, 1918, in Yerevan. In 1936 he graduated from secondary school No. 23, 1941 - YSU Faculty of Physics and Mathematics, 1945 – PhD courses.

In 1945 he defended his candidate thesis, in 1949 - doctoral dissertation. In 1950 he was awarded the title of professor. In 1953 he was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1956 - Academician.

In 1943 he began to deliver lectures at YSU. In 1957 - 1959 he was the Dean of the Faculty of Physics and Mathematics, then the Faculty of Mechanics and Mathematics, and from 1978 to 1994 he was the Head of the Chair of Theory of Functions.

From 1945 he worked at the Academy of Sciences of the Armenian SSR. In 1955 - 1971 he was the Head of the Division of the Theory of Functions of the Institute of Mathematics and Mechanics. From 1971 to 1989 he worked as Director of this institute. Beginning with 1966 he was the Founding Editor-in-Chief of the Journal “Mathematics” (Bulletin of the Academy of Sciences of the Armenian SSR. In 1963 - 1973 he was the Academic Secretary of the Department of Physical and Mathematical Sciences of the Academy of Sciences of the Armenian SSR. In 1973 - 1978 – member of the Presidium of the Academy of Sciences of the Armenian SSR.

Author of about 200 scientific articles, monographs and textbooks. His researches include a number of areas of modern complex analysis and theory of functions: approximation theory, harmonic analysis, integral transformations and functions, factorization of meromorphic functions and their marginal properties.

In 1964 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He was awarded the Order of the Red Banner of Labor and the Order of the October Revolution.

He died on May 6, 1994, in Yerevan.

A monument is erected in the area of 25/1 Rustaveli Street, Yerevan.





ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

Ծնվել է 1922 թ. օգոստոսի 18-ին Թիֆլիսում:
1940 թ. ավարտել է տեղի թիվ 86 հայկական միջ-
նակարգ դպրոցը: Մասնակցել է Հայրենական մեծ
պատերազմին, որի ընթացքում ծանր վիրավորվել
է: 1948 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆա-
կուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1954 թ. պաշտպանել է թեկնածուական, 1971 թ.
դոկտորական ատենախոսություն: 1974 թ. նրան
շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1954-1966 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի (1964 թվականից՝ Հ.
Աճառյանի անվան) գիտաշխատող, 1966-2005 թթ.՝ ԵՊՀ բանասիրության
ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի դասախոս, ապա՝ դոցենտ, 1976-1991
թթ.՝ նույն ամբիոնի վարիչ:

Նրա հեղինակած բառարանները հայ բազմադարյա բառարանագրու-
թյան նոր մվաճումներ են, իսկ «Ժամանակակից հայոց լեզու» գիրքն այժմ
էլ ծառայում է որպես բուհական հիմնական դասագիրք:

Հեղինակ է «Հոմանիշները ժամանակակից հայերենում» (Եր., 1971),
«Ժամանակակից հայոց լեզու (ինչյունաբանություն և բառագիտություն)»
(Եր., 1982), «Հայոց լեզվի հոմանիշների բառարան» (Եր., 1967) և համահե-
ղինակ՝ «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» (Եր., 1975) գրքերի:

2004 թ. նրա «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ը
(Եր., 2003, 2009) արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

Վախճանվել է 2007 թ. հունվարի 13-ին Երևանում:

ASHOT SUKIASYAN

Doctor of Philological Sciences, Professor

He was born on August 18, in 1922, in Tbilisi. In 1940 he graduated from the local Armenian secondary school No. 86. He participated in the Great Patriotic War and was seriously wounded. In 1948 graduated from the Department of Armenian Language and Literature of YSU Faculty of Philology.

In 1954 he defended his candidate thesis and in 1971 - doctoral dissertation. In 1974 he was awarded the title of professor.

In 1954 - 1966 he worked as a researcher at the Institute of Language of the Academy of Sciences of the Armenian SSR (since 1964 named after Hr. Acharyan), from 1966 to 2005 he was a lecturer at the Chair of Armenian Language of YSU Faculty of Philology, then as an Associate Professor and in 1976 – 1991 – head of the same chair.

His dictionaries are new achievements in the field of the centuries-old Armenian lexicography, and the book “Modern Armenian Language” still serves as the main textbook at the university.

He is the author of “Synonyms in Modern Armenian” (Yerevan, 1971), “Contemporary Armenian Language (Phonology and Vocabulary)” (Yerevan, 1982), “Dictionary of Synonyms of the Armenian Language” (Yerevan, 1967) and co-author of the “Phraseological Dictionary of the Armenian Language” (Yerevan, 1975).

In 2004 his work “Explanatory Dictionary of Synonyms of the Armenian Language” (Yerevan, 2003, 2009) received the RA President’s Prize.

He died on January 13, 2007, in Yerevan.



ԷԴՈՒԱՐԴ ԱԹԱՅԱՆ

*Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*



Ծնվել է 1932 թ. փետրվարի 10-ին Երևանում: 1949-1953 թթ. սովորել է Երևանի օտար լեզուների ինստիտուտում: 1956 թ. ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան:

1957 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ-ում. 1957-1962 թթ. եղել է ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի դասախոս, 1962-1968 թթ.՝ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ավագ դասախոս, 1969-1986 թթ.՝ նույն ամբիոնի ղոցենտ, 1987-1993 թթ.՝ լեզուների տիպաբանության, ռուսաց լեզվի տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչ, 1993-2001 թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր: 1968-1969 թթ. համատեղությամբ ղեկավարել է ԵՌ-ՕԼՄԻ լեզվաբանության ամբիոնը:

1965 թ. բանասիրության գծով պաշտպանել է թեկնածուական, 1984 թ. փիլիսոփայության գծով՝ դոկտորական ատենախոսություն: 1986 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Թողել է գիտական ու հրապարակախոսական հարուստ ժառանգություն՝ շուրջ վեց տասնյակ հոդվածներ և բազմաթիվ մենագրություններ, որոնցից են՝ «Կառուցվածքային շարահյուսության առարկան և հիմնական հասկացությունները» (ռուս., Եր., 1968), «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառնման հայեցակետերը» (ռուս., Եր., 1976), «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» (Եր., 1981), «Լեզու և արտալեզվական իրականություն. գոյաբանական համեմատման փորձ» (ռուս., Եր., 1987), «Ազատությունը որպես գաղափար և որպես իրականություն» (ռուս., Եր., 1992): 1980-1990-ական թթ. հանդես է եկել նաև հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներով:

Ձբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ. մայրենի լեզվով հնչեցրել է արևմտաեվրոպական և ռուս ականավոր գրողների ու փիլիսոփաների ամբողջական երկեր կամ դրանց հատվածներ, որոնց մի մասը դեռևս անտիպ է:

Հայաստանում նշանագիտության հիմնադիրներից է:

Վախճանվել է 2002 թ. հունվարի 1-ին Երևանում:

EDUARD ATAYAN

Doctor of Philosophy, Professor, Academician of NAS RA

He was born on February 10, 1932, in Yerevan. In 1949 - 1953 studied at the Yerevan Institute of Foreign Languages. In 1956 finished PhD courses at YSU.

From 1957 until the end of his life he worked at YSU. In 1957 - 1962 delivered lectures at the Chair of Romance and Germanic Philology, from 1962 to 1968 he was a senior lecturer at the Department of General Linguistics, from 1969 to 1986 - an associate professor at the same chair. In 1987 - 1993 - Head of the Chair of Typology of Languages, Theory and Methodology of the Russian Language, in 1993 - 2001 - Professor of the same chair. In 1968 - 1969 he headed concurrently the Chair of Linguistics at Yerevan Institute of Foreign Languages.

In 1965 he defended his candidate dissertation on philology and in 1984 - doctoral dissertation on philosophy. In 1986 In 1996 he was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1996 - Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

He has left a rich scientific and publicist legacy. About sixty articles and numerous monographs, including “The subject of structural syntax and basic concepts” (Russian, Yerevan, 1968), “Concepts of organization and functioning of the language sphere” (Russian, Yerevan, 1976), “The internal depiction of the linguistic world and the external attitude” (Yerevan, 1981), “Language and extralinguistic reality. Experience of ontological comparison” (Russian, Yerevan, 1987), “Freedom as an idea and reality” (Russian, Yerevan, 1992). From 1980 to 1990, he published numerous publicist articles.

He was also involved in translation activities, making available in his native language complete works or excerpts from prominent Western European and Russian writers and philosophers, some of which have not been published yet.

He is one of the founders of semiotics in Armenia.

He died on January 1, 2002, in Yerevan.



ԱՐՏԵՄ ԱԼԻԽԱՆՅԱՆ

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ քղբակից անդամ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1908 թ. հունիսի 24-ին Գանձակում: 1931 թ. ավարտել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) համալսարանը և աշխատանքի անցել Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում:

1940 թ. արժանացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճանի, 1942 թ.՝ պրոֆեսորի կոչման: 1943 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ:

1930-1943 թթ. Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում եղել է գիտաշխատող, ապա՝ լաբորատորիայի վարիչ: 1931-1941 թթ. դասախոսել է Լենինգրադի պետական համալսարանում: 1942 թ. Ալիխանովի հետ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում հիմնել է տիեզերական ճառագայթների ուսումնասիրման լաբորատորիա, որը 1943 թ. համալսարանի կազմում վերածվել է ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի և հետագայում տեղափոխվել ՀԽՍՀ ԳԱ համակարգ: 1943-1973 թթ. լինելով ԵրֆԻ տնօրեն՝ ստեղծել է տիեզերական ճառագայթների ուսումնասիրության բնագավառի գիտնականների իր դպրոցը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին նրա կատարած մի շարք աշխատանքներ ունեցել են պաշտպանական բացառիկ կարևորություն:

1946 թ. նրա ջանքերով ստեղծվել է Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտի միջուկային ֆիզիկայի ամբիոնը:

1942 թ. Ա. Ալիխանովի հետ Արագած լեռան վրա հիմնել է տիեզերական ճառագայթների հետազոտման գիտական կայանը: Նա առաջինն է նշել տարրական մոթոնների գոյությունը տիեզերական ճառագայթներում:

Վախճանվել է 1978 թ. փետրվարի 25-ին Մոսկվայում:

Երևանի Բաղրամյան պողոտայի թիվ 18 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

Ալիխանյան եղբայրների անունով է կոչվում Երևանի փողոցներից մեկը:

ARTEM ALIKHANYAN

Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Corresponding Member of the USSR Academy of Sciences, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Honored Scientist of the Armenian SSR

He was born on June 24, 1908, in Gandzak. In 1931 he graduated from the University of Leningrad (now St. Petersburg) and started working at the Leningrad Institute of Physics and Technology.

In 1940 he was awarded the degree of Doctor of Physical and Mathematical Sciences and in 1942 the title of Professor. In 1943 he was elected a full member of the Academy of Sciences of the Armenian SSR.

In 1930 - 1943 he was a researcher at the Leningrad Institute of Physics and Technology, then head of the laboratory. In 1931 - 1941 he taught at Leningrad State University. In 1942 together with A. Alikhanov, he organized a laboratory for the study of cosmic rays at YSU Faculty of Physics and Mathematics. Later it became a research institute of physics and was moved to the Academy of Sciences of the Armenian SSR. In 1943 – 1973, as the director of YerPhI, he founded his own School of Space Radiation.

A number of his works during the Great Patriotic War had an exceptional defensive nature.

In 1946, through his efforts, the Chair of Nuclear Physics of the Moscow Institute of Engineering and Physics was established.

In 1942 Together with A. Alikhanov, he founded the Space Research Station on Mount Aragats. He was the first to mention the existence of new elementary particles in cosmic rays.

He died on February 25, 1978, in Moscow.

A commemorative plaque is attached to the wall of building No. 18 on Baghramyan Avenue in Yerevan.

One of the streets in Yerevan is named after the Alikhanyan brothers.





ԱՐԱՎՃԱՄ ԱԼԻՍԱՆՈՎ

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակա-
դեմիկոս*

Ծնվել է 1904 թ. մարտի 4-ին Թիֆլիսում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պոլիտեխնիկական ինստիտուտ, որն ավարտել է 1929 թ.: 1927-1941 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում:

Առաջին հետազոտությունները նվիրված են ռենտգենական առաժուցվածքային վերլուծությանը և ռենտգենյան ճառագայթների ֆիզիկային: 1932 թվականից զբաղվել է միջուկային և տարրական մասնիկների ֆիզիկայով և ճառագայթաակտիվության հետազոտման ասպարեզում կատարել մի շարք աշխատանքներ, որոնք այսօր համարվում են դասական:

Ա. Ալիխանյանի և Մ. Կոզոդոնի հետ հայտնաբերել ու հետազոտել է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի արձակման երևույթը, Ա. Ալիխանյանի հետ՝ ճառագայթաակտիվ տարրերի սպեկտրների տեսքի կախումը տարրի ատոմական համարից և ճշգրտել Ռեզերֆորդի ստացած որոշ արդյունքներ:

1940 թ. կազմակերպել է Էլբրուսի տիեզերական ճառագայթների հետազոտման առաջին արշավախումբը: Հայրենական մեծ պատերազմի ամենածանր շրջանում՝ 1942 թ., Ա. Ալիխանյանի հետ Արագած լեռան վրա հիմնել է տիեզերական ճառագայթների ուսումնասիրման գիտական կայան, իսկ ԵՊՀ-ում՝ լաբորատորիա, որը ԵՊՀ կազմում վերածվել է ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի՝ իր իսկ տնօրինությամբ: Գործուն մասնակցություն է ունեցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծման աշխատանքներին և նրա հիմնադրման օրից դարձել ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ: Երկար տարիներ ղեկավարել է Մոսկվայի տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը:

Միջուկային ֆիզիկայի և տարրական մասնիկների արագարարների ֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիրներից է:

Վախճանվել է 1970 թ. դեկտեմբերի 8-ին Մոսկվայում:

Նրա անունով է կոչվում Մոսկվայի տեսական ֆիզիկայի ինստիտուտը:

Երևանի փողոցներից մեկը կոչվում է Ալիխանյան եղբայրների անունով:

ABRAHAM ALIKHANOV

Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Academician of the USSR Academy of Sciences and Armenian SSR Academy of Sciences

He was born on March 4, 1904, in Tbilisi. After graduating from school, he entered the Leningrad (now St. Petersburg) Polytechnic University, graduating from it in 1929. In 1927 - 1941 he worked at the Leningrad Institute of Physics and Technology of the USSR Academy of Sciences.

The first studies were devoted to the structural analysis of X-rays and the physics of X-rays. Since 1932 he has been engaged in the physics of nuclear and elementary particles, and has carried out a number of works in the field of radiation-activity research that are considered classic today.

A. Alikhanyan and M. Kozodoev discovered and studied the release of electropositive pairs from excited nuclei. Together with A. Alikhanyan, the “spectrum dependence of the spectral elements” on the atomic number of the element and some of the results obtained by Rutherford.

In 1940 he organized the first expedition to refine the cosmic rays of Elbrus. During the hardest period of the Great Patriotic War, in 1942, Together with A. Alikhanyan, he founded the Space Research Station on Mount Aragats, and a laboratory at YSU, which became a part of YSU Research Institute of Physics under his own direction. He took an active part in the establishment of the Academy of Sciences of the Armenian SSR and became a full member of the Academy of Sciences of the Armenian SSR from the day of its foundation. For many years he headed Moscow Institute of Theoretical and Experimental Physics.

He is one of the founders of the Soviet School of Nuclear Physics and Elementary Particle Accelerators.

He died on December 8, 1970, in Moscow.

The Moscow Institute of Theoretical Physics is named after him.

One of the streets in Yerevan is named after the Alikhanyan brothers.





ՍԵՐԳԵՅ ՍԵՐԳԵԼՅԱՆ

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ քոթակից անդամ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1928 թ. մայիսի 19-ին Սիմֆերոպոլում: 1947 թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1949 թ.՝ ասպիրանտուրան: Նույն թվականին գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ներկայացված նրա ատենախոսությունը մասնագիտական խորհուրդը գնահատել է որպես դոկտորական և նրան շնորհել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1951 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1953 թ. ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ քոթակից անդամ, 1956 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

1956-1960 թթ. եղել է ԵրՄՄԳ-ՀԻ հիմնադիր տնօրեն: 1962-1965 և 1971-1979 թթ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնը: 1963-1971 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ մաթեմատիկական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ և ԽՍՀՄ ԳԱ Վ. Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսության բաժնի վարիչ, 1971-1974 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ: 1972-1979 թթ. ղեկավարել է ԵՊՀ թվային անալիզի ամբիոնը, 1979-1982 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի կոմպլեքս անալիզի բաժինը: 1982-1986 թթ. եղել է Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր:

Հետազոտություններն ընդգրկում են ժամանակակից անալիզի մի շարք բնագավառներ: Իր ստեղծած նոր մեթոդով սպառիչ պատասխան է տվել կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաները բազմանդամներով հավասարաչափ մոտարկելու հնարավորության խնդրին: Մեծ ավանդ ունի միջազգային ճանաչում ստացած հայկական մաթեմատիկական գիտական դպրոցի կայացման և հետագա զարգացման, ինչպես նաև Հայաստանում հաշվողական տեխնիկայի ու կիրառական տեխնիկայի հիմնադրման ու զարգացման գործում:

1952 թ. նրան շնորհվել է ԽՍՀՄ Պետական մրցանակ:

Վախճանվել է 2008 թ. օգոստոսի 19-ին Լոս Անջելեսում (ԱՄՆ): Աճյունն ամփոփված է Մոսկվայում:

SERGEY MERGELYAN

Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Corresponding Member of the USSR Academy of Sciences, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR

He was born on May 19, 1928, in Simferopol. In 1947 graduated from YSU Faculty of Physics and Mathematics, in 1949 – finish PhD courses. In the same year the Professional Council assessed his dissertation as a doctoral dissertation and awarded him the degree of Doctor of Physical and Mathematical Sciences. In 1951 he was awarded the title of Professor. In 1953 was elected Corresponding Member of the Academy of Sciences of the USSR and the Academy of Sciences of the Armenian SSR, in 1956 - Academician of the Academy of Sciences of the Armenian SSR.

In 1956 - 1960 he was the founding director of Yerevan Computer Research and Development Institute. In 1962 - 1965 and 1971 - 1979 he headed the Joint Computing Center of the Academy of Sciences of the Armenian SSR and YSU. In 1963 - 1971 he was the Deputy Academic Secretary of the Mathematical Department of the USSR Academy of Sciences and Head of the Department of Theory of Functions of the Complex Variables Institute of the Steklov Mathematical Institute, in 1971 - 1974 - Deputy President of the Academy of Sciences of the Armenian SSR. In 1972 – 1979 he headed the Department of Numerical Analysis at YSU, in 1979 to 1982 - Department of Complex Analysis of the Institute of Mathematics of the Academy of Sciences of the Armenian SSR. In 1982 - 1986 he was the rector of the Kirovakan (now Vanadzor) State Pedagogical Institute.

His research areas cover a number of areas of modern analysis. With the new method he created, he gave an exhaustive answer to the problem of the possibility of approximating the functions of a complex variable with polynomials. He has made a great contribution to the establishment and further development of the internationally recognized Armenian Mathematical Scientific School, as well as to the establishment and development of computer technology and cybernetics in Armenia.

In 1952 he was awarded the USSR State Prize.

He died on August 19, 2008, in Los Angeles (USA). The ashes are buried in Moscow.





ԲԱՐԿՈՒՂԻՄԵՈՍ ՖԱՆԱՐՁՅԱՆ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ԽՍՀՄ ԲԳԱ քղթակից անդամ

Ծնվել է 1898 թ. օգոստոսի 20-ին Ախալցխայում: Նախնական կրթությունն ստացել է Աբասթումանում: 1917 թ. ավարտել է Թիֆլիսի առևտրական ուսումնարանը: 1919 թ. ընդունվել է Անդրկովկասյան համալսարանի (Թիֆլիս) բժշկական ֆակուլտետ: 1923 թ. 4-րդ կուրսից տեղափոխվել է Բաքվի համալսարանի բժշկական ֆակուլտետ և այն ավարտել 1924 թ.:

1925 թվականից աշխատել է Թիֆլիսի նախկին գերմանական հիվանդանոցի ռենտգենյան բաժանմունքում: Նույն թվականին ՀԽՍՀ Ժողկոմխորի կողմից մեկ տարով գործուղվել է Գերմանիա՝ ռենտգենաբանության ոլորտում կատարելագործվելու: 1926 թ. վերադարձել է Բեռլինից և աշխատել որպես Երևանի առաջին կլինիկական հիվանդանոցի ռենտգենյան բաժանմունքի վարիչ:

1927 թվականից դասախոսել է ԵՊՀ բժշկական ֆակուլտետում: 1936 թվականից ղեկավարել է ռենտգենաբանության ամբիոնը:

1936 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1945 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ քղթակից անդամ, 1956 թ.՝ ակադեմիկոս:

1946 թվականից եղել է Երևանում իր նախաձեռնությամբ կազմավորված ռենտգենաբանության և ուռուցքաբանության ԳՀԻ տնօրեն և գլխավոր ղեկավար: Բացահայտել է 12-մատնյա աղիի խոցի դիրքի ռենտգենյան ախտորոշման օրինաչափությունը, որը հայտնի է «Բ. Ա. Ֆանարջյանի օրինաչափություն» անվամբ:

Եղել է Ռենտգենաբանների, ճառագայթաբանների և ուռուցքաբանների հանրապետական ընկերության նախագահ, Ռենտգենաբանների և ճառագայթաբանների համամիութենական ընկերության պատվավոր անդամ:

Վախճանվել է 1976 թ. ապրիլի 9-ին Երևանում:

Նրա անունով է կոչվում Երևանի փողոցներից մեկը:

BARDUGHIMEOS FANARJYAN

Doctor of Medical Sciences, Professor, Academician of the Academy of Sciences of the Armenian SSR, Corresponding Member of the USSR Academy of Medical Sciences

He was born on August 20, 1898, in Akhaltsikhe. He received his primary education in Abastuman. In 1917 he graduated from Tbilisi Trade College. In 1919 he entered the Medical Faculty of the Transcaucasian University (Tbilisi). In 1923, from the 4th year he moved to the Medical Faculty of Baku University and graduated in 1924.

From 1925 he worked in the X-ray department of the former German hospital in Tbilisi. In the same year He was sent to Germany by the Council of People's Commissariat of the Armenian SSR for a year to improve his knowledge in the field of roentgen. In 1926 he returned from Berlin and worked as the head of the X-ray department of the first clinical hospital in Yerevan.

Since 1927 he has been lecturing at YSU Faculty of Medicine. From 1936 he headed the Department of Roentgen.

In 1936 defended his doctoral dissertation, in the same year was awarded the title of professor. In 1945 was elected Corresponding Member of the Academy of Sciences of the Armenian SSR, in 1956 - Academician.


From 1946 he was the director and scientific supervisor of the Scientific Research Institute of Roentgen and Oncology organized on his initiative in Yerevan. He has discovered the pattern of X-ray diagnosis of the position of the 12-finger saline ulcer, which is known as "B. A. Fanarjyan's regularity".

He was the Chairman of the Republican Society of Radiologists, Roentgenologists and Oncologists, and an honorary member of the Society of Radiologists and Roentgenologists of the USSR.

He died on April 9, 1976, in Yerevan.

One of the streets of Yerevan is named after him.





ԳՐԻԳՈՐ ՄԵՂՆԻԿՅԱՆ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1891 թ. սեպտեմբերի 26-ին Մոզդոկում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1917 թ.՝ Տարսուլի համալսարանի բժշկական ֆակուլտետի քիմիադեղագործական բաժինը: 1918 թ. մեկնել է Պյատիգորսկ և մասնակցել խորհրդային իշխանության համար մղված պայքարին: 1919-1922 թթ. աշխատել է Թիֆլիսում:

Գործուն մասնակցություն է ունեցել ԵՊՀ բժշկական ֆակուլտետի հիմնադրման աշխատանքներին: 1922 թ. հիմնել է դեղաբանության ամբիոն և մինչև 1935 թ. ղեկավարել այն: Նրա նախաձեռնությամբ ամբիոնին կից ստեղծվել են քիմիադեղագործական դասընթացներ, ապա՝ տեխնիկում, որը ղեկավարել է երկար ժամանակ: Հիմնել է նաև ԵՊՀ ռազմական քիմիայի և թունաբանության, ԵրՊԻ ընդհանուր քիմիայի ամբիոնները: Մի քանի տարի համատեղությամբ ղեկավարել է ԵԱԱԻ դեղաբանության ամբիոնը:

1935 թ. դարձել է բժշկական գիտությունների դոկտոր: Նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1937-1944 թթ. եղել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) ռազմաբժշկական ակադեմիայի պրոֆեսոր, 1944-1955 թթ.՝ բժշկական և անասնաբույժների կատարելագործման ինստիտուտների դեղագործության ամբիոնների վարիչ: 1955 թվականից աշխատել է Երևանի հեմատոլոգիայի և արյան փոխներարկման, բժշկական և ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտներում: 1956-1958 թթ. եղել է ԵրԲԻ ուսումնական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1965-1969 թթ.՝ բժիշկների կատարելագործման ինստիտուտի դեղաբանության և դեղագործության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատությունների, որոնք նվիրված են դեղաբույսերի և ԽՍՀՄ-ում սինթեզված դեղանյութերի ուսումնասիրմանը: Հատկապես կարևոր են օրգանիզմի վրա ֆտորի ազդեցության մեխանիզմի բացահայտմանը նվիրված աշխատանքները:

Եղել է Հայաստանի դեղագործների գիտական ընկերության պատվավոր նախագահ և համամիութենական գիտադեղագործական ընկերության վարչության անդամ:

Վախճանվել է 1974 թ. փետրվարի 16-ին Երևանում:

GRIGOR MEDNIKYAN

Doctor of Medical Sciences, Professor, Honored Scientist of the Armenian SSR

He was born on September 26, 1891, in Mozdok. He graduated from the local secondary school, in 1917 from the Department of Chemistry of the Medical Faculty of the University of Tartu. In 1918 he left for Pyatigorsk and took part in the struggle for Soviet Power. In 1919 - 1922 he worked in Tbilisi.

He took an active part in the organization of YSU Faculty of Medicine. In 1922 he founded the Chair of Pharmacology and headed it until 1935. On his initiative, chemistry and pharmacology courses were established at the chair, and then at a technical school, which he headed for a long time. He has also founded the chairs of YSU Military Chemistry and Toxicology, Chair of General Chemistry of Yerevan State Medical Institute. For several years he headed the Department of Pharmacology of the Yerevan Veterinary Institute.

In 1935 he became a doctor of medical sciences. In the same year he was awarded the title of professor.

In 1937 - 1944 he was a professor at the Leningrad (now St. Petersburg) Military Medical Academy. In 1944 - 1955 he was the head of the Department of Pharmacy at the Institutes for the Improvement of Medical and Veterinary Medicine. From 1955 he worked at Yerevan Institute of Hematology and Blood Transfusion and the Institute of Fine Organic Chemistry of the Armenian SSR. In 1956 - 1958 he was the Deputy Rector on Education and Scientific Affairs at Yerevan State Medical Institute. In 1965 – 1969 he was the head of the Department of Pharmacology and Pharmaceuticals of the Institute of Doctors' Qualification.

He is the author of about 50 scientific works dedicated to the study of herbs and medicines synthesized in the USSR. Especially important are the works dedicated to the detection of the mechanism of the effect of fluoride on the body.

He was the Honorary President of the Scientific Society of Pharmacists of Armenia and a member of the Board of the USSR Scientific-Pharmaceutical Company.

He died on February 16, 1974, in Yerevan.





ԳՐԻԳՈՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1900 թ. հունվարի 10-ին Վաղարշապատում: Մինչև 1917 թ. սովորել է Գևորգյան ճեմարանում, ապա՝ կրթությունը շարունակել Երևանի թեմական դպրոցում:

1927 թ. ավարտել է ԵՊՀ բժշկական ֆակուլտետը և աշխատանքի անցել մարդու ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես ասիստենտ, այնուհետև գործուղվել է Լենինգրադ (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ)՝ վերապատրաստվելու Ի. Պավլովի և Լ. Օրբելու լաբորատորիաներում:

1930 թ. նորաստեղծ բժշկական ինստիտուտում նրա ջանքերով կազմակերպվել է ֆիզիոլոգիայի ամբիոն:

1936 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1940 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1932-1936 թթ. եղել է ԵԱԱԻ հայկական բաժնի ֆիզիոլոգիայի, 1936-1970 թթ.՝ ԵրԲԻ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի, 1937-1949 թթ. համատեղությամբ՝ ԵՊՀ ֆիզիոլոգիայի ամբիոնների վարիչ, 1944-1950 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն:

Հեղինակ է շուրջ 80 գիտական աշխատությունների՝ նվիրված մարսողական համակարգի, ուղեղիկի սիմպաթիկ նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի հարցերին, ինչպես նաև Հայաստանի հանքային ջրերի բուժական ազդեցությունների ուսումնասիրմանը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 ատենախոսություն:

1967 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1971 թ. հունիսի 7-ին Երևանում:

GRIGOR MUSHEGHYAN

Candidate of Medical Sciences, Associate Professor, Honored Scientist of the Armenian SSR

He was born on January 10, 1900, in Vagharshapat. Until 1917 he studied at the Gevorgyan Seminary, then continued his education at the Diocesan School of Yerevan.

In 1927 he graduated from YSU Faculty of Medicine and started working at the Chair of Human Physiology as an assistant, then he was deployed to Leningrad (now St. Petersburg) to raise qualification at the laboratories of I. Pavlov and L. Orbeli.

In 1930, a Chair of Physiology was opened at the newly established Medical Institute owing to his efforts.

In 1936 he defended his dissertation and in 1940 he was awarded the title of Associate Professor.

In 1932-1936 he was the Head of the Chair of Physiology of the Armenian Division of YAHVI, in 1936-1970 – Head of the Chair of Human and Animal Physiology of YMI, in 1937-1949 - Head of the Chair of Physiology of YSU (concurrently), in 1944-1950 he was the Director of the Institute of Physiology of the Academy of Sciences of the Armenian SSR.

He is the author of about 80 scientific works on the physiology of the digestive system and cerebral sympathetic nervous system, as well as the study of the therapeutic effects of mineral waters in Armenia.

13 dissertations were defended under his scientific supervision.

In 1967 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He was awarded the Order of the Red Banner of Labor.

He died on June 7, 1971, in Yerevan.





ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԺՈՒՐ

Ֆիզիկոս, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1885 թ. ապրիլի 21-ին Նոր Նախիջևանում: Ավարտել է տեղի ռեալական դպրոցը, 1905 թ.՝ Սանկտ Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը, այնուհետև՝ երեք տարի սովորել Լոզանի (Շվեյցարիա) համալսարանում: 1912 թ. ավարտել է Սորբոնի (Փարիզ) համալսարանը, 1928 թ.՝ Փարիզի ռադիոէլեկտրականության բարձրագույն դպրոցը:

1912-1920 թթ. զբաղվել է մանկավարժական գործունեությամբ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի տարբեր քաղաքներում: 1920 թ. եկել է Հայաստան և աշխատանքի անցել Երևանի արական գիմնազիայում: 1921 թ. հրավիրվել է ԵՊՀ, որտեղ հիմնել է ֆիզիկայի լաբորատոր գործիքներ, սարքեր և այլ հարմարանքներ պատրաստող արհեստանոց: 1922 թ. ստեղծել է ֆիզիկայի լաբորատորիա և ղեկավարել այն: Հիմնել է մի շարք այլ լաբորատորիաներ, այդ թվում՝ էլեկտրառադիոլաբորատորիա, որի հիման վրա հետագայում ստեղծվեցին մի քանի ինքնուրույն լաբորատորիաներ: 1923 թվականից անցել է դասախոսական աշխատանքի: 1925 թ. գործուղվել է Փարիզի համալսարան և կատարելագործվել Մարի Կյուրի-Սկլոդովսկայի ճառագայթաակտիվության լաբորատորիայում: Երևան վերադառնալուց հետո՝ 1928-1950 թթ., կրկին աշխատել է ԵՊՀ-ում:

Հեղինակ է էլեկտրամագնիսական էներգիայի ճառագայթման, պինդ մարմնի մեխանիկայի, օպտիկայի տարբեր հարցերի վերաբերյալ գիտական մի շարք աշխատությունների:

1935 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1938-1950 թթ. եղել է ԵՊՀ էլեկտրականության և տատանումների ֆիզիկայի ամբիոնի վարիչ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԵՊՀ էլեկտրառադիոլաբորատորիայում նրա ղեկավարությամբ ռազմական նպատակներով կատարվել են հետազոտական աշխատանքներ:

1941 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Վախճանվել է 1958 թ. դեկտեմբերի 4-ին Երևանում:

HARUTYUN ANZHUR

Physicist, Professor, Honored Scientist of the Armenian SSR

He was born on April 21, 1885, in Nor Nakhichevan. He graduated from the local secondary school, in 1905 from St. Petersburg University of technologies and then studied for three years at the University of Lausanne (Switzerland). In 1912 he graduated from the Sorbonne (Paris) University and in 1928, the Higher School of Radio Electricity in Paris.

In 1912 - 1920 he was engaged in pedagogical activities in various cities of the North Caucasus and Transcaucasia. In 1920 he came to Armenia and started working at the Yerevan Men's Gymnasium. In 1921 he was invited to YSU. He set up a physics workshop, where he produced various tools and devices. In 1922 he founded a physics laboratory and headed it. He has organized a number of other laboratories, including an electro-radio laboratory, on the basis of which several independent laboratories were later established. In 1923 he started to deliver lectures. In 1925 he graduated from the University of Paris and studied at the Laboratory of Radioactivity of Maria Sklodowska-Curie. After returning to Yerevan in 1928-1950, he again worked at YSU.

He is the author of a number of scientific works on electromagnetic energy radiation, solid state mechanics, and various optical issues.

In 1935 he was awarded the title of professor. In 1938-1950 he was the Head of the Department of Physics of Electrical Engineering.

During the Great Patriotic War, YSU Electrical and Radio Laboratory conducted military researches under his leadership.

In 1941 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on December 4, 1958, in Yerevan.





ԳՐԻԳՈՐ ԱՐԵՇՅԱՆ

Բժիշկ, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1881 թ. հունվարի 7-ին Թիֆլիսի նահանգի Վարխունո գյուղում: Նախնական կրթությունն ստացել է Թելավի շրջանի Սացխենիսի դպրոցում, իսկ միջնակարգ կրթությունը՝ Թիֆլիսի գիմնազիայում, որն ավարտել է 1902 թ: 1903 թ. Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիայում մեկ տարի սովորելուց հետո վատառողջության պատճառով տեղափոխվել է Կիև և ուսումը շարունակել տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1909 թ. աշխատանքի է անցել Կիևի պրոֆ. Պիստեմսկու կլինիկայում: 1911 թ. գորակոչվել է մինչև 1913 թ. ծառայել է Վարշավայի ռազմական օկրուգում որպես գնդի բժիշկ: Ձորացրվելուց հետո վերադարձել է Թիֆլիս, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի առաջին օրերին կրկին գորակոչվել է գործուղվել է Կովկասյան ռազմաճակատ: 1915 թ. մասնակցել է Սարիղամիշի մոտ տեղի ունեցած մարտերին, ապա՝ Էրզրումի գրավմանը: Պարգևատրվել է «Գեորգիյան խաչ» շքանշանով:

1919 թ. հրավիրվել է Երևան, որտեղ նրա ջանքերով հիմնադրվել է Հայաստանի առաջին մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը: Նրա մանկավարժական և գիտահասարակական գործունեության բուռն շրջանը կապված է ԵՊՀ-ի հետ. ղեկավարել է իր նախաձեռնությամբ ստեղծված մանկաբարձության և կանանց հիվանդությունների ամբիոնը, ինչպես նաև հանրապետության առժողկոմատի մոր և մանկան առողջության պառնիկան ման բաժինը: 1928 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1932 թ. Երևանում հիմնադրել է մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳՀԻ, զբաղվել Հայաստանում այդ տարիներին լայն տարածում գտած հիվանդությունների, մասնավորապես ճահճատենդի հետևանքով կանանց մոտ առաջացող ախտաբանական երևույթների պարզաբանմամբ ու բուժմամբ:

1935 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1957 թ. ապրիլի 23-ին Երևանում:

1957 թվականից նրա անունով է կոչվում Երևանի մանկաբարձության և գինեկոլոգիայի կլինիկան:

GRIGOR ARESHYAN

Doctor, Professor, Honored Scientist of the Armenian SSR

He was born on January 7, 1881, in the village of Varkhuno, Tbilisi. He received his primary education at the Satskhenis School in the Telavi region, and the secondary education at the Tbilisi Gymnasium, graduating in 1902. In 1903 after studying at the St. Petersburg Military Medical Academy for a year, he was transferred to Kiev, to the medical faculty of the local university due to bad health.

In 1909 he started to work at the Prof. Pisemsky Clinic, in 1911 joined the army and served as a regiment doctor in the Warsaw Military District up to 1913. After his demobilization, he returned to Tbilisi, but in the first days of World War I he joined the army again and was sent to the Caucasus Front. In 1915 he took part in the battles near Sarighamish, then in the capture of Erzurum. He was awarded the Order of the Georgian Cross.

In 1919 he was invited to Yerevan, where he founded the first obstetrics and gynecology department in Armenia. The tumultuous period of his pedagogical and scientific-social activities is connected with YSU. He headed the Department of Obstetrics and Gynecology, established on his initiative, as well as the Department of Maternal and Child Health of the Republican Committee of the Republic of Armenia. In 1928 he was awarded the title of professor.

In 1932, he organized the Department of Obstetrics and Gynecology SRI, which was widely used in Armenia during those years, in particular, to clarify and treat pathological diseases caused in women with smallpox.

In 1935 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on April 23, 1957, in Yerevan.

Since 1957, Yerevan Obstetrics and Gynecology Clinic has been called after him.





ՀԱՄԱՐՁՈՒՄ ՔԵԶԵԿ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1872 թ. հունիսի 7-ին Նոր Նախիջևանում: Սովորել է տեղի հայկական հոգևոր դպրոցում, ապա՝ Ռոստովի գիմնազիայում, որն ավարտել է 1892 թ.: Երկու տարի ուսանել է Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիայում, ապա՝ տեղափոխվել Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետ, որն ավարտել է 1897 թ.:

Աշխատանքային գործունեությունն սկսել է Ռոստովի քաղաքային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում, այնուհետև եղել է Նևինոմիսկ կայարանի հիվանդանոցի վարիչ և տեղամասային բժիշկ: 1900 թ. սկզբին տեղափոխվել է Սանկտ Պետերբուրգ և վիրաբուժական կլինիկայում աշխատել որպես օրդինատոր:

1901-1905 թթ. աշխատել է Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Դանիայի մի շարք առաջատար կլինիկաներում: 1910 թ. նշանակվել է Նոր Նախիջևանի քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ և այստեղ հիմնել վիրաբուժական բաժանմունք: Առաջին աշխարհամարտի տարիներին, որպես Ռոստովի օրթոպեդիկ ինստիտուտի ղեկավար, մեծ ջանքեր է գործադրել զինվորական հիվանդանոցների ստեղծման ուղղությամբ:

1910 թ. նրան շնորհվել է դոկտորի գիտական աստիճան, 1925 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1924 թ. հրավիրվել է Երևան և նշանակվել Հանրապետական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի և ԵՊՀ բժշկական ֆակուլտետի վիրաբուժության ամբիոնի վարիչ, 1925 թ.՝ ԵՊՀ բժշկական ֆակուլտետի ղեկան: ԵՊՀ-ում աշխատելու տարիներին զբաղվել է Բժշկական ֆակուլտետը որակյալ դասախոսական կադրերով համալրելու գործով:

1935 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Վախճանվել է 1948 թ. սեպտեմբերի 3-ին Երևանում:

Երևանի Աբովյան փողոցի թիվ 32 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

HAMBARDZUM KECHEK

Doctor of Medical Sciences, Professor, Honored Scientist of the Armenian SSR

He was born on June 7, 1872, in Nor Nakhichevan. He studied at the local Armenian spiritual school, then at the Rostov Gymnasium, graduating in 1892. He studied for two years at the Military Medical Academy of St. Petersburg, then moved to the Medical Faculty of Moscow University in 1897. He graduated from this HEI finally.

He started working in the surgical department of the Rostov-on-Don city hospital, then was the head and precinct doctor of the Nivnomisk station hospital. In 1900 he moved to St. Petersburg and worked as a resident at a surgical clinic.

In 1901 - 1905 he worked in a number of leading clinics in Germany, France and England. In 1910 he was appointed chief physician of the Nor Nakhichevan city hospital and established a surgical department here. During World War I, as head of the Rostov Orthopedic Institute, he worked hard to build military hospitals.

In 1910 he was awarded a degree of doctor of sciences, and in 1925 – title of a professor.

In 1924 he was invited and appointed Head of the Surgical Department of the Republican Hospital and the Head of the Chair of Virology of YSU Medical Faculty, in 1925 he was appointed Dean of the Medical Faculty. During his years of work at YSU, he was engaged in recruiting qualified faculty members of the medical department.

In 1935 was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on September 3, 1948, in Yerevan.

A commemorative plaque is attached to the wall of the building No. 32 on Abovyan Street in Yerevan.





ԼԵՎՈՆ ԱՌՏԻՆՅԱՆ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1879 թ. մայիսի 22-ին Թիֆլիսում: 1898 թ. ավարտել է տեղի 3-րդ գիմնազիան, 1903 թ.՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժինը, ստացել անօրգանական և ֆիզիկական քիմիայի մասնագետի որակավորում և դարձել տեղի նորաստեղծ պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկական քիմիայի և տեսական էլեկտրաքիմիայի ամբիոնի ասիստենտ: Այդտեղ էլ կազմել է ֆիզիկական քիմիայի գործնական աշխատանքների առաջին ձեռնարկը Ռուսաստանում:

1904-1907 թթ. մեկնել է Գերմանիա՝ գիտական գործուղման:

1918-1920 թթ. եղել է Թիֆլիսի համալսարանի անօրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ, 1921 թ.՝ Ալավերդու պղնձածուլական գործարանի կենտրոնական լաբորատորիայի վարիչ, 1922-1927 թթ.՝ ՀԽՍՀ հողօդկոմատի և ժողտնտիստի կենտրոնական լաբորատորիայի անօրգանական քիմիայի բաժնի վարիչ:

1923 թ. հրավիրվել է ԵՊՀ որպես անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, ապա՝ մինչև 1938 թ., եղել ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ: 1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հայաստանում ֆիզիկական քիմիայի դպրոցի հիմնադիրն է: Գործուն մասնակցություն է ունեցել ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի քիմիայի ինստիտուտի հիմնադրման աշխատանքներին և մինչև 1938 թ. ղեկավարել է ֆիզիկական քիմիայի բաժինը:

1938 թ. հունիսի 17-ին ձերբակալվել է արտասահմանյան պետություններից մեկի հետախուզական գործակալ լինելու մեղադրանքով: 1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել է 10 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում: 1941 թ. սեպտեմբերի 3-ին գործը վերանայվել է, և պատիժը փոխարինվել է 5 տարի Վազախստան արքայով:

1955 թ. արդարացվել է:

Վախճանվել է 1964 թ. դեկտեմբերի 30-ին Երևանում:

LEVON ROTINYAN

*Doctor of Chemical Sciences, Professor, Honored Scientist and Technician
of the Armenian SSR*

He was born on May 22, 1879, in Tbilisi. In 1898 he graduated from the 3rd local gymnasium, in 1903 with a degree in physics and mathematics from the Faculty of Natural Sciences of St. Petersburg University. There he compiled the first manual on physical chemistry in Russia.

In 1904 - 1907 he left for Germany on a business trip.

In 1918 - 1920 he was an Associate Professor at the Department of Inorganic Chemistry, University of Tbilisi. In 1921 he was the head of the central laboratory of the Alaverdi Copper Smelter, and from 1922 to 1927 he was the head of the department of inorganic chemistry of the Central Laboratory of the People's Commissariat on Agriculture and People's Economic Council of the Armenian SSR.

In 1923 he was invited to YSU as the head of the chair of inorganic-analytical chemistry, then until 1938 he was the head of the chair of physical chemistry. In 1925 he was awarded the title of professor.

He is the founder of the School of Physical Chemistry in Armenia. He took an active part in the organization of the Armenian branch of the Institute of Chemistry of the USSR Academy of Sciences. Up to 1938 he headed the Department of Physical Chemistry.

In 1938, on June 17, he was arrested on charges of being an intelligence agent in a foreign country. In 1939, on September 6, he was sentenced to 10 years in a labor colony. On September 3, 1941, the case was reviewed and the sentence was commuted to 5 years in exile in Kazakhstan.

In 1955 he was justified.

He died on December 30, 1964, in Yerevan.





ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԳԱՄՅԱՆ

Ճարտարագետ, գունավոր հեռուստատեսության և լուսահեռագրության գյուրարար

Ծնվել է 1879 թ. փետրվարի 17-ին Բաքվում՝ նավթարդյունաբերողի ընտանիքում: 1899-1904 թթ. սովորել է Մյունխենի, Յյուրիխի և Բեռլինի համալսարաններում:

1905 թ. տվել է հաղորդվող պատկերը կորեերի բաղադրելու գաղափարը, ըստ որի՝ այդ կորեերի լայնույթները համապատասխանում են հաղորդվող պատկերի կետերի պայծառությանը:

1907 թ. Բեռլինում Արտոնագրերի կայսերական բյուրոյին ներկայացրել է «Էլեկտրականության միջոցով հաղորդվող պատկերի կամ մի շարք պատկերների սևեռման և կրկնակի վերարտադրման սարքը», որտեղ առաջին անգամ հիմնավորված էր սև ու սպիտակ պատկերի հաղորդման գաղափարը: 1907 թ. իրականացրել է հաղորդակարերով գունավոր պատկերի հաղորդման առաջին փորձն աշխարհում: 1913 թ. պատկերները հաղորդելու համար փոքր զգայնության և մեծ իներտության սելենի փոխարեն առաջարկել է «Միջանկյալ կլիշեի» համակարգը: Նույն թվականի վերջերին տեղափոխվել է Պետերբուրգ: 1921 թ. Մոսկվայում Համառուսաստանյան էլեկտրատեխնիկական VIII համագումարում զեկուցել է լուսանկարչական պատկերների հեռահաղորդակցության վերաբերյալ իր ստացած արդյունքների մասին:

1925 թ. փետրվարին ներկայացրել է գունավոր հեռուստատեսության (եռագույն) հաջորդական համակարգի առաջին նախագիծը՝ «Անլուսաթափանց արգելքի միջով տեսնելու սարքը»: Նույն թվականին ԵՊՀ-ում ստեղծված հատուկ լաբորատորիայում պատրաստել և գործարկել է «Հեռատես» եռագույն հեռուստացույցը: Նրա առաջարկած եռագույն հեռուստատեսության համակարգն առաջին անգամ կիրառվել է Լոնդոնում 1928 թ.: 1945-1951 թթ. ԱՄՆ-ի «Կոլումբիա» ռադիոընկերությունը Նյու Յորքում կատարել է փորձնական ցուցադրում, իսկ 1951-1953 թթ. նրա համակարգն ընդունվել է որպես կայուն համակարգ, որով ցուցադրվել են գունավոր պատկերներ:

Վախճանվել է 1932 թ. սեպտեմբերի 12-ին Լենինգրադում: 1970 թ. հունիսի 30-ին աճյունը տեղափոխվել է Երևանի քաղաքային պանթեոն:

HOVHANNES ADAMYAN

Engineer, inventor of color television and phonography

He was born on February 17, 1879, in Baku to a family of oil producers. In 1899 - 1904 he studied at the universities of Munich, Zurich and Berlin.

In 1905 gave the idea of composing curves in the transmitted image, according to which the widths of these curves correspond to the brightness of the points in the transmitted image. In 1907, he submitted to the Imperial Bureau of Licenses in Berlin an application for a device for reproducing images or a number of images transmitted by electricity, which for the first time justified the idea of transmitting a white image. In 1907 he made the first attempt to transmit color image with wires. In 1913 instead of a small sensitivity and a great inertia selenium, the “Intermediate Cliché” system was offered by him to convey the images. In the same year he moved to St. Petersburg. In 1921 at the VIII Congress of All-Russian Electrical Engineering in Moscow, he reported on the results of his communication on photographic images.

In February of 1925, he unveiled the first project of a color television (tricolor) sequential system, the “device to see through the “an apparatus for vision through an impenetrable barrier.” In the same year he created and operated the “Herates” tricolor TV in a special laboratory created at YSU. The tricolor television system he proposed was first used in London in 1928. In 1945 - 1951 US Columbia Radio Company conducted a pilot demonstration in New York, and from 1951 to 1953 his system has been accepted as a stable system that displays color images.

He died on September 12, 1932, in Leningrad. In 1970, on June 30, his remains were brought to Yerevan, to the Pantheon of famous Armenians.



ՀԱՎՈՐ ԿՈՋՈՅԱՆ

Գեղանկարիչ, մանկավարժ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ



Ծնվել է 1883 թ. դեկտեմբերի 1-ին Ախալցխայում: Սովորել է Վլադիկավկազի քաղաքային վարժարանում, որն ավարտելուց հետո՝ 1900-1901 թթ., Մոսկվայում աշակերտել է ոսկերիչ-փորագրիչ Պրոսովին:

1905-1907 թթ. սովորել է Մյունխենի գեղարվեստի ակադեմիայում և երկու տարի Փարիզում ապրելուց հետո վերադարձել Վլադիկավկազ ու գորակոչվել բանակ: 1912-1914 թթ. աշխատել է Մոսկվայում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կրկին գորակոչվել է:

1918 թ. հաստատվել է Հայաստանում և մույն թվականին Ն. Մառի հնագիտական արշավախմբի հետ մասնակցել Անիի պեղումներին: Հայոց երբեմնի մայրաքաղաքում անցկացրած օրերի տպավորությունները հետագայում արտացոլվել են նրա «Անիի ավերակները» (1919) նկարում: 1920 թ. հուլիսին ճարտարապետ Ալ. Թամանյանի նախագծով ստեղծել է Հայաստանի Հանրապետության զինանշանը:

1924-1930 թթ. ԵՊՀ տեխնիկական ֆակուլտետում դասավանդել է նկարչություն, 1930 թվականից շարունակել աշխատանքը նորաստեղծ ԵրՊԻ-ում:

1920-ականներին նրա ստեղծած նշանավոր գործերից է «Սասունցի Դավիթ» գրաֆիկական աշխատանքը: Սկսած 1925 թվականից՝ նկարազարդել է Ստ. Զորյանի «Հագարան բլբուլ» հեքիաթը, Հովհ. Թումանյանի «Գիքորը» և «Տերն ու ծառան», 1933 թ.՝ Ե. Չարենցի «Գիքը ճանապարհին» ու Ա. Բակունցի «Սև ցեղերի սերմնացանը» գրքերը, 1934 թ.՝ Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» ժողովածուն և այլն: Այդ շրջանում նրա գործերը ցուցադրվել են խորհրդային գրաֆիկայի միջազգային մի շարք ցուցահանդեսներում (Լոնդոն, Ֆիլադելֆիա, Դանցիգ):

1939 թ. մասնակցել է Մոսկվայում բացված հայկական արվեստի տասնօրյակի ցուցահանդեսին: 1941 թ. ստեղծել է Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» օպերայի դեկորացիաների էսքիզները, 1945 թ. նկարազարդել է Սայաթ Նովայի խաղերի ժողովածուն:

1935 թ. արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական նկարչի կոչման:

Վախճանվել է 1959 թ. ապրիլի 24-ին Երևանում:

HAKOB KOJOYAN

Painter, Pedagogue, People's Artist of the Armenian SSR

He was born on December 1, 1883, in Akhaltsikhe. He studied at the Vladikavkaz City School, after graduation, from 1900 to 1901, he studied at the jeweler and engraver Prusov in Moscow.

In 1905 - 1907 he studied at the Munich Academy of Fine Arts and after living in Paris for two years, returned to Vladikavkaz and joined the army. In 1912 - 1914 worked in Moscow. He again joined the army during the First World War.

In 1918 he settled in Armenia and in the same year participated in the excavations of Ani, organized by N. Mar. The impressions of the days spent in the former Armenian capital were later reflected in his painting "The Ruins of Ani" (1919). In July of 1920 he designed the coat of arms of the Republic of Armenia based on the design by architect Al. Tamanyan.

In 1924 - 1930 he taught painting at YSU Technical Faculty, and from 1930 continued his work at the newly established Yerevan Polytechnic Institute.

One of his most notable works in the 1920s was the graphic work "David of Sassoun". Since 1925 he has illustrated St. Zoryan's "Hazaran Blbul" fairy tale, Hovh. Tumanyan's "Gikor" and "The Lord and the Servant", in 1933 - E. Charents' "Book on the way" and A. Bakunts's "Seeds of Seedlings" books, in 1934 - M. Gorky's collection of "Poems and Legends", etc. During this period, his works have been exhibited in a number of international exhibitions of Soviet graphics (London, Philadelphia, Danzig).

In 1939 he participated in the exhibition "Ten Days of Armenian Art" in Moscow. In 1941 he created sketches of the decorations for the opera of H. Stepanyan "David of Sassoun". In 1945 he made illustrations for the collection of Sayat Nova "The Games".

In 1935 he was awarded the title of People's Artist of the Armenian SSR.

He died on April 24, 1959, in Yerevan.





ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆ

*ԽՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի
ակադեմիկոս, ՀԽՍՀ ժողովրդական ճարտարա-
պետ*

Ծնվել է 1878 թ. մարտի 4-ին Եկատերինոդար (այժմ՝ Կրասնոդար) քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է տեղի ռեալական ուսումնարանում: 1898 թ. ընդունվել է Սանկտ Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիային կից բարձրագույն գեղարվեստի ուսումնարանի ճարտարապետության դասարան, որն ավարտել է 1904 թ. ճարտարապետ-նկարչի որակավորմամբ: Ուսման տարիներին ակադեմիան նրան բազմիցս գործուղել է ուսումնասիրելու և չափագրելու Սանկտ Պետերբուրգի ու Մոսկվայի ռուսական դասական ճարտարապետության հուշարձանները:

1918 թ. վերջին եկել է Հայաստան և նշանակվել Հայաստանի Հանրապետության գլխավոր ճարտարապետի վարչության, Հնության և գեղարվեստից պահպանման հանձնաժողովի, ինչպես նաև պետական հիմնարկների շենքերի կառուցման շինարարական հանձնաժողովի նախագահ:

Իտալական Վերածննդի շրջանի ճարտարապետական ոճով նախագծել և կառուցել է մի քանի շենք: Հետագոտելով Հայաստանի պատմական հուշարձաններն ու ժողովրդական ճարտարապետության նմուշները՝ կարողացել է գտնել ժամանակակից պայմաններում դրանց օգտագործման մեթոդը:

Ճարտարապետական նախագծման դասեր է տվել ԵՊՀ տեխնիկական (հետագայում՝ շինարարական) ֆակուլտետում:

Նրա ճարտարապետական հանձարի մեծագույն դրսևորումը եղել ու մնում է իր ստեղծած՝ Երևանի գլխավոր հատակագիծը, որի աշխատանքներն սկսել էր դեռևս 1923 թ. առաջ և շարունակել մինչև կյանքի վերջը:

Նրա նախագծով է կառուցվել նաև Կառավարական տունը, որի համար հետմահու արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի: Իսկ Երևանի օպերայի և բալետի թատրոնի նախագիծը 1937 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում արժանացել է Մեծ ոսկե մեդալի:

1926 թ. արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետի կոչման:

Վախճանվել է 1936 թ. փետրվարի 20-ին Երևանում:

ALEXANDER TAMANYAN

Academician of the USSR Academy of Architecture, People's Architect of the Armenian SSR

He was born on March 4, 1878, in Yekaterinodar (now Krasnodar). He received his secondary education in the local school. In 1898 he entered the class of architecture at the Higher Art College attached to the Academy of Fine Arts of St. Petersburg. designed by the architect. He graduated in 1904 receiving the qualification of architect-painter. During his studies, the academy repeatedly sent him to study and make measures of the monuments of Russian classical architecture in St. Petersburg and Moscow.

In 1918 he moved to Yerevan, heading the new construction effort in the republic. He was the chief engineer of the local Council of People's Commissars and was a member of the CEC of the Armenian SSR (1925–1936).

He designed and built several buildings in the architectural style of the Italian Renaissance period. Examining the historical monuments of Armenia and the samples of folk architecture, he was able to find a way to use them in modern conditions.

He taught architectural design at YSU Technical (later Construction) Faculty.

The greatest manifestation of his architectural genius was and remains the creation of the general plan of Yerevan. The work in this area began in 1923 and continued until the end of his life.

According to his plan, the Government House was also built, for which he was posthumously awarded the USSR State Prize. And the project of the Yerevan Opera and Ballet Theater was awarded the Grand Gold Medal at the World's Fair in Paris in 1937.

In 1926 he was awarded the title of People's Architect of the Armenian SSR.

He died on February 20, 1936, in Yerevan.





ՆԻԿՈՂԱՅՈՍ ԲՈՒՆԻԱԾՅԱՆ

Ճարտարապետ, գիտնական, մանկավարժ

Ծնվել է 1878 թ. օգոստոսի 24-ին Թիֆլիսում: Միջնակարգ կրթությունն ստացել է Բաքվի ռեալական ուսումնարանում: 1907 թ. ավարտել է Օդեսայի գեղարվեստական ուսումնարանը, 1914 թ.՝ Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետական ֆակուլտետը՝ ճարտարապետ-նկարչի որակավորմամբ: 1920 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1914 թվականից պարբերաբար զբաղվել է Անիի և Շիրակի հուշարձանների, իսկ ավելի ուշ՝ 1930 թ.՝ նաև Գառնիի ամրոցի և հատկապես հեթանոսական տաճարի չափագրմամբ ու վերականգնման նախագծով: Նրա չափագրություններն իրենց ճշգրտությամբ, կատարման վարպետությամբ բարձրարվեստ և ուսանելի գործեր են:

Ալ. Թամանյանի հրավերով 1924 թ. տեղափոխվել է Երևան և աշխատել որպես ճարտարագետ-շինարար, նախագծող ճարտարապետ, գիտնական, մանկավարժ, 1924-1938 թթ.՝ նաև Երևանի գլխավոր ճարտարապետ:

1924 թ. հրավիրվել է ԵՊՀ՝ տեխնիկական (շինարարական) ֆակուլտետում վարելու նախագծման ու ճարտարապետության պատմության դասընթացներ: Եղել է նույն ֆակուլտետի ղեկավար:

Նրա ստեղծագործական տաղանդը փայլել է ճարտարապետական արվեստի բոլոր բնագավառներում՝ նախագծման, կառուցման, չափագրությունների: Եղել է Հայաստանում ճարտարապետական մասնագիտական կադրերի պատրաստման գործի հիմնադիրներից մեկը:

Հեղինակ է «Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում» (ռուս., Եր., 1933) մենագրության և համահեղինակ՝ «Архитектура Армении» (Մ., 1950) աշխատության:

Կյանքի վերջին տարիներին մասնակցել է «Հայկական ճարտարապետության պատմություն» բազմահատոր աշխատության ստեղծմանը, որը, սակայն, մնացել է անավարտ:

Վախճանվել է 1943 թ. դեկտեմբերի 13-ին Մոսկվայում:

NIKOGHAYOS BUNIATYAN

Architect, scientist, pedagogue

He was born on August 24, 1878, in Tbilisi. He received his secondary education at the secondary school in Baku. In 1907 he graduated from the Odessa Art College. In 1914 he received a degree in Architecture at the St. Petersburg Academy of Fine Arts. In 1920 he was awarded the title of professor.

From 1914 he regularly worked on the monuments of Ani and Shirak, and later in 1930 on the measurement and restoration of the Garni Fortress, especially the pagan temple. His measurements are highly artistic and instructive in their accuracy and mastery.

At the invitation of Al. Tamanyan in 1924 he moved to Yerevan and worked as an engineer, design architect, scientist, pedagogue, and from 1924 to 1938 he was the Chief Architect of Yerevan.

In 1924 he was invited to YSU to conduct the courses on the history of design and architecture at the Faculty of Engineering (Construction). He was the dean of the same faculty.


His creative talent has shone in all areas of architectural art: design, construction, sizing. He was one of the founders of the training of architectural professional staff in Armenia.

He is the author of the monograph “Pagan Temple at Garni Castle near Trdat Palace” (Russian, Yerevan, 1933) and co-author of the work “Architecture of Armenia” (M., 1950).

In the last years of his life he took part in the creation of a multi-volume work “History of Armenian Engineering”, which, however, remained unfinished.

He died on December 13, 1943, in Moscow.





ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԶԱԶՆՈՒՆԻ

Ճարտարապետ, պրոֆեսոր, Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ

Ծնվել է 1868 թ. հունվարի 1-ին Ջավախքի Գանձա գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսի ռեալական դպրոցում: 1893 թ. ավարտել է Սանկտ Պետերբուրգի քաղաքացիական ճարտարագետների ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը: 1895-1907 թթ. աշխատել է Բաքվում, Բաթումում և Թիֆլիսում, եռանդուն մասնակցություն ունեցել ՀՅԴ կուսակցության գործունեությանը, որի հանձնարարությամբ մեկնել է Կ. Պոլիս, որտեղ ձեռքակալվել է: Մինչև 1914 թ. որպես վտարանդի ապրել է Փարիզում, Բելգիայում, Կ. Պոլսում և Վանում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ապրել է Ռուսաստանում, եղել Կովկասի քաղաքների միության Հայկական խորհրդի անդամ, Հավլաբարի շրջանից ընտրվել Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասու, աշխատել Բաքվի նավթարդյունաբերողներին հազվագյուտ ապրանքներ բաշխողի պաշտոնում:

1917-1918 թթ. ընտրվել է Հայոց ազգային խորհրդի և Անդրկովկասյան սեյմի անդամ: 1918 թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը նրան ընտրել է Հայաստանի Հանրապետության վարչապետ: Այդ պաշտոնը վարել է մինչև 1919 թ. սկիզբը:

Նրա նախագծերով Երևանում և Սարդարապատում կառուցվել են գործարաններ, բնակելի տներ, հյուրանոցներ և այլ շինություններ:

1926-1930 թթ. ԵՊՀ տեխնիկական ֆակուլտետում դասավանդել է «Շինարարական արվեստ» և «Ճարտարապետական նախագծում» առարկաները: 1930 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Հ. Աճառյանի, Հ. Ջալալյանի, Դ. Հակոբջանյանի հետ համահեղինակ է շինարարական կառույցների ռուս-հայերեն տեխնիկական բառարանի:

1937 թ. հուլիսի 28-ին ձերբակալվել է դատապարտվել է մահապատժի, բայց 1938 թ. հունվարի 15-ին բանտի հիվանդանոցում մահացել է պալարախտից:

1992 թ. արդարացվել է:

Նրա անունով է կոչվում Երևանի փողոցներից մեկը:

HOVHANNES KAJAZNUNI

Architect, Professor, Prime Minister of the First Republic of Armenia

He was born on January 1, 1868, in Gandza village of Javakhk. He received his secondary education at the school in Tbilisi. In 1893 he graduated from the Faculty of Architecture of the St. Petersburg Institute of Civil Engineers. In 1895 - 1907 worked in Baku, Batumi, Tbilisi, took an active part in the activities of the ARF Dashnaktsutyun Party. He had received an assignment from the party and moved to Constantinople, where he was arrested. Until 1914. lived in exile in Paris, Belgium, Constantinople, Van. During the First World War he lived in Russia, was a member of the Armenian Council of the Union of Caucasian Cities, was elected from the Havlabar region to the Tbilisi City Duma, worked as a distributor of rare goods to Baku oil producers.

In 1917 - 1918 was elected Member of the Armenian National Council and Transcaucasian Sejm. In 1918, on May 28, the Armenian National Council elected him Prime Minister of the Republic of Armenia. He held that position until the beginning of 1919.

According to his projects, factories, residential houses, hotels and other buildings were built in Yerevan and Sardarapat.

In 1926 - 1930 he delivered lectures on “Building Art” and “Architectural Design” at YSU Technical Faculty. In 1930 he was awarded the title of professor. He co-authored a Russian-Armenian technical dictionary of construction structures with D. Hakobjanyan, Hr. Acharyan, H. Zargaryan.

In 1937, on July 28, he was arrested and sentenced to death. He died of tuberculosis on January 15, 1938, at a prison hospital.

In 1992 was justified.

One of the streets of Yerevan is named after him.



ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

*Ճարտարապետ, հնագետ, ՀԽՍՀ գիտության
վաստակավոր գործիչ*



Ծնվել է 1864 թ. սեպտեմբերի 18-ին Արևմտյան Հայաստանի Շապին-Գարահիսար քաղաքում, որտեղ ստացել է նախնական կրթություն: Վաղ հասակում զրկվելով ծնողներից՝ 1884 թ. մեկնել է Կ. Պոլիս և զբաղվել քարգործությամբ ու հյուսնությամբ: Աշխատանքի անցնելով հայտնի ճարտարապետ Սարգիս Պալյանի մոտ՝ նրա աջակցությամբ 1888-1893 թթ. սովորել է Կ. Պոլսի Կայսերական գեղարվեստից վարժարանի ճարտարապետական բաժանմունքում, որն ավարտելուց հետո որպես ճարտարապետ աշխատել է Կ. Պոլսում: 1895 թ. համիդյան ջարդերից մազապուրծ՝ ապաստանել է Բուլղարիայում և 1900 թ. տեղափոխվել Ռումինիա: 1900-1902 թթ. զբաղվելով ճարտարապետության պատմության ու տեսության հարցերով՝ շրջագայել է մի շարք երկրներում և հաստատվել Փարիզում: Սորբոնի համալսարանում լսել է դասախոսություններ և բանասեր Կ. Բասմաջյանի հետ մշակել Անին հետազոտելու ծրագիր:

1903 թ. եկել է Անի և նյութական ծանրագույն պայմաններում զբաղվել հայ ճարտարապետության ուսումնասիրությամբ: Տարիներ շարունակ զբաղվել է Զվարթնոցի ավերակների ուսումնասիրությամբ ու վերակազմությամբ:

Անիին և Զվարթնոցին վերաբերող ուսումնասիրությունների զգալի մասը պարբերաբար հրատարակել է 1905-1913 թթ.: Դրանցում բացահայտել է հայ միջնադարյան ճարտարապետության (4-14-րդ դդ.) զարգացման հիմնական փուլերը, անժխտելի փաստերով ապացուցել հայկական ճարտարապետության ինքնուրույնությունը և նրա ձևերի ու լուծումների ազդեցությունը մի շարք երկրների ճարտարապետական դպրոցների վրա:

1921 թ. աշխատանքի է հրավիրվել ԵՊՀ տեխնիկական (հետագայում՝ շինարարական) ֆակուլտետ և դասավանդել ճարտարապետության պատմություն:

1933 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Վախճանվել է 1934 թ. մարտի 1-ին Երևանում:

TOROS TORAMANYAN

Architect, archaeologist, Honored Scientist of the Armenian SSR

He was born on September 18, 1864, in the city of Shapingarahisar in Western Armenia, where he received his primary education. Deprived of his parents in early life, in 1884. left for Constantinople and engaged in quarrying and carpentry. Working with the famous engineer-chief Sargis Palyan, with his support in 1888-1893 studied at the architectural department of the College of Imperial Art of Constantinople, after graduating, worked as an architect in Constantinople. In 1895 he escaped from the Hamidian massacres and took refuge in Bulgaria. In 1900 moved to Romania. In 1900 - 1902 he traveled to a number of countries and settled in Paris, dealing with the history and theory of architecture. He attended the lectures and developed a plan on the explorations in Ani together with philologist K. Basmajyan.

In 1903 he came to Ani to study Armenian architecture in the most difficult material conditions. He has been studying and reorganizing the ruins of Zvartnots for years.

Most of the studies on Ani and Zvartnots were published regularly from 1905 to 1913. In them, he revealed the main stages of the development of the Armenian medieval architecture (4th -14th centuries), proved the independence of the Armenian architecture with undeniable facts, and the influence of its forms and solutions on the architectural schools of a number of countries.

In 1921 he was invited to YSU Technical (later construction) faculty and delivered lectures on architecture.

In 1933 he was awarded the title of Honored Scientist of the Armenian SSR.

He died on March 1, 1934, in Yerevan.



ՀԱՎՈՐ ԶՈՐՅԱՆ

Փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1894 թ. օգոստոսի 25-ին Տրապիզոնի մահանգի Օրդու գյուղաքաղաքում: 1900-1908 թթ. սովորել է ծննդավայրում, 1908-1912 թթ.՝ Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում, 1919-1920 թթ.՝ Լոզանի համալսարանի փիլիսոփայության, 1920-1925 թթ.՝ Բեռլինի համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետում, մասնագիտացել սոցիոլոգիայի, քաղաքատնտեսության, փիլիսոփայության ու պատմագիտության ոլորտներում:

Ս. Թեղերյանի հետ գործակցել է Թալեաթի սպանության (1921 թ. մարտի 15) հարցում, մասնակցել Գերմանիայի ուսանողական շարժմանը, ՀՕԿ-ի և Յոհաննես Լեփսիուսի հիմնադրած «Գերմանա-հայկական ընկերություն» հասարակական կազմակերպության աշխատանքներին:

1925 թ. Բեռլինի համալսարանում ատենախոսության պաշտպանությամբ ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1926 թ. ընտրվել է ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի թղթակից անդամ: 1931 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1925 թ. աշնանը հրավիրվել է ԵՊՀ և մինչև 1937 թ. դասավանդել հայ ժողովրդի պատմություն և քաղաքատնտեսություն, եղել է հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչը, 1931-1937 թթ.՝ նաև Պատմության ֆակուլտետի ղեկան:

Ուսումնասիրությունները վերաբերում են հին և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական պատմությանը:

1937 թ. օգոստոսի 10-ին ձերբակալվել է՝ մեղադրվելով հակախորհրդային ազգայնական ոչ լեգալ կազմակերպության անդամ լինելու մեջ: 1939 թ. սեպտեմբերի 6-ին կայացվել է գնդակահարման վճիռ, որը 1940 թ. մարտի 17-ին բեկանվել է և ուղարկվել վերանայման: 1941 թ. սեպտեմբերի 3-ին գործի վերանայումից հետո մահապատիժը փոխարինվել է 8 տարվա ազատազրկմամբ ուղղիչ աշխատանքային գաղութում:

Մահացել է 1942 թ.:

1955 թ. արդարացվել է. գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:

HAKOB ZORYAN

Doctor of Philosophy, Professor

He was born on August 25, 1894, in the village of Ordu in the province of Trabzon. In 1900 - 1908 he studied in his hometown, in 1908-1912 - at the Perperian College in Constantinople, from 1919 to 1920 at the Faculty of Philosophy of the University of Lausanne, from 1920 to 1925 at the Faculty of Political Economy of the University of Berlin, he specialized in Sociology, Political Science, Philosophy and Historiography.

Together with S. Tehleryan, he was involved in the murder of Talaat (March 15, 1921), participated in the German student movement, and worked for the German-Armenian Society of Johannes Lepsius.

In 1925 he defended a dissertation at the University of Berlin and was awarded the title of doctor of philosophy. In 1926 was elected Corresponding Member of the Institute of Science and Art of the Armenian SSR, in 1931 He was awarded the title of professor.

In 1925 he was invited to YSU and delivered lectures on the Armenian People's History and Political Economy up to 1937. Also worked as a head of chair of the History of Armenia and from 1931 to 1937 he was the Dean of the Faculty of History.

His researches have a large focus on the socio-economic history of ancient and medieval Armenia.

In 1937, on August 10, he was arrested on charges of being a member of an illegal anti-Soviet nationalist organization. On September 6, 1939, he was sentenced to death, but on March 17, 1940 the death sentence was annulled and sent for review. After the case was reviewed on September 3, 1941, the death sentence was commuted to 8 years in a labor correctional colony. He died in 1942.

In 1955 he was justified. The case was dismissed due to lack of guilt.





ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

Գրող, հրապարակախոս, մանկավարժ

Ծնվել է 1894 թ. հուլիսի 18-ին Արևմտյան Հայաստանի Խարբերդ գավառի Մեզրե քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Խարբերդի ազգային կենտրոնական վարժարանում: Աշակերտական տարիներին կատարել է գրական առաջին փորձերը: 1907 թ. Զմյուռնիայի «Արևելյան մամուլում» տպագրվել է նրա առաջին բանաստեղծությունը, Պոլսում՝ «Ավերակ» (1908) և «Սրինգ» (1909) գրքույկները:

1908 թ. թուրքական հեղափոխությունից հետո անցել է Եվրոպա, ապա՝ Ամերիկա: Ընդունվել է Վիսքոնսինի համալսարան, որտեղ ունկնդրել է գրականության, փիլիսոփայության և պատմության դասընթացներ:

1915 թ. եկել է Անդրկովկաս և կամավոր մեկնել ռազմաճակատ, կռվել Վանում և Էրզրումում: Եղել է զորավար Անդրանիկի քարտուղարը: Պատերազմից հետո մեկնել է Ամերիկա՝ հարազատների մոտ: 1922 թ. վերադարձել է հայրենիք և զբաղվել մշակութային գործունեությամբ: Խմբագրել է «Շեշտ» երգիծական պարբերականը (1923):

1924-1932 թթ. աշխատել է ԵՊՀ-ում. մինչև 1928 թ. եղել է համալսարանի գիտքարտուղարը: Դասավանդել է անգլերեն և արտասահմանյան գրականություն:

Նրա կոչումը, սակայն, գրականությունն էր: Գրել է տարբեր ժանրերի ստեղծագործություններ, որոնցից առավել հայտնի են «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպը, «Հովնաթան որդի Երեմիայի» վիպակը և այլն: Նրա ստեղծագործությունների հիման վրա են նկարահանվել «Սպիտակ անուրջներ» և «Կտոր մը երկինք» գեղարվեստական կինոնկարները:

1936 թ. հուլիսի 20-ին ձերբակալվել է հայաստանյան հակախորհրդային, աջ տրոցկիստական, ահաբեկչական ազգայնական կազմակերպության մասնակից լինելու մեղադրանքով: 1938 թ. հուլիսի 18-ին կայացվել է գնդակահարության վճիռ, որն ի կատար է ածվել նույն օրը:

Երևանի Աբովյան փողոցի թիվ 32 շենքի դիմաց կանգնեցված հուշասյուներից մեկի վրա փորագրված է Վահան Թոթովենցի անունը:

VAHAN TOTOVENTS

Writer, publicist, pedagogue

He was born on July 18, 1894, in Mezre, Kharberd Province, Western Armenia. He received his primary education at the National Central School of Kharberd. During his student years he made his first literary attempts. His first poem was published in the “Eastern Press” of Smyrna, and the books “Ruin” (1908) and “Svirel” (1909) were published in Constantinople.

In 1908 after the Turkish Revolution, he moved to Europe and then to America. He entered the University of Wisconsin, where he studied literature, philosophy and history.

In 1915 He came to Transcaucasia and volunteered to go to the front, to fight in Van and Erzurum. He was the secretary of General Andranik. After the war, he left for America with his relatives. In 1922 he returned to his homeland and engaged in cultural activities. He edited the satirical periodical “Emphasis” (1923).


In 1924 - 1932 worked at YSU. He was the Scientific Secretary of the university up to 1928. He taught English and foreign literature.

His vocation, however, was literature. He has written works in various genres, most notably the autobiographical novel “Life on the Old Roman Road”, the novel “The Son of Jonathan Jeremiah”. Based on his works, the feature films “White Dreams” and “A Piece of Heaven” were shot.

He was arrested on July 20, 1936, on charges of being a member of an Armenian anti-Soviet, right-wing Trotskyist, terrorist nationalist organization. On July 18, 1938, he was sentenced to death and the sentence was carried out on the same day.

The name of Vahan Totovents is engraved on one of the monuments erected in front of the 32nd building on Abovyan Street in Yerevan.





ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

Գրող, հրապարակախոս, մանկավարժ

Ծնվել է 1885 թ. փետրվարի 2-ին Շամախիում: 1890 թ. տեղափոխվել է Բաքու, սովորել ռուսական գիմնազիայում: 1895 թ. մեկնել է Փարիզ, սովորել և ավարտել Սեն-Ժերմեն քոլեջը: 1901 թ. վերադարձել է Կովկաս, ապրել Բաքվում և Թիֆլիսում: 1904 թ. ուսումը շարունակել է Բրյուսելի համալսարանում և ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1910-1913 թթ. Մխիթարյան միաբանությունում սովորել է մայրենի լեզու:

1914 թ. Կ. Պոլսում Գեղամ Բարսեղյանի և Հակոբ Օշականի հետ հիմնել է «Մեհյան» հանդեսը:

1914 թ. հոկտեմբերին ընտանիքով տեղափոխվել է Իտալիա: 1920 թ. վերադարձել է Կ. Պոլիս և 1922 թ. Վ. Թեքեյանի, Հ. Օշականի ու Շ. Պերպերյանի հետ հիմնել «Բարձրավանք» հանդեսը:

1922 թ. տեղափոխվել է Երևան և ԵՊՀ-ում դասավանդել եվրոպական գրականությունների բաղդատական պատմություն: 1924-1962 թթ. եղել է մի շարք երկրներում (Եվրոպա, ԱՄՆ, Մերձավոր Արևելք), տարբեր համալսարաններում դասավանդել հայագիտություն, ինչպես նաև զբաղվել է հանդեսների հրատարակությամբ:

1962 թ. ընտանիքով վերադարձել է Հայաստան և աշխատանքի անցել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում որպես ավագ գիտաշխատող:

Առաջին բանաստեղծությունները գրել է ֆրանսերեն և ռուսերեն: 1913 թ. Հռոմում լույս է տեսել նրա անդրանիկ գիրքը («Երեք երգեր...»), 1922 թ. Կ. Պոլսում՝ հայերեն առաջին բանաստեղծական ժողովածուն («Օրերի պսակը»): Արժեքավոր ստեղծագործություններից են «Բանկոտալը և մամուրի ոսկորները», «Նավը լերան վրա» (Բոստոն, 1943, Եր., 1963, Վենետիկ, 1998) վեպերը, «Անցորդը և իր ճամբան» հուշագրությունը, «Երկրներ և աստվածներ» էսսեների շարքը, «Տատրագոմի հարսը» (Եր., 1965) պոեմը և այլն: Ունի գեղագիտական և գրականագիտական բնույթի բազմաթիվ հոդվածներ:

Վախճանվել է 1969 թ. դեկտեմբերի 11-ին Երևանում:

KOSTAN ZARYAN

Writer, publicist, pedagogue

He was born on February 2, 1885, in Shamakh. In 1890 he moved to Baku and studied at the Russian Gymnasium. In 1895 he left for Paris and graduated from Saint-Germain College. He returned to the Caucasus in 1901 and lived in Baku and Tbilisi. In 1904 he continued his studies at the University of Brussels and received a degree of doctor of sciences. In 1910 - 1913 he studied his mother tongue at the Mekhitarist Congregation.

In 1914 he founded “Mehyan” magazine together with Gegham Barseghyan and Hakob Oshakan in Constantinople.

In 1914 he and his family moved to Italy. In 1920 returned to Constantinople and in 1922 he founded “Bardzravank” magazine together with V. Tekeyan, H. Oshakan and Sh. Perperyan.

In 1922 he moved to Yerevan and delivered lectures at YSU on the compound history of European literature. In 1924 - 1962 he has taught in a number of countries (Europe, USA, Middle East), taught Armenian Studies at the universities, as well as published magazines.

In 1962 He returned to Armenia with his family and started to work as a senior researcher at the Charents Museum of Literature and Art.

He wrote his first poems in French and Russian. In 1913 his first book (Three Songs ...) was published in Rome, in 1922 - the first Armenian poetry collection in Constantinople. Among his works are the novels “Bankoop and the Bones of Mammuth”, “The Ship on the Mountain” (Boston, 1943, Yerevan, 1963, Venice, 1998), the memoir “The Passerby and His Way”, the series of poems “Countries and Gods”, “The Bride of Tatrakom” (Yerevan, 1965). He has many aesthetic and literary articles.

He died on December 11, 1969, in Yerevan.





ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ

Գրող, հրապարակախոս, գրականագետ

Ծնվել է 1878 թ. փետրվարի 5-ին Կ. Պոլսի Սկյուտար բաղամասում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Ս. Խաչ վարժարանում: 1895 թ. վերջերին տեղափոխվել է Փարիզ և որպես սրբագրիչ-խմբագիր մասնակցել Գվիդոն Լուսինյանի ֆրանսերեն-հայերեն բառարանի կազմման աշխատանքներին, միաժամանակ Սորբոնի համալսարանում լսել գրականության դասընթացներ: Մտերմացել է հայ ականավոր մտավորականներ Արշակ Չոպանյանի, Երվանդ Օտյանի, Էդգար Շահինի, Սիամանթոյի և ուրիշների հետ:

1909 թ. Կիլիկիայի հայերի ջարդից հետո Պոլսի հայոց պատրիարքարանի հանձնախմբի կազմում մեկնել է ոճրագործության վայրեր, ականատես եղել ազգակիցների ողբերգությանը: Հայոց մեծ եղեռնի տարիներին Միջին Արևելքի երկրներում զբաղվել է հայ տարագիրների և որբերի հավաքման, նրանց խնամքի ու տեղափոխման գործերով:

Նրա լավագույն ստեղծագործություններից են «Նահանջող ուժերը» (Եր., 1926), «Պրոմեթեոս ազատագրված» (Մարսել, 1927), «Սիլիհտարի պարտեզները» (Եր., 1935), «Մուրադի ճամփորությունը» (Եր., 1990) և այլ գործեր:

1933 թ. խորհրդային կառավարության հրավերով եկել է Երևան և աշխատանքի անցել ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնում՝ վարելով եվրոպական և մասնավորապես ֆրանսիական գրականության դասընթացը:

1930-ական թթ. հայաստանյան գրական կյանքի եռանդուն ու ազնիվ մասնակիցներից էր, համարձակորեն պաշտպանում էր Ե. Չարենցին, Ա. Բակունցին և գրականության մյուս առաջատարներին:

1937 թ. հունիսի 27-ին ձերբակալվել է ֆրանսիական հետախուզության լրտես լինելու մեղադրանքով: Բաքվի բանտում կրելով անլուր տառապանքներ՝ մահացել է 1943 թ.:

Ամերիկյան «Refinery29» կայքի վարկանիշի համաձայն՝ Զապել Եսայանը ճանաչվել է մարդկության պատմությանը հայտնի չորս ամենախիզախ կանանցից մեկը: 2018 թ. մարտի 8-ին Փարիզում բացվել է նրա անունը կրող ճեմնուղի:

Երևանի Աբովյան փողոցի թիվ 32 շենքի դիմաց կանգնեցված հուշասյուներից մեկի վրա փորագրված է Զապել Եսայանի անունը:

ZABEL YESAYAN

Writer, publicist, literary critic

She was born on February 5, 1878, in the Scutari district of Constantinople. She received primary education at the local St. Cross School. In the end of 1895 moved to Paris to work as a proofreader at the French-Armenian Dictionary of Guidon Lusinyan, while also taking literature courses at the Sorbonne University. She became close with prominent Armenian intellectuals Arshak Chopanyan, Yervand Otyan, Edgar Shahin, Siamanto and others.

In 1909 after the massacre of the Armenians of Cilicia, she visited the crime site together with the commission of the Armenian Patriarchate of Constantinople, witnessed the tragedy of the relatives, and during the years of the Armenian Genocide in the Middle East was engaged in transporting and saving Armenian orphans.

Her best works include *Retreating Forces* (Yerevan, 1926), *Prometheus Liberated* (Marseille, 1927), *The Gardens of Silihtar* (Yerevan, 1935), *Murad's Journey* (Yerevan, 1990) and others.

In 1933 at the invitation of the Soviet government, she came to Yerevan and started working at YSU Chair of Foreign Literature, taking a course in European literature, particularly French literature.

She was one of the active and honest participants of the literary life of Armenia in the 1930s, bravely defended Ye. Charents, A. Bakunts and other literary leaders.

In 1937 she was arrested on June 27 on charges of spying for French intelligence. She died in Baku prison in 1943.

According to the ranking of the American website *Refinery29*, Zabel Yesayan was recognized as one of the four bravest women known to human history. In 2018, on March 8, an alley named after her was opened in Paris.

The name of Zabel Yesayan is engraved on one of the monuments erected in front of the 32nd building on Abovyan Street in Yerevan.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ.	
պատմական համառոտ ակնարկ	4
ՅՈՒՐԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ	26
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ	28
ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ (ԼԵՈ).....	30
ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ	32
ՍԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ	34
ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ.....	36
ՀԱԿՈԲ ՍԱՆԱՆԴՅԱՆ.....	38
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ	40
ԱՐՄԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ.....	42
ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ	44
ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՅՅԱՆ	46
ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	48
ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ.....	50
ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀԻՆՅԱՆ	52
ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ	54
ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆ	56
ԳՈՒՐԳԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ.....	58
ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՅԱՆ.....	60
ԳՐԻԳՈՐ ՉՈՒԲԱՐՅԱՆ.....	62
ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐՋԱԴՅԱՆ	64
ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆ	66
ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱՋՅԱՆ	68
ԱՐՄԵՆ ԹԱԽՏԱՋՅԱՆ	70
ՆՈՐԱՅՐ ՄԻՍԱԿՅԱՆ.....	72
ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ	74
ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆՅ	76
ՄԿՐՏԻՉ ՄԿՐՅԱՆ	78
ՄԽԻԹԱՐ ՋՐԲԱՇՅԱՆ	80
ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	82
ԷԴՈՒԱՐԴ ԱԹԱՅԱՆ.....	84
ԱՐՏԵՄ ԱԼԻԽԱՆՅԱՆ	86
ԱԲՐԱՀԱՄ ԱԼԻԽԱՆՈՎ	88
ՍԵՐԳԵՅ ՍԵՐԳԵԼՅԱՆ.....	90
ԲԱՐԴՈՒԴԻՄԵՈՍ ՖԱՆԱՐՋՅԱՆ	92
ԳՐԻԳՈՐ ՄԵԴՆԻԿՅԱՆ.....	94

CONTENTS

Yerevan State University:	
the Brief Historical Review	5
YURI GHAMBARYAN.....	27
VAHAN ARTSRUNI	29
ARAKEL BABAKHANYAN (LEO).....	31
GAREGIN HOVSEPYAN	33
MANUK ABEGHYAN	35
NIKOL AGHBALYAN.....	37
HAKOB MANANDYAN.....	39
HRACHYA ACHARYAN	41
ARSEN TERTERYAN.....	43
ASHKHARBEEK KALANTAR	45
GRIGOR GHAPANTSYAN	47
ASHOT HOVHANNISYAN.....	49
GURGEN SEVAK.....	51
ARTASHES SHAHINYAN	53
VICTOR HAMBARDZUMYAN.....	55
EDUARD AGHAYAN.....	57
GURGEN SAHAKYAN	59
GEVORG JAHUKYAN.....	61
GRIGOR CHUBARYAN.....	63
GRIGOR GURZADYAN.....	65
EDVARD JRBASHYAN	67
HRANT TAMRAZYAN	69
ARMEN TAKHTAJYAN	71
NORAYR SISAKYAN	73
HOVSEP ORBELI.....	75
STEPAN MALKHASYANTS	77
MKRTICH MKRYAN	79
MKHITAR JRBASHYAN	81
ASHOT SUKIASYAN	83
EDUARD ATAYAN.....	85
ARTEM ALIKHANYAN.....	87
ABRAHAM ALIKHANOV	89
SERGEY MERGELYAN.....	91
BARDUGHIMEOS FANARJYAN.....	93
GRIGOR MEDNIKYAN.....	95



ԳՐԻԳՈՐ ՍՈՒՇԵՂՅԱՆ	96
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԺՈՒՐ	98
ԳՐԻԳՈՐ ԱՐԵՇՅԱՆ	100
ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՔԵՉԵԿ	102
ԼԵՎՈՆ ՌՈՏԻՆՅԱՆ	104
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԴԱՄՅԱՆ	106
ՀԱԿՈԲ ԿՈՋՈՅԱՆ.....	108
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՍԱՆՅԱՆ	110
ՆԻԿՈԼԱՅՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ.....	112
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱՋՆՈՒՆԻ.....	114
ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ	116
ՀԱԿՈԲ ՋՈՐՅԱՆ.....	118
ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅ.....	120
ԿՈՍՏԱՆ ՋԱՐՅԱՆ	122
ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ.....	124

GRIGOR MUSHEGHYAN.....97

HARUTYUN ANZHUR99

GRIGOR ARESHYAN101

HAMBARDZUM KECHEK..... 103

LEVON ROTINYAN105

HOVHANNES ADAMYAN.....107

HAKOB KOJOYAN109

ALEXANDER TAMANYAN.....111

NIKOGHAYOS BUNIATYAN113

HOVHANNES KAJAZNUNI.....115

TOROS TORAMANYAN.....117

HAKOB ZORYAN.....119

VAHAN TOTOVENTS.....121

KOSTAN ZARYAN.....123

ZABEL YESAYAN.....125



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԱԿԱՆԱԿՈՐ ԴԵՄՔԵՐԸ

YEREVAN STATE UNIVERSITY NOTABLE SCHOLARS AND PROMINENT FIGURES

Համակարգչային ձևավորումը՝ Կարինե Չալաբյանի
Հրատ. սրբագրումը՝ Միրանուշ Կեսոյանի
Թարգմանությունը՝ Գևորգ Հարությունյանի
Նկարները՝ ԵՊՀ և ՀՕՖ ֆոտո արխիվների

Գրքում օգտագործվել են նյութեր ԵՊՀ հրատարակած «Կենսագրական
հանրագիտարան» և «Yerevan State University: A Historical Sketch» գրքերից:

Շապիկին օգտագործվել է Լևոն Լաճիկյանի հեղինակած գծանկարը, որը
գետնելված է մաս ԵՊՀ 100-ամյակին նվիրված դրոշմանիշի վրա:

Art Design and Layout by Karine Chalabyan
Proofreading of Publishing by Miranush Kesoyan
Translation by Gevorg Harutyunyan
Photos by YSU and FAR photo archive

Materials from the publications “Biographical Encyclopedia” and “Yerevan State
University: A Historical Sketch” have been used in the book.

The drawing, authored by Levon Lachikyan, was used on the cover. The same
drawing was also used on the stamp, dedicated to the 100th Anniversary of YSU
foundation.

Ստորագրված է տպագրության՝ 18.05.2020:
Չափսը՝ 70x100 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 8.125:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Signed for printing՝ 18.05.2020:
Format 70x100 ¹/₁₆: Singnature 8.125.
Circulation 300.

YSU Publishing House
1 Alex Manoogian, 0025, Yerevan, RA
www.publishing.am